



**«ՆԱՅԱՍՏԱՆԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱՔԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՅԻԱ
ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



**«ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**«ՅԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԶԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՅՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՅԻՆ**

**ԻՐԱՎԱՔԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱՔԱՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Երևան 2006



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ-
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՋԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՂԱԶԱՅԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԻՆ»**

**ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԳ-
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԳ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Երևան-2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ..... 4

ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ներածություն	7
Նկարագրական մաս	10
Եզրափակիչ մաս	19
Օգտագործված գրականության ցանկ	20

ԵՍԹԵՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ներածություն	21
Նկարագրական մաս	
Սահմանադրությունը՝ որպես քաղաքացիական հասարակության	
հիմնական օրենք	22
Մարդու իրավունքներն ու ազատությունները, դրանց	
պաշտպանության սահմանադրական երաշխիքները	26
Իշխանությունների տարանջատման (բաժանման, գապումների և	
հակակշիռների) սահմանադրական մեխանիզմները	28
Սահմանադրական արդարադատությունը՝ որպես	
Սահմանադրության գերակայության ապահովման երաշխիք	30
Եզրափակիչ մաս	32
Օգտագործված գրականության ցանկ	33

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՐՅԱՆ

Ներածություն	34
Նկարագրական մաս	36
Եզրափակիչ մաս	40
Օգտագործված գրականության ցանկ	42

ՄՅՈՒՉԱՆՆԱ ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆ

Ներածություն	43
Նկարագրական մաս	44
Արժանապատվության իրավունք	48

<i>Կյանքի իրավունք</i>	50
<i>Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք</i>	51
<i>Անմեղության կանխավարկած</i>	53
<i>Երկքաղաքացիություն</i>	57
Եզրափակիչ մաս	58
Օգտագործված գրականության ցանկ	59

ՄՅՈՒՋԱՆՆԱ ՄՈՒԽՍԻԿԱՐՈՅԱՆ

Ներածական մաս	61
Նկարագրական մաս	63
Եզրակացություն	70
Օգտագործված գրականության ցանկ	70

ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ

Ներածություն	71
Նկարագրական մաս	
Խորհրդարանական վերահսկողության ինստիտուտի դերը ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին	73
Եզրափակիչ մաս	86
Օգտագործված գրականության ցանկ	86

ՆԱԽԱԲԱՆ

Ինչպես ցանկացած երկրում, այնպես էլ ՀՀ-ում, քաղաքացիական հասարակության կայացման առաջնային ու գլխավոր նախապայմանը քաղաքացիների բարձր իրավագիտակցությունն է ու նրանց լավատեղյակությունը երկրի Սահմանադրությանը և օրենքներիին: Մանավանդ, ՀՀ-ում Սահմանադրության փոփոխությունների ընդունման և դրանց համապատասխան տեղի ունեցող զարգացումների և օրենսդրական փոփոխությունների իրականացման գործընթացներում, առանձնակի է կարևորվում բնակչությանը նմանօրինակ փոփոխություններին հասու դարձնելու, երկրում հասարակական բարձր իրավագիտակցություն, զարգացած իրավական մշակույթ և դաստիարակություն ձևավորելու անհրաժեշտությունը: Ընդհատ, նշված խնդրի լուծման համար տարվել են որոշակի աշխատանքներ, սակայն, այնուամենայնիվ, իրականացված միջոցառումները բավարար համարել չի կարելի:

Բացի դրանից՝ փոփոխվող օրենսդրությունը պահանջում է անընդհատ ուսումնասիրություն և վերլուծություն: Այս առումով, սակայն, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների գիտակրթական և ուսումնական ծրագրերը թույլ չեն տալիս վերանայել նախկինում դասավանդված, բայց հետագայում փոփոխված իրավունքի ճյուղը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Սահմանադրությանն ու սահմանադրական իրավունքին: Միևնույն ժամանակ, իրավաբանական բուհերում և ֆակուլտետներում բավարար չափով չեն կազմակերպվում իրավաբան ուսանողների իրավավերլուծական մտքի զարգացմանն ուղղված միջոցառումներ, երբ ուսանողների կողմից կքննարկվեն և կբացահայտվեն իրավական ակտերի թերություններն ու առավելությունները: Նույնը վերաբերում է նաև շրջանավարտներին և պրակտիկ իրավաբաններին: Նման պայմաններում իրավագիտության ոլորտում գիտելիքների վերանայման լավագույն առիթ և միջոց կարող են հանդիսանալ ոչ ֆորմալ կրթության այնպիսի ձևեր, ինչպիսիք են գիտաժողովները: Վերոնշյալ հիմնախնդիրների լուծումն էլ հանդիսանում է ՀԵԻԱ-ի կանոնադրական նպատակներից մեկը: Այս ոլորտում կազմակերպությունն սկսել է լուրջ աշխատանքներ տանել հատկապես 2004 թ.-ից սկսած՝ մինչ այսօր կազմակերպելով և անցկացնելով թվով 6 գիտաժողովներ տարբեր թեմաներով: ՀԵԻԱ-ի կողմից 6-րդ գիտաժողովը կազմակերպվեց 2006թ. հոկտեմբերին, «ՀՀ Սահմանադրությունը քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին» թեմայով՝ Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն-

նի աջակցությամբ: Գիտաժողովը կազմակերպվել էր «Սահմանադրական նոր դրույթների և համապատասխան օրենսդրական փոփոխությունների հասարակական իրազեկում» ծրագրի շրջանակներում, ՀՀ նախագահի համապատասխան հրամանագրի և կարգադրության հիման վրա անցկացված մրցույթի արդյունքում՝ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում: Միջոցառման կազմակերպմանն օժանդակեցին նաև Հայաստանի իրավաբանական հիմնադրամը և «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը: Գիտաժողովի նպատակն էր խթանել սահմանադրական իրավունքի ոլորտում երիտասարդ իրավաբանների կողմից ինքնուրույն գիտական հետազոտությունների կատարումը, նրանց ներգրավել սահմանադրական նոր դրույթներից բխող տարբեր օրենսդրական ակտերի քննարկումներին, հնարավորություն ստեղծել շփվել և ծանոթանալ օրենսդրության զարգացման և կատարելագործման միջազգային փորձին և միտումներին, նպաստել ՀՀ Սահմանադրության նոր դրույթների և օրենսդրական փոփոխությունների հասարակական իրազեկմանը:

Գիտաժողովի բանավոր փուլը տեղի ունեցավ 2006 թ. հոկտեմբերի 25-ին Գոուլդեն Թյուլիփ Երևան Հյուրանոցում: Միջոցառման գրավոր փուլի ընթացքում մասնակիցների կողմից ներկայացված 19 գրավոր աշխատանքների գնահատման արդյունքում առավելագույն միավորներ հավաքած 6 լավագույն զեկույցների հեղինակները մասնակցեցին եզրափակիչ՝ բանավոր փուլին: Գիտաժողովի գրավոր և բանավոր աշխատանքները գնահատելու համար իրավիրվել էին ճանաչված իրավաբաններ: Մասնավորապես, գիտաժողովի բանավոր փուլի դատավորներն էին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության և զարգացման վարչության պետի տեղակալ, ՀՀ արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդական Վրեժ Գասպարյանը, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնի գործադիր տնօրեն, փաստաբան Էլինար Վարդանյանը, ՀԵԻԱ-ի փոխնախագահ, փաստաբան Դավիթ Աբգարյանը: Գիտաժողովի բանավոր փուլի հաղթող ճանաչվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Հայկ Կարապետյանը, որը միաժամանակ արժանացավ նաև «Գիտաժողովի հաղթող» մրցանակին: Գիտաժողովի 2-րդ մրցանակակիր ճանաչվեց և «Լավագույն գրավոր զեկույց» մրցանակին արժանացավ Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ իրավագիտության բաժնի 5-րդ կուրսի ուսանողուհի Եսթեր Բարսեղյանը: Նույն համալսարանի իրավագիտության բաժնի 5-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Հակոբյանը արժանացավ 3-րդ մրցանակին: Գիտաժողովի բանավոր փուլին մասնակցելու համար հա-

մապատասխան մրցանակների արժանացան նաև ԱՏԿ համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Սողոմոնյանը, Գավառի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Մուխսիկարոյանը և ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Բագրատ Ղազինյանը:

Սույն գրքույկում զետեղված են գիտաժողովի բանավոր փուլի բոլոր մասնակիցների զեկույցները: Նախատեսվում է այս ժողովածուն անվճար տրամադրել իրավաբանական ֆակուլտետների գրադարաններին: Դրանք անվճար կտարածվեն նաև իրավաբան ուսանողների, իրավաբանությամբ հետաքրքրվող անձանց և շահագրգիռ կառույցների շրջանում:

Լյուդվիգ Գավթյան

*«Սահմանադրական նոր դրույթների և
համապատասխան օրենսդրական
փոփոխությունների հասարակական
իրագեկում» ծրագրի ղեկավար*

Ներածություն

ՀՀ Սահմանադրությունը, լինելով Հայաստանի Հանրապետության մայր օրենքը, աղբյուր և ելակետ է հանդիսանում մնացած բոլոր իրավական ակտերի համար: Որքան արդիական ու կատարելագործված լինի Սահմանադրությունը, այնքան ավելի արդյունավետ ու օգտակար դեր կկատարի ամբողջ օրենսդրական համակարգը: ՌԻստի, մեծ է Սահմանադրության նշանակությունը թե՛ իրավական պետության կառուցման, թե՛ քաղաքացիական հասարակության ձևավորման գործում: 1995 թ. հուլիսի 5-ից Հայաստանի Հանրապետությունն ունի իր Սահմանադրությունը, ինչը մեծ դեր կատարեց այս տարիների ընթացքում ՀՀ-ում թե՛ սահմանադրականությունը, թե՛ օրենսդրական համակարգը, թե՛ պետական մարմինների համակարգը ձևավորելու և կատարելագործելու համար: 2005 թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքներով փոփոխության ենթարկվեց ՀՀ Սահմանադրությունը, և սահմանադրական որոշ դրույթներ համապատասխանեցվեցին գործող տնտեսական, սոցիալական, մշակութային և իրավական պայմաններին:

ՀՀ Սահմանադրության փոփոխություններով ևս մեկ քայլ արվեց ՀՀ-ում քաղաքացիական հասարակություն կառուցելու համար: Քանի որ քաղաքացիական հասարակության հիմքը անհատն է՝ իր իրավունքներով և ազատություններով, ապա հատկապես մեծ նշանակություն են ստանում ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում (Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները) կատարված բարեփոխումները:

1995 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած հանրաքվեն ազդարարեց ՀՀ իրավական համակարգի պատմության զարգացման նոր շրջանի սկիզբը: Ընդ որում՝ որոշ դրույթների ամրագրումը ՀՀ Սահմանադրության մեջ միանշանակ չընդունվեցին իրավաբան-գիտնականների, պրակտիկ աշխատողների և հասարակության այլ անդամների կողմից: Սույն աշխատությանը կփորձենք վեր հանել ՀՀ Սահմանադրության ու կատարված փոփոխությունների թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը և հատկապես կշեռենք այն դրույթները, որոնք էական նշանակություն կունենան Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակություն կառուցելու համար: Պարզ է, որ զուտ օրենսդրական կամ սահմանադրական փոփոխություններով երբեք քաղաքացիական հասարակություն չի կառուցվի: Իսկ ահա, եթե արդիական ու արդարամիտ սահմանադրական դրույթը իրագործվում է կյանքում, խաղում է իրեն վերապահված դերը հասարակական հարաբերությունները կար-

գավորելու գործում, ապա այս դեպքում օրենքի դրույթը միանշանակ խթան է հանդիսանում քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն կառուցելու գործում:

Թեման լիովին ըմբռնելու և բազմակողմանիորեն վերլուծելու համար նախ անդրադառնանք «քաղաքացիական հասարակություն» հասկացությանը:

Մարդուն բնականորեն շնորհված է հասարակական խմբում ապրելու ձգտումը, բայց նաև նրան բնորոշ է ամեն ինչ ինքնուրույն կատարելու ցանկությունը: Իր ցանկությունը կատարելու ընթացքում մարդը հանդիպում է հասարակության դիմադրությանը, որն էլ ցանկանում է ամեն ինչ կատարել իր մշակած ծրագրով: Եվ որպեսզի չխախտվեն մարդկային հասարակության կենսական հիմքերը, մարդկային քաղաքակրթությունը ստեղծել է քաղաքացիական հասարակությունը և պետությունը՝ իր ինստիտուտներով, որոնց նպատակն էլ եղել է մարդկային տարբեր շահերի միջև փոխհամաձայնության ու ներդաշնակության հաստատումը, սակայն որն այդպես էլ մնացել է որպես երազանք, և միայն պատմական փոփոխումների արդյունքում է հասարակությունը փրկվել համատարած արյունահեղությունից¹:

Քաղաքացիական հասարակության վերլուծությունը, սկսած Արիստոտելից, միշտ էլ խորապես ուսումնասիրվել է քաղաքական և իրավական մտքի կողմից, և բնական է, որ այն միանշանակ բնորոշում չի ստացել: Սակայն, չնայած քաղաքացիական հասարակության տարբեր բնորոշումներին ու մոտեցումներին, այսօր ձևավորվել է քաղաքացիական հասարակության համեմատաբար ընդհանուր կոնցեպցիա, որի, համաձայն՝ քաղաքացիական հասարակությունը իրենից ներկայացնում է յուրահատուկ սոցիալական միջավայր, որտեղ մարդիկ փոխգործակցում են որպես իրարից և պետությունից անկախ սուբյեկտներ: Քաղաքացիական հասարակության հիմքը քաղաքակիրթ, ինքնագարգացող, լիիրավ անձն է: Որքան զարգացած է քաղաքացիական հասարակությունը, այնքան ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծվում երկրում ժողովրդավարական ռեժիմները զարգացնելու համար, իսկ քաղաքացիական հասարակության թույլ զարգացվածությունը կարող է հիմք հանդիսանալ ավտորիտար և տոտալիտար ռեժիմների հաստատման համար:

Քանի որ քաղաքացիական հասարակության հիմքը անհատն է, ապա մարդու իրավունքները և ազատությունները պաշտպանվում են քաղաքացիական հասարակության կողմից, իսկ քաղաքացու իրա-

¹ Տե՛ս Վահագն Թորոսյան, «Քաղաքացիական հասարակության» հասկացությունը քաղաքական և իրավական ուսմունքների պատմությունում, «Օրենք և իրականություն» հանդես, 2004 թ. ապրիլի հրատարակություն, էջ 33.

վունքների ու ազատությունների պաշտպանությունը արդեն իրավական պետության գործառույթն է:

Կառուցվածքային առումով քաղաքացիական հասարակությունն իրենից ներկայացնում է տնտեսական, քաղաքական և հոգևոր ոլորտների դիալեկտիկական միասություն:

✓ Տնտեսական ոլորտը տնտեսական հարաբերություններն են, առաջին հերթին՝ սեփականության հետ կապված հարաբերությունները, որոնք էլ պայմանավորում են երկրում բազմազան կազմակերպությունների առկայությունը (արհեստակցական միություններ, կոոպերատիվներ, աշխատավորական կոլեկտիվներ, առևտրային կազմակերպություններ և այլն): Այս կազմակերպությունների բազմազանությունը ուղղակիորեն կախված է սեփականության ձևերի բազմազանությունից:

✓ Քաղաքական ոլորտը հարաբերությունների ամբողջություն է, որն առաջանում է քաղաքական շահերը և ազատությունները իրագործելու նպատակով տարբեր կուսակցություններին, շարժումներին, քաղաքացիական նախաձեռնություններին, սոցիալացիաներին մասնակցության հետևանքով:

✓ Հոգևոր ոլորտը քաղաքացիական հասարակության գոյության և զարգացման արտացոլումն է հասարակական և անհատական գիտակցության մեջ, որը դրսևորվում է քաղաքացիական հասարակության անդամների կենսագործունեության միջոցով (կենցաղ, ավանդույթներ, մտածելակերպ, գիտական գործունեություն և այլն)¹:

Բացի քաղաքացիական հասարակության հիմքերից և ոլորտներից, առանձնացնում են նաև պայմաններ, առանց որոնց անհնար է քաղաքացիական հասարակության բնականոն զարգացումը: Այդ պայմաններն են՝

1. Սեփականությունը: Սա ենթադրում է, որ քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է օժտված լինի սեփականությամբ, ինչը նրան դարձնում է հասարակությունից անկախ:

2. Բազմաձև սոցիալ-քաղաքական հասարակական կառուցվածքի առկայությունը, ինչը արտահայտում է հասարակական շահերի բազմազանությունը: Նախևառաջ խոսքը գնում է քաղաքական խմբերի բազմազանության մասին: Այս պայմանի բացակայության դեպքում քաղաքացին ուղղակիորեն կապվում է պետությանը, և այդժամ անհատի և պետության միջև ստեղծվում է սուր հակասություն:

3. Անձի զարգացվածությունը, հասարակական ինքնակառավարմանն ակտիվ և գիտակցորեն մասնակցելը: Քաղաքացիական հասարակությունը միայն այնպիսի անհատի առկայության դեպքում կա-

¹ Տե՛ս նույն տեղում:

րող է գոյություն ունենալ, որին մենք անվանում ենք անձ և՛ սոցիալական, և՛ հոգեբանական իմաստներով¹:

Այսպիսով՝ քաղաքացիական հասարակությունը իրենից ներկայացնում է սոցիալական, սոցիալ-մշակութային և հոգևոր ոլորտներում անձի կենսագործունեության ապահովման համակարգ: Այդ համակարգը հասարակական ինստիտուտների և հարաբերությունների ամբողջություն է, որոնք կապված չեն պետության հետ և որոնց խնդիրն է այնպիսի պայմանների ստեղծումը, որտեղ անհատները և կոլեկտիվները հնարավորություն են ստանում ինքնադրսևորման ու ինքնահաստատման:

Նկարագրական մաս

Սահմանադրության նորմերի բազմակողմանի վերլուծությունը, որոնք կապված են քաղաքացիական հասարակության կայացման գաղափարի հետ, հնարավորություն կտա պատկերացում կազմել ՀՀ Սահմանադրության որակի ու քաղաքացիական հասարակության կայացմանը նրա հնարավոր մասնակցության մասին:

Նախևառաջ կցանկանալինք անդրադառնալ ՀՀ Սահմանադրության պրեամբուլային, որն իր մեջ կենտրոնացնում է ՀՀ Սահմանադրության ընդունման ու գոյության նպատակները: Պրեամբուլայից ակնհայտ է դառնում, որ Սահմանադրության ընդունումը նպատակ է հետապնդում տեսնել հզոր ու բարգավաճ հայրենիք, ապահովել սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հաստատել համամարդկային արժեքներ: Նշված երևույթները, որպես այդպիսք, կարող են գոյություն ունենալ միայն քաղաքացիական հասարակությունում, ուստի, ՀՀ Սահմանադրության պրեամբուլայից էլ կարող ենք ենթադրել, որ քաղաքացիական հասարակության ստեղծումը ներկայիս Սահմանադրության գլխավոր և առաջնային խնդիրներից է:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ-ը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Քաղաքացիական հասարակությունը և իրավական պետությունը իրավաբար հավասար գիտական համակարգում դիտվում են որպես իրար զուգորդող ու լրացնող հասկացություններ: Առանց քաղաքացիական հասարակության չկա իրավական պետություն, քանի որ իրավական պետությունը պետք է արտահայտի և պաշտպանի քաղաքացիական

¹ Տե՛ս Վահագն Թորոսյան, «Քաղաքացիական հասարակության» հասկացությունը քաղաքական և իրավական ուսմունքների պատմությունում, «Օրենք և իրականություն» հանդես, 2004 թ. ապրիլի հրատարակություն, էջ 33.

հասարակության շահերը: Ճիշտ է, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը կրում է նորմ-հռչակագրի բնույթ, սակայն այն ևս մեկ անգամ ընդգծում է ՀՀ Սահմանադրության առաքելությունը իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն ձևավորելու գործում:

Ժողովրդաիշխանությունը՝ որպես քաղաքացիական հասարակության գոյության անհրաժեշտ պայման, մարդկության բազմադարյան պայքարի արդյունք, ամրագրված է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում:

Ինչպես արդեն նշվեց, քաղաքացիական հասարակության հիմքը անհատն է, ուստի, առավել կարևորվում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը, որի համաձայն, «մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Պարզ է դառնում, որ Սահմանադրությունը, ճանաչելով մարդուն և նրա իրավունքներն ու ազատությունները որպես բարձրագույն արժեք, չի դավաճանում քաղաքացիական հասարակություն ձևավորելու իր ընտրած նպատակին:

Քաղաքացիական հասարակության կառուցման գործում ՀՀ-ում բացառիկ դեր է խաղում Սահմանադրության 7-րդ հոդվածը, որը ամրագրեց գաղափարախոսական բազմակարծության և բազմակուսակցության սկզբունքները: Սրանք այն արժեքներն են, որոնք շուրջ յոթ տասնամյակ բացակայել են մեր իրականությունում, ինչը բացասաբար է անդրադարձել հասարակության իրավագիտակցության և գաղափարախոսական բազմազանության վրա: Միակուսակցական համակարգը գրեթե միշտ հանգեցնում է երկրում ավտորիտար ռեժիմի ձևավորմանը, իսկ եթե այդ ամենին զուգորդվում է մաս պետականորեն ամրագրված որևէ պարտադիր գաղափարախոսության առկայությունը, ապա երկրում ձևավորվում է տոտալիտար ռեժիմ: Այս երևույթները անհարիր են քաղաքացիական հասարակությանը, ուստի, առավել արժեքավոր երանգ է ստանում Սահմանադրության 7-րդ հոդվածը: Այն լրացվում է Սահմանադրության 26 և 27-րդ հոդվածներով, որտեղ ամրագրված են մարդու մտքի, խղճի և կրոնի ազատության, իր կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության իրավունքները:

Ինչպես նշվեց՝ քաղաքացիական հասարակության պայմաններից մեկը սեփականությունն է: ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը ամրագրում է, որ «ՀՀ-ում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ-ում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը»:

Սահմանադրության մեկ այլ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը...»

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի...» (ՀՀ Սահմ. հոդվ. 31):

Փաստորեն՝ ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով սեփականության իրավունքը, դրա անձեռնմխելիությունը, հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին ունենալ որոշակի սեփականություն, ձեռք բերել ինքնուրույնություն և այդպիսով առավել նպաստել և արագացնել քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացը:

Վերը նշված նորմերը և սկզբունքները տեղ էին գտել ՀՀ Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքները վերտառությամբ գլխում: Իսկ սահմանադրական իրավունքի դասընթացից հայտնի է, որ սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրվում են առավել կարևոր ու ղեկավար դրույթները, որոնց վրա կառուցվում է ամբողջ Սահմանադրությունը¹: Ուստի, կարելի է վստահ ասել, որ վերը շարադրված դրույթներին Սահմանադրությամբ տրվել է բացառիկ կարևորություն, որոնք իրենց իրավական զարգացումն են ստանում Սահմանադրության հետագա նորմերում:

Մեր կարծիքով, ներկայիս Սահմանադրության ամենամեծ նվաճումներից մեկը 14-րդ հոդվածն է՝ «մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»: Արժանապատվության իրավունքը մարդու իրավունքների և ազատությունների հիմնական աղբյուրն է, քաղաքացիական հասարակության գոյության հիմքը: Այդ հանգամանքը գիտակցել են նաև Սահմանադրության հեղինակները և այն ամրագրել բոլոր մյուս իրավունքներից առաջ (դա տեղի է ունեցել սահմանադրական բարեփոխումների արդյունքում):

Արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որը պայմանավորում է անձի տեղը և դերը հասարակությունում: Այն ձեռք է բերվում տարիների ընթացքում, անձի զարգացման որոշակի շրջանում, երբ անձը գիտակցում է իր ազատությունը, պաշտպանվածությունը, սկսում է զնահատել իր տեղը հասարակության մեջ: Մարդու արժանապատվությունը դրսևորվում է որոշակի հասարակական հարաբերություններում, այն պայմանավորված է ինչպես մարդու ինքնագնահատականով, այն-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական իրավունք, պատ. խմբ Ն. Ա. Ալվազյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2005, էջ 104.

պես էլ օբյեկտիվ հատկությունների համակցությամբ, որոնցով բնութագրվում է նրա վարկանիշը հասարակության մեջ (բանականություն, բարոյական տվյալներ, գիտելիքների մակարդակ, սոցիալապես օգտակար հատկություններ, արժանավայել կենսաձև և այլն)¹: Եթե անձի արժանապատվությունը ձեռք է բերվում տարիների արդյունքում, ապա այն կարող է նսեմացվել նույնիսկ վայրկյանների ընթացքում, ուստի, կարևորվում է նաև անձի արժանապատվության պաշտպանությունը պետության կողմից, ինչը ամրագրվել է գործող Սահմանադրության մեջ:

Իրավահավասարությունը և օրենքի առաջ բոլորի հավասարությունը՝ որպես քաղաքացիական հասարակությանը բնորոշ հատկանիշներ, ամրագրված են ՀՀ Սահմանադրության հոդված 14.1-ում, ընդ որում, այս սկզբունքներն են խթանում հասարակական ակտիվությունը, հասարակական և քաղաքական կազմակերպությունների ստեղծումը, տնտեսության զարգացումը, քանի որ յուրաքանչյուր անձ, հաշվի չառնելով իր անձնական, գույքային, ծագումնաբանական և այլ առանձնահատկությունները, արդյունավետորեն օգտագործում է օրենսդրությամբ սահմանված իր իրավունքները, նպաստում հասարակական հարաբերությունների ակտիվացմանը և զարգացմանը:

Ներկայիս Սահմանադրության հաջորդ նվաճումը հոդված 15-ն է՝ «յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»:

Թեև արդեն երկար տարիներ են, ինչ ՀՀ-ում չի կիրառվել մահապատժ, սակայն սահմանադրական բարեփոխումների արդյունքում մահապատժի վերացումը, մեր կարծիքով, ճիշտ էր և կնպաստի ՀՀ իրավական համակարգի զարգացմանը: Մահապատժը անհարիր է քաղաքացիական հասարակությանը: Քաղաքացիական հասարակության առկայության պայմաններում նվազագույնի են հասցվում ծանր հանցագործությունները, ուստի, ծանր պատիժների կարիք չի զգացվում: Իհարկե, մահապատժի վերացումը մեծ մասամբ պայմանավորված էր միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ, սակայն, կարծում ենք, որ մահապատժի վերացումը իր դրական ազդեցությունը կունենա նաև հասարակության իրավագիտակցության բարձրացման և ինքնազարգացման վրա:

Սահմանադրությամբ ամրագրվել են նաև մարդու ազատության և անձեռնմխելիության, ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, բնակարանի անձեռնմխելիության, ազատ տեղաշարժվելու, բնակավայրը ընտրելու և մի շարք այլ հիմնական իրավունքներ ու ազատություններ,

¹ Տե՛ս Մարդու իրավունքներ: Վ. Այվազյան: Ուսումնական ձեռնարկ: Երևան, 2002., էջ 82.

որոնք ունեն անճանական բնույթ և ուղղված են մարդու՝ որպես հասարակական ու կենսաբանական էակի կենսագործունեության լավագույնն ապահովմանը:

Քաղաքացիական հասարակության բաղկացուցիչ մաս կազմող անհատը ակտիվ է ու գործունյա, ինչը հնարավոր չի լինի այնպիսի երկրներում, որտեղ մարդու համար սահմանված չեն մի շարք քաղաքական իրավունքներ ու ազատություններ: Այս առումով ևս ՀՀ Սահմանադրությունը գտնվում է առաջադիմական դիրքերում:

Հատկանշական է հատկապես ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածը, որի համաձայն, «յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք...

Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման:

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով»:

Քաղաքացիական հասարակությանը բնութագրող հատկանիշներից է նրանում հասարակական և քաղաքական կազմակերպությունների առկայությունը, որոնք, որպես քաղաքական համակարգի տարրեր, արդյունավետորեն կատարում են երկրի առջև ծառայած հիմնախնդիրների լուծման պատասխանատու գործառույթը: ՀՀ-ում գնալով մեծանում են հասարակական կազմակերպությունների դերը հատկապես մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության ոլորտում, և վստահությամբ կարող ենք արձանագրել, որ հասարակական կազմակերպությունների ինստիտուտը կայացման ճանապարհին է, իսկ քաղաքական կազմակերպությունները, թեև առավել դանդաղ քայլերով, սակայն նույնպես զարգացում են ապրում: Կարծում ենք՝ իրավական պետությունում պետական իշխանությանը հակակշռող դեր պետք է կատարեն հենց հասարակական-քաղաքական կազմակերպությունները, ուստի, ավելի ու ավելի է կարևորվում դրանց դերը ՀՀ-ում իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն ձևավորելու գործում:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է պետական իշխանությանը մասնակցելու ևս մեկ հնարավորություն՝ ի դեմս ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի, որի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք»: Հենց այսպիսի հավաքներն էլ նախկին խորհրդային երկու երկրներում (ՌԴԿրաիմա, Վրաստան) խաղաղ ու քաղաքակիրթ իշխանափոխության միջոց հանդիսացան, ինչը դրական արձագանք ստացավ ամբողջ աշխարհում,

ուստի, պարզ է, որ խաղաղ, առանց զենքի ժողովները, հանրահավաքները, երթերը և ցույցերը պետական իշխանության մարմինների վրա ազդելու լավագույն միջոցներից մեկն են, քաղաքացիական հասարակությանը բնորոշ ևս մեկ կարևորագույն հատկանիշ: Ցանկանում ենք նաև նշել, որ մինչև 2005 թ. նոյեմբերի 27-ը վերը նշված իրավունքը պատկանում էր միայն ՀՀ քաղաքացիներին, ինչը անհարկի սահմանափակում էր ՀՀ-ում գտնվող օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքը հավաքների միջոցով լուծելու իրենց առջև ծառայած հիմնախնդիրները: Սակայն կատարված սահմանադրական բարեփոխումների ընթացքում շտկվեց այդ թերությունը և խաղաղ հավաքներ կազմակերպելու իրավունքը վերապահվեց բոլորին:

Ժողովրդաիշխանության սկզբունքի իրագործման համար ՀՀ Սահմանադրությունը դեռևս 1995 թ. նախատեսել էր տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիների ընտրելու, հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը: Սակայն սահմանադրական բարեփոխումների արդյունքում հնարավորություն է տրվում օրենքով սահմանել քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Ինչպես նշվել է, քաղաքացիական հասարակության ոլորտներից մեկն էլ տնտեսական ոլորտն է: ՀՀ Սահմանադրությունը սահմանել է անձի տնտեսական և սոցիալ-մշակութային իրավունքները: Տնտեսական իրավունքների հիմնաքարը մասնավոր սեփականության իրավունքն է, որին արդեն անդրադարձանք:

ՀՀ Սահմանադրության հոդված 31.1-ը սահմանում է. «Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ»:

Պետությունը, պաշտպանելով սպառողների շահերը, հսկողություն իրականացնելով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ, խթանում է տնտեսության որակի բարձրացումը, բարձր մակարդակի տնտեսական հարաբերությունների ձևավորումը, ՀՀ շուկան միջազգային զարգացած ստանդարտներին համապատասխանեցումը:

ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածը ամրագրում է. «յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն...»

Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք,

որի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով»:

Թեև ՀՀ գործող Սահմանադրությունը չի ամրագրել աշխատանքի իրավունքը, սակայն, կարծում ենք, որ դա զուտ ժամանակի խնդիր է, և տնտեսության զարգացմանը զուգընթաց ՀՀ-ը կկատարի սոցիալական պետության բարձր կոչմանը վայել իր այդ պարտականությունները: Սակայն դրանով հանդերձ՝ ՀՀ Սահմանադրությունը նախատեսել է մի շարք հնարավորություններ աշխատանքային հարաբերություններում խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ: Այստեղ հատկապես կարևորվում է աշխատանքային կոլեկտիվների և արհեստակցական միությունների դերը, որոնք, որպես քաղաքացիական հասարակությանը բնորոշ առանձնահատուկ մեխանիզմներ, բացառիկ դեր են կատարում աշխատավորների իրավունքների ու ազատությունների պաշտպանության, նրանց աշխատանքային պայմանների բարելավման գործընթացում: Իսկ գործադուլի իրավունքը աշխատանքային հիմնախնդիրների լուծման առավել հաճախ կիրառվող և առավել արդյունավետ միջոցներից մեկն է:

Հայաստանի Հանրապետությունը ամեն կերպ խթանում է երկրում ձեռնարկատիրական հարաբերությունների զարգացումը, ուստի, պատահական չէ, որ Սահմանադրության հոդված 33.1-ում ամրագրված է. «յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են...»:

Հզոր տնտեսությունը հզոր պետության հիմքն է ու գրավականը: ՀՀ տնտեսությունը դուրս է եկել խորին ճգնաժամից և բռնել է զարգացման ուղին: Իհարկե, կան բազմաթիվ խնդիրներ (կոռուպցիա, կաշառակերություն, անպատասխանատվության մթնոլորտ և այլն), որոնք խոչընդոտում են տնտեսության զարգացմանը, սակայն քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին, մեր կարծիքով, կվերանան մաև այդ խնդիրները:

Քաղաքացիական հասարակության անդամները ծնվում և որպես անհատ ձևավորվում են ընտանիքում, ուստի, առավել ակտիվ, ինքնազարգացման ու ինքնահաստատման ձգտող անհատի ձևավորման գործում բացառիկ է ընտանիքի դերը: ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածը ամրագրում է, որ «ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է...»:

Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք»:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրությունը ամեն կերպ պաշտպանում է մայրերի իրավունքները, այսինքն, խրախուսում է ընտանիքների առկայությունը և դրանց աճը:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ «Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ ու ազատություններ:

Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով...»:

Վերը նշված հոդվածը անհատին հնարավորություն է տալիս օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել իր իրավունքները, պաշտպանել դրանք, չսահմանափակվել զուտ սահմանադրաիրավական նորմերով, ինչը, բնականաբար, կհանգեցնի անհատի հասարակական ու քաղաքական ակտիվությանը:

ՀՀ Սահմանադրությունը ամրագրել է նաև մի շարք պարտականություններ, որոնցից կցանկանայինք անդրադառնալ հոդված 47-ին, որի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը...»

Այս հոդվածի խախտումը գրոյի է հավասարեցնում ՀՀ Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված մարդու բոլոր իրավունքներն ու ազատությունները: Այս պարտականության գիտակցումը և պահպանությունը պետք է ամուր կերպով ամրապնդված լինի յուրաքանչյուրիս գիտակցության մեջ, Սահմանադրությունը և օրենքը պետք է ընդունվեն որպես բարձրարժեք երևույթներ, իսկ դրանց պահպանությունը լինի համազգային խնդիր:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածում առաջ են քաշվել տնտեսական, սոցիալական, մշակութային ոլորտներում պետության կողմից լուծման ենթակա մի շարք խնդիրներ, որոնց հաջող լուծման դեպքում ՀՀ-ը կկանգնի զարգացման բոլորովին նոր մակարդակի վրա, և քաղաքացիական հասարակության ձևավորումը մեր երկրում առավել իրատեսական կլինի:

Ինչպես տեսնում ենք՝ ՀՀ Սահմանադրությունը երկրորդ գլխում ևս ամրագրել է բազմաթիվ նորմեր, որոնք խոսում են գործող Սահմանադրության առաջադիմական բնույթի մասին: Սահմանադրության հետագա գլուխներում ամրագրված նորմերով կարգավորվում են պետության կառավարման ձևը, պետական մարմինների կազմավորման ու գործունեության կարգը, որոնք անուղակիորեն ևս կարող են դրական ազդեցություն ունենալ ՀՀ-ում քաղաքացիական հասարակություն ձևավորելու գործընթացում:

Մեր դիտարկումները լիարժեք չեն լինի, եթե մենք չանդրադառնանք ՀՀ Սահմանադրության մի քանի բացերին, որոնց կարող էր նպաստել քաղաքացիական հասարակության կայացմանը:

ՀՀ Սահմանադրությունը սահմանադրական կարգի հիմունքներում չի ամրագրում սեփականության բազմաձևության սկզբունքը՝ չնայած որ այն գործում է ՀՀ տարածքում (օրինակ՝ ՌԳ Սահմանադրության 8-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ ՌԳ-ում հավասարապես ճանաչվում և պաշտպանվում են մասնավոր, պետական, համայնքային և սեփականության այլ ձևերը): Սեփականության բազմաձևության հետ է անմիջականորեն կապված տարբեր կազմակերպությունների, միութունների բազմաձևությունը¹:

Ինչպես արդեն նշվեց՝ թերություններից մեկն էլ աշխատանքի իրավունքը նախատեսող նորմի բացակայությունն է ՀՀ Սահմանադրությունում: Այս առումով մեծ նվաճումների է հասել Իտալիայի Սահմանադրությունը, որտեղ ոչ միայն ամրագրված է աշխատանքի իրավունքը, այլև դրա պաշտպանության համար նախատեսվում են բազմազան մեխանիզմներ, իսկ Իտալիայի Սահմանադրության 1-ին հոդվածը ամրագրում է, որ Իտալիան ժողովրդավարական հանրապետություն է՝ հիմնված աշխատանքի վրա...:

Ցանկալի կլիներ, որ ՀՀ Սահմանադրությունը ընդգծեր այն ոլորտները, որոնց պաշտպանության համար առավել նպատակահարմար կլիներ ստեղծել տարբեր կազմակերպություններ ու միություններ: Օրինակ՝ Գերմանիայի Հիմնական օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը ամրագրում է, որ տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավման ու պաշտպանության համար միություններ ստեղծելու իրավունքը երաշխավորվում է բոլորի և յուրաքանչյուր արհմիության համար: Իսկ ահա Իսպանիայի Սահմանադրության 7-րդ հոդվածը ընդգծում է, որ աշխատավորական արհմիությունները և գործարարների ասոցիացիաները իրենց ներդրումն են ունենում տնտեսական և սոցիալական շահերի պաշտպանության և իրականացման գործում...:

ՀՀ Սահմանադրության վերը նշված և մի շարք այլ թերությունները բոլորովին չեն նսեմացնում գործող Սահմանադրությունը, դեռ ավելին, ՀՀ Սահմանադրությունը վերը նշված Սահմանադրություններից շատերի համեմատ ավելի մեծ իրավական հնարավորություններ է պարունակում քաղաքացիական հասարակության կայացման համար:

¹ Տե՛ս Վահագն Թորոսյան, «Քաղաքացիական հասարակության» հասկացությունը քաղաքական և իրավական ուսմունքների պատմությունում, «Օրենք և իրականություն» հանդես, 2004 թ. ապրիլի հրատարակություն, էջ 33.

Եզրափակիչ մաս

Այսպիսով՝ ինչպես տեսանք՝ ՀՀ Սահմանադրությունը իրավական առումով բավական մեծ զարգացվածության է հասել, նրանում պարունակվող նորմերը ամրագրում են համամարդկային արժեքներ, որոնց պահպանությունը կհանգեցնի իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացմանը:

Սակայն ցավով ստիպված ենք արձանագրել, որ լոկ իրավական դաշտի կատարելագործումը չի կարող հիմք հանդիսանալ թե՛ քաղաքացիական հասարակության կայացման, թե՛ մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանության համար: Հարկավոր է, որ հասարակությունը զարգանա գաղափարապես և հոգեպես: Ինչքան էլ արդիական ու բարձրարժեք լինի երկրի օրենսդրությունը, միևնույնն է, եթե այն չի կենսագործվում կյանքում, ապա մարդու իրավունքների պաշտպանվածությունից, իրավական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորման բարձրարժեք գաղափարներից խոսելն ավելորդ է:

Սակայն, մեր կարծիքով, կան իրավիճակից դուրս գալու մի շարք հնարավորություններ, որոնք քիչ թե շատ կնպաստեն հասարակության իրավական զարգացմանը.

1. Որպեսզի հասարակությունը պահպանի ՀՀ Սահմանադրությունը և օրենքները, նախևառաջ պետք է իրազեկ լինի դրանց բովանդակությամբ: Ուստի, առաջարկում ենք տարբեր եղանակներով՝ հեռուստառադիոընկերությունների, գրքերի, դասագրքերի, ձեռնարկների, տարբեր կազմակերպությունների, գիտաժողովների, հրապարակումների, տարբեր բնույթի միջոցառումների, և, ամենակարևորը, բանիմաց անձանց միջոցով ուժեղացնել ՀՀ օրենսդրության դրույթները ժողովրդի սեփականությունը դարձնելու գործընթացը:

2. Պետության կողմից կադրային քաղաքականության ճիշտ ու նպատակաուղղված վարումը: Եթե յուրաքանչյուր անձ իր գործը կատարի պատշաճ որակով, լինի իր գործի մասնագետը և դրսևորի արհեստավարժ գիտելիքներ ու գործնական կարողություններ, ապա ավելի քիչ կխախտվեն մարդու իրավունքները, և կմեծանա հասարակության վստահությունը պետության ու պաշտոնատար անձանց նկատմամբ:

3. Անձի մոտ գաղափարախոսական ինքնուրույնություն, հասարակական ակտիվություն ձևավորելու համար պետության կողմից պետք է խրախուսվեն հասարակական գործունեությամբ զբաղվողները, մինչդեռ մեր պետությունում շատ հաճախ նրանք արհամարհվում են:

Նշված բոլոր խնդիրներն էլ իրագործելու համար որոշակի ներդրումներ են պահանջվում, իսկ մեր պետության թույլ տնտեսական վիճակը հնարավորություն չի տալիս այդպիսի ներդրումներ անելու, ուստի, հանգում ենք եզրակացության, որ երկրում քաղաքացիական հա-

սարակություն ձևավորելու համար առաջին հերթին պետք է զարգանա տնտեսությունը, ինչն էլ աստիճանաբար կհանգեցնի ՀՀ-ում առկա մյուս խնդիրների իրականացմանը:

Այսպիսով՝ ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք նշել, որ ՀՀ Սահմանադրությունը քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին կատարում է իրեն վերապահված դերը, իսկ ահա անհրաժեշտ մյուս պայմանները քաղաքացիական հասարակության կայացման համար, իրենց դերակատարման առումով, զգալիորեն հետ են մնում:

Օգտագործված գրականության ցանկ

1. 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրություն՝ 2005 թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով
2. 1993 թ. դեկտեմբերի 12-ի Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություն
3. 1947 թ. սեպտեմբերի 22-ի Խտայիայի Հանրապետության Սահմանադրություն
4. 1949թ. մայիսի 23-ի Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենք՝ 1997 թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ առկա փոփոխություններով ու լրացումներով
5. 1978 թ. դեկտեմբերի 27-ի Իսպանիայի Թագավորության Սահմանադրություն
6. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, խմբագրությամբ Ն. Այվազյանի, Երևան, 2003
7. Մարդու իրավունքներ, Այվազյան Վ., Երևան, 2002
8. Վահագն Թորոսյան, «Քաղաքացիական հասարակության» հասկացությունը քաղաքական և իրավական ուսմունքների պատմությունում, «Օրենք և իրականություն» հանդես, 2004 թ. ապրիլի հրատարակություն
9. Պետության և իրավունքի տեսություն, Վ. Խրոսյանյուկ, թարգմանությամբ՝ Խ. Հարությունյանի, Երևան 1997
10. М.В.Баглай “Конституционное право Российской Федерации” Издат. НОРМА, Москва, 2001

Ներածություն

1995 թ. հուլիսի 5-ին ընդունելով Սահմանադրություն՝ հայ ժողովուրդը կարևորագույն քայլ կատարեց պետության հիմքերի ամրապնդման և պետականության կայացման ու զարգացման գործում: Սահմանադրությունը ընկալվեց որպես պետության կարևորագույն խորհրդանիշ, ինչը տրամաբանական է և այդպես պետք է լինի, սակայն այս իրավական ակտը՝ որպես ժողովրդի կամքի արտահայտություն և հասարակական համաձայնություն, հանդես չեկավ որպես հենց այդ հասարակության անդամների իրավունքների երաշխավոր, իրավունքով իշխանությունը սահմանափակելու գրավական կամ գոմե ՀՀ քաղաքացիների՝ իրենց երազած իրավունքները և ազատությունները ամրագրող հիմնական օրենք: Սահմանադրությունը, թերևս, այդպիսին չընկալվեց ժողովրդի մեծամասնության կողմից: Հասարակական գիտակցության հետխորհրդային ճգնաժամը, երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր իրավիճակը իրենց դերակատարումն, անշուշտ, ունեին այդ հարցում: Սակայն հետագայում առաջացավ և, ցավոք, մինչև այսօր պահպանվում է «անջրպետ» Սահմանադրության և հասարակության միջև, ինչը պայմանավորված է բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակով, համատարած իրավական նիհիլիզմով:

Բնական է, որ սահմանադրական փոփոխությունը, մանավանդ, եթե Սահմանադրությունը կոշտ է, պետք է պայմանավորված լինի հատուկացած հասարակական պահանջմունքով, սակայն 2005 թ. ՀՀ սահմանադրական փոփոխությունների գերակշիռ մասը բխում էին Եվրոխորհրդի անդամակցության արդյունքում ՀՀ ստանձնած պարտավորություններից: Հետևաբար, ինչքան էլ կատարյալ լինի մեր Սահմանադրությունը, միևնույնն է, եթե մեր հասարակությունը չի գիտակցում իրեն պատկանող և Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ծավալը, պատրաստ չէ ինքնակառավարվելու, քաղաքացիական հասարակության մասին վաղ է խոսելը:

Այնուամենայնիվ, անժխտելի է ու անփոխարինելի երկրի հիմնական օրենքի դերը քաղաքացիական հասարակության կայացման գործում, որտեղ բավարար երաշխիքներ պետք է լինեն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, իշխանությունների երեք թևերի միջև զսպումների ու հակակշիռների մեխանիզմների ապահովման, տեղական ինքնակառավարման՝ որպես ինքնակառավարվող հասարակության և պետության փոխհարաբերությունների արտահայտման ձևի վերաբերյալ: Ուստի, աշխատանքում փորձ կարվի ներկայացնել ՀՀ Սահմանադրությունը, նրանում կատարված փոփոխությունները հենց վերոնշյալ արժեքների համատեքստում:

Նկարագրական մաս

Սահմանադրությունը՝ որպես քաղաքացիական հասարակության հիմնական օրենք

Իրավունքը մարդկային համաշխարհային պատմության մեջ ազատության մաթեմատիկական է, որը մարդկանց՝ որպես ձևականորեն (իրավաբանորեն) ազատ անհատների հավասարության առաջընթաց է: Իրավունքի մեխանիզմի՝ ձևական (իրավական) հավասարության միջոցով մարդկանց սկզբում անազատ զանգվածն աստիճանաբար, պատմական զարգացմանը զուգընթաց, վերափոխվում է ազատ անհատների: Իրավական հավասարությունը հնարավոր և իրական է դարձնում ազատությունը համընդհանուր նորմատիվ-իրավական ձևի ներքո, որոշակի իրավակարգի տեսքով¹: Հենց այդ նորմատիվ-իրավական ձևն է Սահմանադրությունը, որին տրված խիստ բազմաբնույթ, երբեմն նույնիսկ հակասական բնորոշումները, միևնույնն է, չեն կարող խեղաթյուրել պետության հիմնական օրենքի առաքելությունը՝ ապահովելու ինչպես յուրաքանչյուրի իրավունքների ու ազատությունների իրականացումը այդ պետության միջոցով, այնպես էլ դրանց անձեռնմխելիությունը այդ պետության նկատմամբ: Եթե որոշ հեղինակների կողմից Սահմանադրությունը բնորոշվում է որպես դրա ընդունման պահին առկա քաղաքական ուժերի հարաբերակցության արտացոլում, ապա սահմանադրական զարգացումների ներկայիս միտումները թույլ են տալիս պնդելու, որ չնայած իր քաղաքական հենքին, այնուամենայնիվ, Սահմանադրությունը պետք է հանդես գա որպես հասարակական համաձայնություն, միայն այդպիսով կարող է իրականություն դառնալ հռչակված իրավական պետության դրույթը: Այդպիսի պետությունը պետք է լինի քաղաքացիական հասարակության ձև, այլ ոչ թե դառնա ինքնանպատակ, որի համար անհրաժեշտ է ստեղծել ուժեղ, կենսունակ, ազատասեր հասարակություն, որն ի վիճակի է թույլ չտալու իշխանության բռնագրավում, պաշտպանվել և դիմադրություն ցույց տալ, գործուն հակահարված հասցնել ամեն մի հակաժողովրդավարական ոտնձգության²: Անհրաժեշտ է, որպեսզի սահմանադրական նորմերը կյանքի կոչվեն, դրանց նկատմամբ դրսևորվի հասարակական կայուն վերաբերմունք՝ ձևավորելով հասարակության սահմանադրական մշակույթի իրական որակներ, այն դարձնելով

¹ Տե՛ս Վ. Ս. Ներսիսյանց, Ցիվիլիզմի մանիֆեստը, Ե., 2001, էջ 7.

² Տե՛ս Ն. Ա. Ապիյան, Ա. Հ. Պետրոսյան, Իրավական պետություն և օրինականություն, Ե., 2001, էջ 32-33.

ազգային մշակույթի օրգանական բաղադրատարրը: Այս փուլում արդեն սահմանադրական մշակույթը նոր որակ է ստանում հասարակական-պետական այն համակարգերում, ուր Սահմանադրության հետ մեկտեղ առկա է սահմանադրականությունը, որտեղ սահմանադրական նորմերն ու սկզբունքներն ապրող իրողություն են, ձևավորվել է սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ ու բավարար միջավայր, որտեղ սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն, և կա սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ, որտեղ Սահմանադրությունը ոչ թե գործիք է պետական իշխանության ձեռքին, այլ քաղաքացիական հասարակության հիմնական օրենքն է, միջոց է այդ հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխավորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլև սահման դնելով իշխանությանը, այն սահմանափակելով իրավունքով¹: Սակայն դրա համար անհրաժեշտ է Սահմանադրության ընկալումը, հարգումը յուրաքանչյուր քաղաքացու կողմից: Այս բարդ ու համալիր գործընթացում խիստ կարևոր է Սահմանադրության՝ որպես փաստաթղթի, ձևակերպված իրավանորմ-սկզբունքների համակարգի ամբողջականությունը, կուռ կառուցվածքը: Եթե Սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքը միս ու արյուն չի ստանում սահմանադրական կոնկրետ լուծումներում, այդ սկզբունքը դադարում է գործել, կյանքն արդեն ընթանում է այլ ձևակերպումների շրջանակներում, և մենք ստիպված ենք գործ ունենալ բոլորովին այլ համակարգի հետ: Դրա համար բացառիկ կարևոր նշանակություն ունի ընկալել ու հասկանալ սահմանադրական հիմնարար սկզբունքների՝ կենդանի, ապրող արժեքներ լինելու իրողությունը և տեսնել դրա իրականացումը սահմանադրական ցանկացած այլ լուծումների մեջ՝ կոնկրետ, արդեն հարաբերություններ կարգավորող նորմերի և կառուցակարգային լուծումների մեջ: Սահմանադրությունը համակարգ է, արժեքային ամբողջական համակարգ, որտեղ յուրաքանչյուր տարր պետք է ներդաշնակ լինի մյուս տարրերի հետ: Ուրեմն, համակարգային ամբողջականությունը պարտադիր պետք է երաշխավորված լինի: Այս սկզբունքների ամրագրումը, համակարգային ամբողջականության երաշխավորումը որքան էլ անհրաժեշտ, սակայն բավարար չեն: Սահմանադրությունը պետք է օժտված լինի նաև սահմանադրական ինքնապաշտպանական համակարգով, այսինքն՝ պետք է կարողանան գործել իմունային համակարգին վերագրվող սկզբունքները: Այսպիսի Սահմանադրությունն է, որ իշխանության ձեռքին գործիք լինելու փոխարեն դառնում է քաղաքացիական հասա-

¹ Տե՛ս Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Ե., 2005, էջ 23-24.

րակության գոյության իրավական հենքը: Եթե նկատի ունենանք սահմանադրությունների ստեղծման երեք հիմնական առաքելությունները, որոնք էին՝

- երաշխավորել մարդկանց իրավունքներն ու ազատությունները,
- սահման դնել իշխանության ու այն իրականացնողների գործողություններին,
- սահմանել պետական կարգի հիմունքներն ու կանոնակարգել իշխանական գործառույթների իրականացումը¹,

սպա պարզ է, որ սա քաղաքացիական հասարակության հարթությունն է, որը որոշվում է իդեալի և հասարակության համար իրականում ձեռք բերված վիճակի հարաբերությամբ, ինչպես և ազատության, հավասարության, արդարության և սոցիալական, քաղաքական, բարոյական, մշակութային այլ արժեքների ձեռք բերման մակարդակով²: Հետևաբար, իրեն ժողովրդավար համարող և իրավականի հավակնող պետությունը չպետք է Սահմանադրությունն իր ձեռքում ունենա որպես սուր, որ ճոճի հասարակության առաջ, այլ ինքը՝ հասարակությունը պետք է Սահմանադրությամբ սահմանափակի ինչպես իշխանության կողմից չարաշահումները և անօրինականությունները, այնպես էլ ոտնձգությունները այդ իշխանության նկատմամբ, քանի որ վերջինս ևս գտնվում է Սահմանադրության հովանու ներքո: Հետևաբար, այս հիմնական օրենքը պետք է լինի հավասարակշռող օղակ, ինչը կապահովի բնականոն զարգացում: Սահմանադրությունը արտացոլում է այն հասարակական վիճակը, որի առկայությամբ ընդունվում է: Բայց, քանի որ հասարակական հարաբերություններն իրենց ձևով և բովանդակությամբ անընդհատ կատարելագործվում են, նմանատիպ շարժունակությունը՝ դինամիկան, նաև անդրադառնում է Սահմանադրության վրա, ծնում սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն: Բնականաբար, այն իրավական համակարգերում, որտեղ լայնորեն կիրառում ունի ինտերպրետիվիստական տեսությունը³, սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն հաճախակի չի առաջանում, այդպիսով ապահովվում է Սահմանադրության ճկունությունը: Սակայն այնպիսի երկրներում, ինչպիսին ՀՀ-ն է, որտեղ դեռևս չկան ամրապնդված իրավական ավանդույթներ, միաժամանակ, հաշվի առնելով մեր իրավական համակարգի հայեցակարգային ուղղվածությունը նախադեպային իրավունքի ինստիտուտի վերաբերյալ, այդպիսի մոտեցումը խիստ վտանգավոր կարող

¹ Տե՛ս Գ. Հարությունյան, նշվ. աշխատությունը, էջ 170.

² Տե՛ս Վ. Պողոսյան, Սահմանադրական հասկացությունների համառոտ բառարան, Ե., 2001, էջ 242.

³ Տե՛ս Ծրուցիոս Կյրիս, Конституционное правосудие, Ер., 2004, էջ 25-26.

եր լինել՝ ընդհուպ մինչև վտանգ ներկայացնելով ժողովրդավարության հիմքերին: Ուստի, Սահմանադրության փոփոխությունների միջոցով կոնկրետ իրավիճակի համար մեխանիզմներ սահմանելով, առավելագույնս է երաշխավորվում Սահմանադրության ընդհանուր սկզբունքների իրագործումը: Չնայած որոշ հեղինակներ գտնում են, որ հետխորհրդային երկրներում սահմանադրականության ամրապնդումը Արևմուտքին «հաճոյանալու» շարժառիթ է պարունակում¹, և դա որոշ չափով հիմնավորվում է նաև ՀՀ օրինակով, պայմանավորված Եվրախորհրդի հանդեպ մեր երկրի ստանձնած պարտավորություններով,² այնուամենայնիվ, սահմանադրական փոփոխությունները մեր երկրում, չնայած չէին պահանջվում հասարակության լայն զանգվածների կողմից, անհրաժեշտություն էին, որոնց իրագործումը քայլ էր՝ ուղղված ժողովրդավարության հիմքերի ամրապնդմանը, Սահմանադրության ներքին կառուցվածքային համակարգվածության բարելավմանը: Որոշ հեղինակներ վերապահումով են վերաբերվում այդ առաջընթացին³: Իհարկե, Սահմանադրությունը, թեկուզ բարեփոխված տարբերակով կատարյալ չէ, և ենթադրվում է, որ որոշ դրույթներ հետագայում կհատակեցվեն, բայց անժխտելի է, որ սահմանադրական փոփոխությունները կարելի է գործադրել միայն ի նպաստ ժողովրդավարության և ոչ երբեք՝ հակառակը: Սահմանադրությունը՝ որպես քաղաքացիական հասարակության հիմնական օրենք, այդ հասարակության ինքնակարգավորման, պետության և անհատի փոխհարաբերությունների արտացոլումն ու իրավական կարգավորումն է: Չկա սահմանադրական մի դրույթ, որը անմիջականորեն կամ միջնորդավորված չառնչվի այդ հարաբերություններին: Սակայն ստորև կքննարկվեն այն դրույթները (հատկապես փոփոխությունները), որոնք առավելագույնս են հարաբերակցվում քաղաքացիական հասարակության և իրավական պետության գաղափարին և ունեն սկզբունքային նշանակություն:

¹ St'u Андраш Шайо, Конституционализм в посткоммунистической Европе, Конституционное правосудие в посткоммунистических странах: (сборник докладов) М., 1999, էջ 6.

² St'u Եվրախորհրդի Խորհրդարանական վերահսողովի 2000 թ. հունիսի 28-ի թիվ 221 որոշումը, որով Եվրախորհրդի նախարարների կոմիտեին երաշխավորվում է հրավիրել ՀՀ-ը անդամակցել ԵԽ-ին, Ուսումնասիրություն ՀՀ իրավունքի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեցիայի պահանջներին համապատասխանության մասին, Ե., 2001, էջ 466-470.

³ St'u Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը. համառոտ պարզաբանումներ, Ե., 2005, էջ 121.

Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, դրանց պաշտպանության սահմանադրական երաշխիքները

Սահմանադրության՝ պետական իշխանության սահմանափակման հատկանիշը ամենից առաջ պայմանավորված է մարդու բնական իրավունքների և ազատությունների ճանաչման ու պաշտպանության խնդրով: 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում էականորեն փոփոխվեցին ՀՀ Սահմանադրության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող դրույթները, որոնք ավելի համահունչ դարձան Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունը ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Այս դրույթը, ամրագրված լինելով Սահմանադրական կարգի հիմունքներում, ունի ոչ միայն գործնական, այլև հայեցակարգային կարևոր նշանակություն, քանի որ պայմանավորում է հաջորդ գլխում սահմանվելիք դրույթների ուղղվածությունը: Այն, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները հանդես են գալիս որպես անմիջականորեն գործող իրավունք, ինքնին թելադրում է նաև 6-րդ հոդվածում «օրենքի գերակայության» հասկացության բացառումը: Առկա է քննադատական մոտեցում 3-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ, որտեղ, ըստ հեղինակների, ավելի ճիշտ կլիներ ամրագրել, որ պետության գլխավոր առաքելությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն ու դրանց իրականացման ապահովումն է¹: Վերոնշյալ քննադատական մոտեցման տեսական հիմնավորումը կարելի է համարել այլ հեղինակների կողմից առաջ քաշվող այն տեսակետը, որ պետության պատասխանատվությունը համարվում է երիտասարդ ժողովրդավարական համակարգերի առաջադիմության գրավականը²: Պետության պատասխանատվության հայեցակարգը բխում է

¹ Տե՛ս Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, նշվ. աշխատությունը, էջ 27.

² Տե՛ս Marek Safian, Responsabilité des organes de puissance publique comme standard d'un état démocratique de droit, Конституционное правосудие в новом тысячелетии: (Альманах), Ер., 2005, էջ 27.

քաղաքացիական հասարակության վերաբերյալ նոր տեսությունից, ըստ որի, ոչ թե պետությունն է ապահովում այդպիսի հասարակության գոյությունը, այլ ընդհակառակը՝ ինքնավար հասարակության արժեքները և շահերը հակադիր են ժամանակակից պետությանը, ինչպես նաև տնտեսությանը¹: Կարծում ենք՝ այդպիսի հակադրությունը կարող է ենթադրվել, բայց այն դեպքում, երբ պետությունը և իշխանությունը պայմանականորեն նույնացնենք:

Սահմանադրության 2-րդ գլխում կատարված փոփոխություններին հատկանշական է այն, որ որոշ իրավունքներ, որոնք վերապահված էին միայն քաղաքացիներին, այժմ արդարացիորեն սահմանվում են որպես յուրաքանչյուրի իրավունք: Այսպես, խոսքը վերաբերում է ՀՀ տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, ՀՀ վերադառնալու (հոդվ. 25), խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու (հոդվ. 29), աշխատանքի ազատ ընտրության (հոդվ. 32) և այլ իրավունքներին: Սահմանադրության 16-րդ հոդվածով ոչ միայն ամրագրվում է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, այլև ընդգրկում կերպով երաշխիքներ են սահմանվում այդ իրավունքի իրականացման համար: Միայն հակասական է հոդվածի 4-րդ մասը, որում արված իրավունքը՝ ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատարանում, ենթադրում է լուրջ փոփոխություններ ճյուղային օրենսդրությունում: Կարևոր է վերաձևակերպված հոդված 18-րդը, որը սահմանում է իրավունքների իրականացման երաշխիքները: Այս հոդվածը սահմանադրական մակարդակով կարգավորում է օմբուդսմենի և մարդու իրավունքների եվրոպական դատարանի միջոցով իրավունքների պաշտպանության երաշխիքները:

Որոշ հեղինակներ կարծում են, որ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող գլխում պետք էր ամրագրել բացառապես նրանց սուբյեկտիվ, այսինքն, դատական պաշտպանությամբ երաշխավորված իրավունքները, իսկ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներն այդ գլխում պետք է շարադրվեին տուկ այնքանով, որքանով պետությունն ի վիճակի է երաշխավորել դրանց դատական պաշտպանությունը: Մնացածը պետք էր շարադրել պետության պարտականությունների մասին հատուկ գլխում²: Իհարկե, Սահմանադրության 48-րդ հոդվածը հենց կոչված է իրականացնելու այդ առաքելությունը, սակայն որոշ դրույթներ՝ սպառողների շահերի պաշտպանությունը պետության կողմից, շրջակա միջավայրի պաշտպանության, պետութ-

¹ Տե՛ս Джин Л. Коэн, Андрей Арато, Гражданское общество и политическая теория, М., 2003, էջ 62.

² Տե՛ս Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, նշված աշխատությունը, էջ 70.

յան կողմից կենսապայմանների բարելավման, ֆորմալ առումով հանդես են գալիս որպես սուբյեկտիվ իրավունքներ, մինչդեռ կարող էին ընդգրկվել պետության խնդիրները սահմանող հոդվածում: Ինչևէ, նման ձևակերպումները չեն կարող իրավունքների խախտման հիմք հանդիսանալ, ունեն միայն ձևական, սակայն իրավական ակտի համակարգավածության առումով կարևոր նշանակություն:

Իշխանությունների տարանջատման (բաժանման, զսպումների ու հակակշիռների) սահմանադրական մեխանիզմները

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված է. «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա»: Չկա ազատություն առանց օրենքի, և իշխանության բաժանումը երեք ճյուղերի միջև կոչված է երաշխավորելու այդ ազատությունը¹: Չանդրադասնալով իշխանությունների տարանջատման գաղափարի ծագման պատմությանը՝ նշենք միայն, որ այն իրավական պետության հենքն է հանդիսանում, միայն այս սկզբունքի գործադրման պայմաններում կարող է ձևավորվել քաղաքացիական հասարակություն, այս կառուցակարգում է առավելագույնս երաշխավորված մարդու իրավունքների պաշտպանությունը: Իշխանությունների տարանջատումը չպետք է ընկալել սոսկ որպես լիազորությունների բաշխում: Սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ հակակշիռների ու զսպումների համակարգի միջոցով իշխանությունների ստատիկ տարանջատմանը դինամիկ բնույթ է հաղորդվում²: Մինչ սահմանադրական փոփոխությունները, Հայաստանի կառավարման ձևի համեմատությունը հետխորհրդային մյուս երկրների հետ ցույց էր տալիս, որ Հայաստանի նախագահի սահմանադրական դիրքն ամենաուժեղն էր: Այս առումով ՀՀ Սահմանադրությունը հիշեցնում էր Աֆրիկյան մի շարք երկրների Սահմանադրություններ (Անգոլա, Մադագասկար և այլն), որտեղ հանրապետության նախագահը միանձնյա նշանակում և ազատում է վարչապետին և իր հայեցողությամբ կարող

¹ Տե՛ս T. Torosyan, Role of the constitutional processes in post-soviet transforamation, Конституционное правосудие в новом тысячелетии, (Альманах), Ер., 2005, էջ 131.

² Տե՛ս Գ. Հարությունյան, նշվ. աշխատությունը, էջ 194.

է լուծարել պառլամենտը¹: Այս առումով կառուցողական և էական նշանակություն ունեն սահմանադրական փոփոխությունները, որոնք վերաբերում են ՀՀ նախագահի, ԱԺ-ի և կառավարության ինստիտուտներին: Կարծում ենք՝ նախագահի որոշ լիազորությունների կրճատումը չպետք է պարզապես ընդունել որպես անհրաժեշտություն կիսանախագահական կառավարման ձևի համար: Այլ դրանք պետք է դիտարկել հենց որպես զսպումների և հակակշիռների մեխանիզմների հստակեցմանն ուղղված քայլ, իշխանության երեք թևերի անկախության ապահովման երաշխիք: Այսպես, եթե մինչ փոփոխությունները տպավորություն էր ստեղծվում, որ հանրապետության նախագահը փաստացիորեն գլխավորում է գործադիր իշխանությունը, ապա այժմ ապահովվում է գործադիր իշխանության համեմատաբար անկախություն՝ ապահովելով ինստիտուտ - գործառույթ – սկզբունք շրթայի գործադրումը: ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Հանրապետության նախագահը ԱԺ-ում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին»: Հաշվի առնելով մեր քաղաքական ռեալիզմի պայմանները՝ կարծում ենք, որ «փոքրամասնության կառավարության» հնարավորությունը անիմաստ կլիներ, և նեգատիվ մեծամասնություն երբեք էլ գոյություն չէր ունենա, ուստի, սահմանադրական վերոնշյալ նորմը պարզորոշ սահմանում է ԱԺ – կառավարություն համագործակցության քաղաքական հենքը: Գործադիր իշխանության անկախության ապահովման երաշխիքներից են նաև այն դրույթները, որոնց համաձայն, կառավարության կառուցվածքը սահմանվում է օրենքով, կառավարության նիստերը վարում է վարչապետը:

Օրենսդիր իշխանության ոլորտում իրականացված փոփոխությունները ԱԺ-ին են վերապահում մարդու իրավունքների պաշտպանի ընտրության, հեռարձակվող լրատվության միջոցների անկախ կարգավորող մարմնի անդամների ընտրության, կենտրոնական բանկի նախագահի և գլխավոր դատախազի նշանակման, վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի հաստատման և պալատի նախագահի նշանակման լիազորությունները: Ինչ խոսք, մնան և այլ լիազորություններով օժտված ներկայացուցչական ժողովրդավարության կառույցը երաշխիք է հասարակական ու պետական առաջընթացի համար: Այս հարթությունում միայն անհասկանալի է 74.1 հոդվածի առաքելությունը, որը, թվում է, թե պետք է լուծեր կարևորագույն խնդիր՝ ԱԺ արձակման՝ նախագահի լիազորությունների

¹ Տե՛ս Վ. Պողոսյան. Հ. Թովմասյան, նշվ. աշխատությունը, էջ 19.

հստակ սահմանման հարցը, սակայն հողվածի վերլուծությունը չի հանգեցնում որևէ կոնֆլիկտային, պայթյունավտանգ իրավիճակի հարթման մեխանիզմի պարզաբանման: Հետևություն է արվում, որ հանրապետության նախագահը օրենսդիր մարմինը կարող է արձակել միայն վերջինիս «բացահայտ անգործության» դեպքում:

Էսկանորեն կրճատվել են հանրապետության նախագահի լիազորությունները, որոնք տարածվում էին դատական իշխանության վրա: Հենց միայն արդարադատության խորհրդի կազմավորման և կառուցվածքի դրույթների փոփոխությունը լուրջ երաշխիք է իշխանության այս թևի անկախության ապահովման համար, ինչն էլ իր հերթին նախադրյալ է իրավապաշտպան գործառույթի առավելագույնս հստակ իրականացման համար: Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ իշխանությունների բաժանման սկզբունքի իրագործման համար նշանակալից փոփոխություններ են կատարվել, իշխանության յուրաքանչյուր թևի լիազորությունների հստակեցումը և հարաբերական անկախության ապահովումը լուրջ երաշխիք են հակակշիռների համակարգի գործարկման համար, քանի որ իշխանության յուրաքանչյուր ճյուղ իր լիազորություններն իրականացնում է այնքանով, որքանով չի խախտում իշխանության մյուս թևի հարաբերական անկախությունը, միաժամանակ, իշխանության թևերը (հատկապես գործադիր և օրենսդիր, քանի որ դատական իշխանությունը հանդես է գալիս առավել ինքնուրույն հարթությունում) գործում են փոխկապակցված և փոխալայմանավորված, այս դեպքում սահմանված զսպումների նորմերը (օրինակ՝ հողվ. 75-րդի 4-րդ մասը) ձևավորում են իմունային համակարգ, որը թույլ է տալիս ապահովելու բնականոն զարգացում:

Սահմանադրական արդարադատությունը՝ որպես Սահմանադրության գերակայության ապահովման երաշխիք

Որպեսզի պաշտպանված լինեն մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները, որպեսզի պետությունը կայանա բաժանված և հավասարակշռված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությամբ, անհրաժեշտ է նախ ապահովել վերոգրյալը սահմանող և երաշխավորող Սահմանադրության գերակայությունը, դրա դրույթների անշեղ կատարումը, պետության և հասարակության համապատասխան գործելակերպը: Սահմանադրության գերակայության ապահովումը (պայմանականորեն) կարելի է հասկանալ երկու իմաստով: Լայն առումով՝ այն Սահմանադրության կիրարկումն

է կյանքի բոլոր ոլորտներում: Հողված 49-ի երկրորդ մասում սահմանվում է, որ հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, այսինքն՝ հանդիսանում է Սահմանադրության գերակայության երաշխավոր, այս դրույթը արտացոլումն է Շ. դը Գոլի համապատասխան մեկնաբանման¹: Նեղ իմաստով՝ Սահմանադրության գերակայության ապահովումը, կարծում ենք, կարելի է հասկանալ հենց սահմանադրական արդարադատությունը, որի միջոցով իրականացվում է սահմանադրական վերահսկողություն: Փաստորեն՝ սահմանադրական վերահսկողությունը դառնում է քաղաքացիական հասարակության և իրավական պետության առանցքային տարրերից մեկը: Սահմանադրական վերահսկողությունը հանդես է գալիս «զսպումների և հակակշիռների» ոլորտում, իսկ դրա գլխավոր խնդիրը հանդիսանում է խախտված սահմանադրական հավասարակշռության մշտական, անընդհատ և համակարգային հայտնաբերումը, գնահատումը և վերականգնումը: Սահմանադրական վերահսկողությունը չի թույլատրում գործառնական խախտումների իռացիոնալ վերարտադրություն կամ բացասական հասարակական էներգայի կուտակում, որը կրիտիկական զանգվածին հասնելուն պես կարող է պայթյունի միջոցով հանգեցնել նոր որակի: Գործնականում սա ընտրություն է դինամիկ, էվոլյուցիոն կամ հեղափոխական զարգացման մեջ²: ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը»: Վերջինս, առանձին լինելով ընդհանուր իրավասության դատարանների համակարգից, նեղ իմաստով Սահմանադրության գերակայության երաշխավորն է:

Մինչ սահմանադրական հանրաքվեն խիստ սահմանափակ էր Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակը: Համաձայն 101-րդ հոդվածում կատարված փոփոխությունների՝ ի հավելումն նախկին սուբյեկտների, Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակը էականորեն ընդլայնվեց: Իհարկե, հոդվածի կարևորագույն փոփոխությունը անձին սահմանադրական իրավունակությամբ օժտելն է, ինչը ևս մեկ երաշխիք է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը կարող է և պետք է գործուն օղակ լինի Սահմանադրության պահպանման և սահմանադրականության

¹ St'u A. Медушевский, Кельзеновская модель конституционного правосудия, Конституционное правосудие в посткоммунистических странах: (сборник докладов) М., 1999.

² St'u Գ. Հարությունյան, նշվ. աշխատությունը, էջ 238.

զարգացման հարցերում, իսկ սահմանադրական արդարադատության իրականացումը պետք է նպաստի երկրի կայունության ապահովմանը, անձի իրավական հաստատուն կարգավիճակի պահպանմանը:

Եզրափակիչ մաս

ՀՀ Սահմանադրությունը՝ որպես միասնական փաստաթուղթ, որտեղ սահմանված են պետության կառույցի, պետության և անհատի հարաբերությունների կարգավորման կառուցակարգային նորմերը, մեր իրավական համակարգի հիմքը և մեր պետության գոյության երաշխիքն է հանդիսանում: Սահմանադրությունում սահմանված նորմ-սկզբունքների կյանքի կոչման համար ամրագրվում են նաև մեխանիզմներ և երաշխիքներ, որոնք ապահովում են առաջինների իրագործումը: Մեզ համար կարևոր և առաջընթացային քայլ էին Սահմանադրությունում կատարված փոփոխությունները, որոնք արդարացիորեն կարելի է հիմք համարել սահմանադրականության կայացման համար: Արդեն սկսված ճյուղային օրենսդրությունների համապատասխանեցումը այդ փոփոխությունների ակնհայտ արձագանքն է: Սակայն Սահմանադրության դրույթների անշեղ կատարման համար անհրաժեշտ է, բայց ոչ բավարար ներսահմանադրական հակասությունների վերացումը: Կարծում ենք՝ այս հարցում նշանակություն ունի նաև հասարակության, իշխանության ներկայացուցիչների և յուրաքանչյուր անհատի վերաբերմունքը, իրավագիտակցության մակարդակը, ի վերջո՝ պատրաստակամությունը՝ հարգելու Սահմանադրությունը, կրելու իրեն իսկ վերապահված իրավունքները: Ուստի, որպեսզի Սահմանադրությունը պետության-իշխանության հիմնական օրենքից վերածվի քաղաքացիական հասարակության հիմնական օրենքի, անհրաժեշտ է այդպիսի հասարակության կայացած լինելը, անհատների ինքնակառավարվելու ցանկությունը: Կարծում ենք՝ կարևոր նշանակություն ունի նաև տեղական ինքնակառավարման ինստիտուտի կայացումը: Սահմանադրական արդարադատության հիմքերի ամրապնդումը իր հերթին կնպաստի Սահմանադրության ընկալմանը, իհարկե նաև սահմանադրական դրույթների կիրառմանը և դրանց գերակայության ապահովմանը:

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրությունը, կատարված փոփոխություններով, ոչ միայն հռչակում է իրավական պետության գաղափարը, այլև մեխանիզմներ է գործարկում և երաշխիքներ է սահմանում դրա իրականացման համար: Կատարյալ չլինելով հանդերձ՝ Սահմանադրությունը տալիս է հնարավորություն՝ ապահովելու իրավունքի գերակայությունը, պաշտպանելու մեր իրավունքները և կառավարվելու հավասարակշռված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների կողմից:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 5-րդ հուլիսի, 1995 թ. (27-րդ նոյեմբերի 2005 թ. փոփոխություններով)
2. Ն. Ա. Այվազյան, Ա. Ն. Այվազյան, Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Ե., 2005
3. Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Ե., 2005
4. Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը. համառոտ պարզաբանումներ, Ե., 2005
5. Энциклопедия Конституционное правосудие, Ер., 2004
6. Джин Л. Коэн, Андриу Арато, Гражданское общество и политическая теория, М., 2003
7. Ուսումնասիրություն ՀՀ իրավունքի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին համապատասխանության մասին, Ե., 2001
8. Ն. Ա. Այիյան, Ա. Հ. Պետրոսյան, Իրավական պետություն և օրինականություն, Ե., 2001
9. Վ. Ս. Ներսիսյան, Յիվիլիզմի մանիֆեստը, Ե., 2001
10. Վ. Պողոսյան, Սահմանադրական հասկացությունների համառոտ բառարան, Ե., 2001
11. Կայուն զարգացման սահմանադրական երաշխիքները (Կլոր սեղանի նյութեր), Ե., 2005
12. Конституционное правосудие в новом тысячелетии, (Альманах), Ер., 2005
13. Конституционное правосудие в посткоммунистических странах: (сборник докладов) М., 1999

Ներածություն

Սահմանադրությունը այնպիսի նորմատիվ ակտ է, որը պետության ողջ իրավական համակարգի նորմերի նկատմամբ ունի բարձրագույն իրավաբանական ուժ և կոչված է կարգավորելու մի կողմից մարդու և հասարակության, մյուս կողմից՝ մարդու և պետության միջև հարաբերությունները, ինչպես նաև հենց իր՝ պետության կազմակերպման հիմունքները¹:

Սահմանադրությունը մարդկությանը հայտնի է դարձել ավելի ուշ, քան օրենքներն ու մյուս իրավական ակտերը: Շատ պետություններում չեն եղել և այսօր էլ չկան Սահմանադրություններ, օրինակ, Օմանում երկրի հիմնական օրենքին փոխարինում է Գուրանը: Օրենքներն ու մյուս իրավական ակտերը մարդկության կողմից օգտագործվել են դեռևս մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներում: Մեզ հայտնի առաջին օրենքների ժողովածուն Շումերական պետության թագավոր Ուր-Նամուի ժողովածուն է (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ)²:

Սահմանադրությունը լատիներեն *constitutio* (հաստատել, հիմնադրել, կազմակերպել, կարգավորել, սահմանել, կառուցվածք) բառից է: Հայերենում, սակայն, այն գործածվել է այլ իմաստով: Այսպես, հայերենում «սահման» նշանակում է վերջ, ծայր, չափ, կանոն, օրենք, այսինքն՝ «սահման» և «դնել»: Շ. Շահամիրյանը 1773-1788 թթ. Սահմանադրությունը անվանեց «Որոգայթ փառաց», որն ուղղված էր իշխանության սահմանափակմանը և փառասերների զսպմանը, ինչը հանդիսանում է նաև ժամանակակից Սահմանադրության գլխավոր տարրը³: Սահմանադրությունը ընդունվում է, երբ գիտակցվում է դրա անհրաժեշտությունը, երբ մարդկանց գիտակցական մակարդակը հասնում է դրան:

Պետությունը և հասարակությունը իրենց փոխհարաբերություններում անցնում են բավականին բարդ և դժվարին զարգացման ճանապարհ, աստիճանաբար ձեռք են բերում քաղաքակիրթ որակներ, ժողովրդավարական բնույթ: Այդ փոխհարաբերություններում վերջին հաշվով գլխավոր դերակատարը հասարակությունն է, որը հավասարակշռում է պետությանը, պայմանավորում նրա բնույթը: Հասարա-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2003, էջ 7.

² Տե՛ս Ա. Այվազյան, Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Եր., 2005, էջ 103.

³ Նույնը՝ էջ 30.

կության և պետութեան դարավոր շարժումը դեպի ժողովրդավարություն, քաղաքակրթություն, հանգեցնում է նրան, որ ձևավորվում է քաղաքակիրթ, ժողովրդավարական կամ այլ կերպ ասած՝ քաղաքացիական հասարակություն, որին համապատասխանում է զարգացած, ժողովրդավարական, իրավական պետությունը: Ժողովրդավարական Սահմանադրություններում ամրագրվում է, որ դրանք ընդունվում, փոփոխվում են ժողովրդի կողմից և ի շահ նրա:

Սահմանադրությունը կարելի է համարել հասարակական պայմանագիր, դաշինք, որն արտահայտում է ժողովրդի բարձրագույն կամքը:

Պետություն-Սահմանադրություն փոխհարաբերությունն իր հիմքում ունի «մարդ»-«հասարակություն»-«պետություն» կապերը, որտեղ գերակայությունը պատկանում է առաջինին¹: Պետական իշխանության, քաղաքացիական հասարակության և մարդու ազատությունների միջև հավասարակշռության հաստատումը Սահմանադրության ողջ իմաստն է:

Քաղաքացիական հասարակությունը կազմված է ազատ անհատներից, որոնք իրենց շահերը իրականացնում են բոլորի համար հավասար և ընդհանուր օրենքի շրջանակներում: Անհատի ազատությունը այդ հասարակությունում երաշխավորված է և՛ տնտեսական (ունի սեփականության իրավունք), և՛ քաղաքական (լինել որևէ հասարակական կազմակերպության անդամ), և՛ անձնական (ինքնուրույն կենսագործունեություն) առումներով: ՀՀ-ում ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը, ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: ՀՀ-ում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը (ՀՀ Սահմ. 7-րդ, 8-րդ հոդվ.):

Քաղաքացիական հասարակությունը ունի ինքնակառավարման ներուժ, որի հետևանքով հասարակությունը դառնում է պետությունից անկախ, նվազագույնի է հասցվում պետության միջամտությունը հասարակության գործերին: Քաղաքացիական հասարակությունը բաց, իրավական, ժողովրդավարական հասարակություն է: Այդտեղ մարդը և նրա իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են: Դա էլ պայմանավորում է քաղաքացիական հասարակությանը բնորոշ պետության էությունը և ձևը: Պետությունն այստեղ իր ձևով իրավական է, իսկ էությանը՝ քաղաքացիական համերաշխության և ընդհանուր բարեկեցության միջոց: Պետական իշխանությունը կոչված է երաշխավորելու հասարակության քաղաքակիրթ գոյությունը և զարգացումը:

Ժողովրդավարական պետությունը, որը հանդիսանում է մարդու երաշխավորված ազատության հիման վրա կառուցված քաղաքացիական հասարակության կարևորագույն տարրը, խնդիր ունի օգնել այդ ինքնա-

¹ Տե՛ս Ա. Այվազյանի նշված աշխատությունը, էջ 110.

կառավարվող համակարգի ներդաշնակ գործունեությանը և հնարավորին չափ ձեռնպահ մնալ նրա գործունեությանը միջամտելուց: Դրա համար ամեն մի ժողովրդավարական պետության Սահմանադրությամբ պետք է որոշվեն հասարակության ինքնակառավարմանը պետական միջամտության օպտիմալ սահմանները, որպեսզի նման միջամտությունը չկարողանա վնաս պատճառել քաղաքացիական հասարակության շրջանակներում գործող ինքնակառավարման ինստիտուտներին ու մեխանիզմներին¹:

Նկարագրական մաս

Խորհրդային միության փլուզման արդյունքում Հայաստանն իրեն հռչակեց ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն, որը ճանաչում էր համամարդկային արժեքները: Իրավական պետության և իշխանությունների բաժանման տեսությունների աճող մասսայականությունը խթան հանդիսացան մեր հասարակության սահմանադրական բարեփոխումների և օրենսդրության նորացման համար: ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումներն սկսվեցին 1992 թ. սկզբներին և իրենց բարձրակետին հասան 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ (դա թվով 4-րդ Սահմանադրությունն էր 1922, 1937, 1978 թթ. Սահմանադրություններից հետո):

Տարերայնորեն սկիզբ առած սահմանադրական բարեփոխումների վնասակար հետևանքներից խուսափելու համար 1993 թ. մարտին ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի նախաձեռնությամբ հրավիրվում է գիտապրակտիկ համաժողով՝ «ԱՊՀ մասնակից պետություններում սահմանադրական բարեփոխումների մասին» թեմայով, որտեղ մասնակիցները հանգում են միասնական եզրակացության՝ սահմանադրական բարեփոխումը պետք է իրականացվի գիտական հայեցակարգի և ծրագրի հիման վրա, առանձին փուլերով և ակնկալի հասարակության պաշտպանությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում հասարակության մեջ Սահմանադրության դերի հարցին:

Սահմանադրությունը բարդ հասարակական երևույթ է, որը կարող է էական ազդեցություն ունենալ ինչպես երկրի կյանքի վերընթաց գարգացման, այնպես էլ այդ գարգացումը խոչընդոտելու, հետ պահելու գործում: Պակաս կարևոր չէ Սահմանադրության էության բացահայտումը: Դրա համար նախ և առաջ պետք է պարզել, թե ինչու և ինչի համար է ստեղծվում Սահմանադրությունը:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2005, էջ 42.

Այդ կապակցությամբ տարբերում են 2 մոտեցում՝ մարքսիստական և, այսպես կոչված, Սահմանադրության արևմտյան հայեցակարգը: Սահմանադրության էության վերաբերյալ մարքսիստական ուսմունքը ելնում է Սահմանադրության դասակարգային բնույթից: Այսինքն՝ ցանկացած երկրի Սահմանադրություն հանդիսանում է դասակարգային պայքարի արդյունք՝ որպես գործիք, որի օգնությամբ այս կամ այն դասակարգը ամրապնդում է իր քաղաքական գերիշխանությունը: Այդ պայքարում Սահմանադրությունները և մյուս օրենքները ինքնաբերաբար հարմարվում են հասարակության տնտեսական հիմքին՝ արտահայտելով նրանում գոյություն ունեցող ուժերի իրական հարաբերակցությունը: Ի հակադրություն մարքսիստական տեսության՝ Սահմանադրության վերաբերյալ արևմտյան գաղափարախոսությունը ամբողջովին ժխտում է Սահմանադրության դասակարգային բնույթը և այն համարում ժողովրդի շահերի արտահայտություն, քաղաքական և իրավաբանական բարձր մակարդակի համաձայնության արդյունք¹:

Սահմանադրությունը պետության օրենսդրության, իրավունքի ողջ համակարգում զբաղեցնում է գերակայող դիրք: Սահմանադրության կողմից կարգավորվող հասարակական հարաբերություններն ունեն առանձնակի կարևորություն: Սահմանադրությունը ընդունվում է ժողովրդի կողմից, նրա անունից: Ժողովրդավարական պետություններում ժողովուրդը ինքնիշխանության կրողը և իշխանության սիակ աղբյուրն է: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ «ՀՀ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»: Պետական իշխանությունը ժողովրդի կամքի արտահայտման, դրսևորման բարձրագույն ձևն է:

Սահմանադրությունը կարծես թե հիմնադրում է պետության հիմնական ինստիտուտները, առաջին հերթին մարդու իրավական վիճակը՝ դրանով իսկ ազդելով ամբողջ իրավաստեղծ գործունեության բովանդակության վրա: Սահմանադրական շինարարության համաշխարհային փորձը առաջադրել է Սահմանադրությունների տարբեր մոդելներ, որոնք տարբերվում են իրենց ձևով, կառուցվածքով, ծավալով և այլ առանձնահատկություններով, որոնք արդյունք են սոցիալ-քաղաքական, տնտեսական, ազգային և այլ հանգամանքների տարբերության: Այսպես, Ֆրանսիայի 1958թ. Սահմանադրությունում չկա մարդու իրավունքների գլուխ, հղում է արվում 1789թ. «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրին» և 1946թ. Սահմանադրության նախաբանին, իսկ Իտալիայի 1947թ. Սահմանադրությունը այդ հարցին մեծ տեղ է հատկացնում: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական ամրագրման կարևորությունը իր արտահայտությունն է գտել նշված հռչակագրում. «Հասարակությունը,

1 Տե՛ս Ն. Այվազյանի նշվ. աշխատությունը, էջ 19-20.

որտեղ ապահովված չեն իրավունքների երաշխիքները և չկա իշխանությունների բաժանում, չունի Սահմանադրություն»¹:

Սահմանադրության գլխավոր առաքելությունն է մարդու իրավունքների ամրագրման ու դրանց ապահովման վերաբերյալ համապատասխան իրավական երաշխիքներ ստեղծելու ճանապարհով որոշել պետական իշխանության ծավալման թույլատրելի սահմանները և կանխել բոլոր տեսակի հնարավոր չարաշահումները:

Բացի պոզիտիվ իրավունքից՝ գոյություն ունի նաև բնական իրավունք, ըստ որի, բոլոր մարդիկ ունեն միատեսակ բնական պահանջներ և ի բնե հավասար են: Այդ պատկերացումները մշտնջենական արժեքների ոլորտում են և հանդիսանում են իրավունքի ցանկացած համակարգում ժողովրդայնության գլխավոր չափանիշը: Մարդու բնական և անօտարելի իրավունքների զաղափարը ելնում է նրանից, որ, հիմնադրելով պետություն, պետական իշխանություն, մարդիկ օտարում են նրա օգտին իրենց բնական ազատությունների որոշ մասը և այդ սահմաններում պարտավորվում են ենթարկվել իրենց ստեղծած պետական իշխանությանը: Եթե պետությունը պարտավոր է երաշխավորել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ապա յուրաքանչյուր քաղաքացի իր հերթին պատասխանատու է իր պետության հեղինակության, նրա հզորության և անվտանգության ապահովման համար:

«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» (ՀՀ Սահմ. հոդվ. 3):

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական ամրագրումը ոչ մի արժեք չունի, եթե չկան իրականացման համար պայմաններ: Իրավունքն առանց պաշտպանության հռչակագրային իրավունք է: 2005 թ. նոյեմբերի 27-ին Սահմանադրությունում կատարված փոփոխություններով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական մեխանիզմները լրացվեցին նոր դրույթներով: Դրանք են՝

ա) յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը (Սահմ. հոդվ. 18).

¹ Նույնը՝ էջ 12.

բ) յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին (Սահմ. 18-րդ հոդվ.).

գ) յուրաքանչյուր ոք կարող է դիմել Սահմանադրական դատարան՝ կոնկրետ գործով՝ վիճարկելով իր նկատմամբ կիրառված ակտի սահմանադրականությունը (Սահմ. հոդվ. 101):

Վերջին տարիներին միջազգային հանրությունը մեծ առաջընթաց է գրանցել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Ամրապնդվում են առկա միջազգային ընթացակարգերը, աճում է մարդու իրավունքների ոլորտում առկա միջազգային հիմնարար փաստաթղթերը ստորագրած և վավերացրած պետությունների թիվը, զարգանում են ժողովրդավարական ինստիտուտները պետության ներսում: Այսօր մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներով զբաղվում են հասարակության և պետության բոլոր խավերը՝ պետական կառավարման մարմինները, գործարար աշխարհը, քաղաքացիական հասարակությունը¹:

Հայաստանի Հանրապետությունը, միանալով միջազգային պայմանագրերին, ստանձնում է նոր պարտականություններ: Մեր երկիրը մարդու իրավունքների ոլորտում աննախադեպ պարտավորություններ ստանձնեց Եվրոպայի խորհրդին անդամակցելով: ՀՀ-ն հստակ ժամանակացույցով պարտավորվում էր ստորագրել և վավերացնել մի շարք կոնվենցիաներ և դրանց արձանագրություններ, կատարել որոշակի բարեփոխումներ ներպետական օրենսդրության ոլորտում: Դրանով էր թելադրված 2005 թ. սահմանադրական փոփոխությունների որոշ մասը (օմբուդսմենի ինստիտուտի ամրագրումը, դատավորների անկախությունը, տեղական ինքնակառավարման համակարգի փոփոխությունները և այլն)²: Պետությունը՝ հանձինս իր մարմինների, պարտավոր է օգտագործել բոլոր հնարավոր միջոցները, ներառյալ օրենսդրական, վարչական, դատական, տնտեսական, սոցիալական, որպեսզի իրականացնի իր պարտավորությունները քաղաքացիների հանդեպ: Այստեղից ենթադրվում է պետության հիմնական պարտավորություններից մեկը՝ ստեղծել այնպիսի փաստացի և իրավական երաշխիքներ, որոնք յուրաքանչյուրի համար հնարավորություն կընձեռեն կենսագործելու իր իրավունքներն ու ազատությունները:

Պետության ողջ իրավական համակարգն, ըստ էության, ենթակա է պաշտպանության: Սահմանադրությունը՝ որպես հիմնական օրենք, պահանջում է հատուկ իրավական պաշտպանություն, որը կոչված է սպառնալից դրա անխափան իրացումը, կանխել ոտնահարումը: Հատուկ պաշտ-

¹ Տե՛ս Վ.Սարգսյան, Կ. Խյուֆներ, Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և հայաստանյան ընթացակարգեր, Եր., 2003, էջ 9.

² Տե՛ս նույն տեղում, էջ 128-132.

պանության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Սահմանադրությունն ամրագրում է տվյալ հասարակության կենսագործունեության առավել կարևոր ոլորտների վերաբերյալ հիմնարար սկզբունքներ ու կանոններ, որոնք արտահայտում են այդ ոլորտներում տարբեր սոցիալ-քաղաքական ուժերի միջև առկա փոխհամաձայնությունը: Սահմանադրության ամեն մի նորմի խախտում կարող է հանգեցնել հասարակության տարբեր խավերի ու շերտերի, քաղաքական տարբեր ուժերի հավասարակշռության խախտման, որի արդյունքում երկիրը կարող է հայտնվել անօրինության վիճակում: Սահմանադրության պաշտպանությունը պետական ու ոչ պետական մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների, քաղաքացիների խնդիրն է ու պարտականությունը:

Սահմանադրական իրավունքին հայտնի է նաև, այսպես կոչված, «Սահմանադրության ինքնապաշտպանության» ինստիտուտը: Դրա իմաստն այն է, որ Սահմանադրությունն ինքն ամրագրում է ամբողջ ժողովրդի համար առավել կարևորություն ունեցող հասարակական հարաբերություններ կարգավորող որոշ նորմերի անփոփոխելիությունը: Այսինքն՝ այդ նորմերը ենթակա չեն փոփոխության նաև այն դեպքում, երբ հակասում են միջազգային պայմանագրերի նորմերին: Այսպես՝ ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ նրա 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն: Այդ նորմերը վերաբերում են ՀՀ պետական ձևին և ժողովրդահիշխանության սկզբունքներին: Նույն ձևով փոփոխման ենթակա չեն ՌԴ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 9-րդ գլուխները¹:

Եզրափակիչ մաս

Սահմանադրությունն իր էության և բովանդակության բնորոշ գծերով՝ որպես հասարակական երևույթ, հանդիսանում է մարդկության խոշորագույն հայտնագործություններից մեկը: Նրանում իրենց իրավական ամրագրումն են ստանում հասարակության բոլոր ժողովրդավարական նվաճումներն ու մարդկանց ապրելակերպի համընդհանուր կանոնները: Դրա հետ մեկտեղ հասարակական կյանքը ապրում է անընդհատ վերընթաց զարգացում, որը օբյեկտիվորեն պահանջում է նրա կյանքը կարգավորող իրավական ինստիտուտների, նորմերի ու կանոնների փոփոխում ու կատարելագործում, որոնք իրենց ամրագրումն են ստացել առավելապես Սահմանադրություններում: Միաժամանակ, յուրաքանչյուր նորամուծություն իր հետ բերում է բազմաթիվ և բազմաբնույթ նոր խնդիրներ, որոնց արդյունավետ լուծման և հաղթահարման համար պետք է պատրաստ լինել: ՀՀ պետական իշխանության և

¹ Տե՛ս Ա. Այվազյանի նշված աշխատությունը, էջ 179.

հասարակության առջև ծառայած ներկայիս խնդիրների լուծման համար պետք է կայացնել և զարգացնել քաղաքացիական հասարակությունը, ամրապնդել և արդյունավետ օգտագործել հասարակության ներուժը:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է սահմանադրական պետություն և քաղաքացիական հասարակություն կառուցելու սկզբնական փուլում: 1995 թ. ՀՀ Սահմանադրության ընդունումը հիմնարար նշանակություն ունեցավ հանրապետության իրավական համակարգի ստեղծման համար: Այն ամփոփեց նախորդ տարիներին հանրապետությունում ծավալված պետական շինարարության փորձը և ամրագրեց պետական իշխանության կազմակերպման և ժողովրդաիշխանության իրականացման հիմնական սկզբունքները: ՀՀ Սահմանադրության հիմքում դրված են ժողովրդավարական սկզբունքներ: Եթե Սահմանադրությունն ընդունվում է հանրաքվեի միջոցով, արդեն իսկ նշանակում է, որ այն հասարակական համաձայնության արդյունք է: Այդ միտքն ամփոփված է մեր Սահմանադրության նախաբանում, որտեղ, մասնավորապես, ասվում է, որ Սահմանադրության ընդունման նպատակներն են ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավատարմությունը համամարդկային արժեքներին: Իսկ պետական իշխանության երեք թևերի մարմինների իրավական վիճակի սահմանումը, ինչպես նաև քաղաքացիների լայն իրավունքների ու ազատությունների ամրագրումը ինքնըստինքյան վկայությունն են այն բանի, որ Սահմանադրությունը հստակ կերպով սահմանում է պետական իշխանության կողմից քաղաքացիական հասարակության գործերին միջամտելու շրջանակները: Դրանում էլ արտահայտվում է ՀՀ Սահմանադրության ժողովրդավարական էությունը:

Միևնույն ժամանակ, Սահմանադրությամբ ամրագրված շատ հիմնահարցեր (քաղաքացիական հասարակության ձևավորում, մարդու իրավունքների գերակայություն, իշխանության պատկանելի ժողովրդին, պետության իրավական, սոցիալական, ժողովրդավարական բնութագրերը) աշխարհայացքային սկզբունքներ են, որոնց կենսագործումը պահանջում է ժամանակ և համապատասխան իրավագիտակցության ձևավորում¹:

Չնայած քաղաքացիական հասարակության մոդելի սահմանադրական ամրագրմանը՝ այն մեզանում դեռևս չի ձևավորվել: Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացումը ռազմավարական խնդիր է, որի լուծումը, սակայն, երկար ժամանակ է պահանջում: Դրա համար անհրաժեշտ է և՛ հասարակության, և՛ պետական իշխանության

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական իրավունք, պատ. խմբ Ն. Ա. Այվազյան, ԵՊՀ իրատ., Երևան, 2005, էջ 181.

քրտնաջան, խելամիտ, նպատակաուղղված գործունեություն: Ներկայիս բարեփոխումները տանում են դեպի քաղաքացիական հասարակության կայացում, բայց դրանք կենսագործելու համար պետք է հասարակական և անհատական իրավագիտակցության բարձրացում, ազգային քաղաքականության մշակում և իրականացում:

Մարդկային քաղաքակրթության դարավոր պատմական փորձը վկայում է այն մասին, որ անհատի, հասարակության առաջադիմական զարգացման, մարդու իրավունքների և արժանապատիվ կյանքի կարևորագույն երաշխիքներից է հանրային կառավարման կողմնորոշումը դեպի մարդը և հասարակությունը: Ժողովրդավարական գործընթացների իրագործման դերակատարը իր իրավունքներին իրագեկ և գիտակից, ազատ և ստեղծագործ անհատն է: Պակաս կարևոր չէ ժողովրդի կողմից իր շահերի պաշտպանության մեխանիզմներին և ընթացակարգերին ծանոթ լինելը, գիտակցելը և հանուն իր իրավունքների պաշտպանության պայքարելը, քանի որ մարդկային արժանապատվությունը և հավասար ու անօտարելի իրավունքներն աշխարհի ազատության, արդարության ու խաղաղության հիմքն են, դրանց համընդհանուր ըմբռնումը կարևորագույն նշանակություն ունի քաղաքացիական հասարակության կայացման գործում:

Մեր հանրապետության բնակչությունը դեռևս չի հասել ազատության ու կարգապահության փոխկապակցվածության ընկալման գիտակցությանը, ուստի, դեռևս զգացվում է հասարակության նկատմամբ պետության կարգավորիչ դերի անիրաժեշտությունը: Սակայն ժամանակի ընթացքում, երբ կհաղթահարվեն հակահասարակական բացասական երևույթները և երկրում կստեղծվի ճշմարիտ քաղաքացիական հասարակություն, պետության կարգավորիչ դերն աստիճանաբար կնվազի և հասարակական կյանքի մի շարք ոլորտներում իրավական կարգավորումը իր տեղը կգիջի ինքնակարգավորմանը և ազատ մարդկանց նախաձեռնությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 1995 թ. (առանց փոփոխությունների և փոփոխությունների)
2. Ա. Այվազյան, Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Երևան, 2005
3. Վ. Մարգարյան, Կ. Խյուֆներ, Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և հայաստանյան ընթացակարգեր, Երևան 2003
4. ՀՀ Սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2003

Ներածություն

Ցանկացած պետության կայունության երաշխիքն է տվյալ երկրի հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը:

Վերջին հարյուրամյակների ընթացքում համակարգային կայունության երաշխավորի դերը գերազանցապես վերապահվեց պետության Հիմնական օրենքին՝ «գրված» Սահմանադրությանը, որն, ամրագրելով կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջականությունից բխող նպատակներն ու հասարակական կեցության հիմնարար սկզբունքները, սահմանում է հասարակական վարքագծի հիմնական կանոնները, անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը, իշխանության իրականացման կարգն ու սահմանները՝ հասարակական համաձայնությամբ անհրաժեշտ միջավայր ստեղծելով մարդու ստեղծարար էության լիարժեք դրսևորման և առաջընթացի համար:

Ինչպես հայտնի է՝ «Սահմանադրություն» հասկացությունը (լատիներենում *constitutio*) նշանակում է հիմնել, սահմանել: Սակայն ամեն մի «հիմնում» կամ «սահմանում» «սահմանադրում» կամ «սահմանադրություն» չէ: Վերջինս հիմնականում բնորոշվում է որպես պետության Հիմնական օրենք (օրենքների ամբողջություն), որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Տվյալ օրենքի հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են.

- *պետական կարգի հիմունքները,*
- *մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության երաշխիքները,*
- *պետական իշխանության համակարգը, դրա գործառույթները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,*
- *քաղաքական իշխանության իրականացման և անհատի քաղաքական, տնտեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները:*

Սահմանադրությունը թե՛ պետության և թե՛ հասարակության փաստաթուղթն է, որի հիման վրա հետևություն է արվում, որ Սահմանադրությունը «քաղաքական փաստաթուղթ է»: Սահմանադրության հիմնական բնութագրիչների մեջ առանձնացվում են չորս կարևոր որակներ, որոնց համաձայն, Սահմանադրությունը՝

1. *իրավական ակտ է,*
2. *ունի գերակա բնույթ, բարձրագույն իրավաբանական ուժ,*
3. *հիմք է հանդիսանում ընթացիկ օրենսդրության համար, պայմանավորում դրա բնույթը,*
4. *ունի ընդունման և փոփոխման հատուկ կարգ:*

Հայաստանի Հանրապետությունն իր Սահմանադրությունը չունեցավ առաջին Հանրապետության շրջանում (1918 -1920 թթ.): Իսկ ինչ վերաբերվում է Խորհրդային Հայաստանի երեք Սահմանադրություններին, ապա 1922, 1937 և 1978թթ. ընդունված փաստաթղթերը Հայաստանի Սահմանադրություն կարելի է անվանել միայն բավականին մեծ վերապահումներով: Բացառությամբ այդ Սահմանադրության որոշ դրույթների՝ դրանք ոչնչով չէին տարբերվում խորհրդային հանրապետության Սահմանադրություններից: Այդ իսկ պատճառով, կարծում ենք, որ ՀՀ-ը մինչև 1995թ. հուլիսի 5-ը «ինքնուրույն» Սահմանադրություն չի ունեցել: Սակայն օրենսդիրը, համարելով, որ վերջինս չի համապատասխանում միջազգային նորմերին, 2005թ. նոյեմբերի 27-ին այն արմատապես փոփոխությունների ենթարկեց: Օրենսդրական փոփոխությունը, ինչ խոսք, անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է քաղաքացիական հասարակության կայացման համար՝ ունենալով իր դրական և բացասական կողմերը:

Սույն աշխատանքում կանդրադառնանք Սահմանադրությունում մեզ համար առավել կարևոր և առաջնային հանդիսացող՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխին, նրա այնպիսի առանցքային իրավունքներին, ինչպիսիք են արժանապատվության իրավունքը, կյանքի իրավունքը, անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, անմեղության կանխավարկածը, երկքաղաքացիությունը և վերջիններիս պաշտպանության սահմանադրական երաշխիքները:

Կարծում ենք, որ դրանք մարդու ամենահիմնական իրավունքներն են, և վերջիններիս պաշտպանությունը և իրականացումը քաղաքացիական հասարակության առաջնային և կարևորագույն նախապայմանն է, քանի որ եվրոպական ինտեգրման արդյունքում Սահմանադրությունը, դառնալով վերապետական երևույթ, ոչ թե պետության, այլ քաղաքացիական հասարակության Հիմնական օրենքն է:

Նկարագրական մաս

Ցանկացած ժողովրդավարական պետությունում քաղաքացիական հասարակությունը և իրավական պետությունը տրամաբանորեն լրացնում են միմյանց, և մեկն առանց մյուսի անիմաստ է, ուստի, քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն կերտելու ճանապարհին կարևոր դեր է խաղում երկրի Հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, հատկապես դրա «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլուխը: Բնականաբար, հարց կառաջանա, թե ինչու՞ հատկապես այդ գլուխը:

Ճիշտ է, Սահմանադրությունը համարվում է երկրի հիմնական օրենքը, և վերջինիս բոլոր ինստիտուտները կարգավորում են հասարակական հարաբերությունները, բայց, այնուամենայնիվ, եթե մենք խոսում ենք քաղաքացիական հասարակության մասին, ապա առաջնային շեշտը դրվում է «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների» գլխի վրա: Ահա թե ինչու է կարևորվում ոչ միայն այդ նորմերի առկայությունը, այլ նաև դրանց իրականացումը:

Սակայն մինչև Սահմանադրության նորմերին որոշակի պարզաբանումներ տալը, նախ փորձենք պարզաբանել, թե ի՞նչ է «քաղաքացիական հասարակությունը», և վերջինիս կայացման հարցում ի՞նչ դեր է խաղում Սահմանադրությունը:

«Քաղաքացիական հասարակություն» բառակապակցությունը պայմանական է, քանի որ «ոչ քաղաքացիական», առավել ևս, «հակաքաղաքացիական» հասարակություն գոյություն չունի¹:

Յուրաքանչյուր հասարակություն կազմված է քաղաքացիներից և առանց նրանց հասարակություն գոյություն ունենալ չի կարող: Միայն մինչպեստական, ոչ քաղաքական հասարակությունը չէր կարելի անվանել քաղաքացիական, քանի որ այնտեղ ընդհանրապես չկար այնպիսի հասկացություն, ինչպիսին է «քաղաքացի», «քաղաքացիություն»:

Քաղաքացիական հասարակությանը բնորոշ արժեքները, իրավական, ժողովրդավարական պետության որակները ձևավորվեցին դարերի ընթացքում, սակայն դարձան հասարակական կյանքի համակարգային կարգավորիչներ:

«Քաղաքացիական հասարակության» տերմինն ունի ընդարձակ և հարուստ բովանդակություն՝ չնայած նրա պատմականությանը: Տվյալ կատեգորիայի իմաստը բազմազան է, և գիտնականների կողմից մեկնաբանվում է տարբեր ձևերով: Սակայն պարզ է, որ քաղաքացիներով բնակեցված յուրաքանչյուր պետություն չի կարող համարվել քաղաքացիական, այնպես, ինչպես յուրաքանչյուր պետություն, որտեղ գործում է իրավունքը, չի կարող համարվել իրավական²:

Քաղաքացիական հասարակության մասին խոսելիս՝ Հեգելն իր աշխատությունում գրում է, որ նրանում գլխավոր տարրը հանդիսանում է անձը, նրա դերը, գործառույթները, դրությունը³: Քաղաքացիական հասարակությունում գոյություն ունի նպատակ՝ յուրաքանչյուրն իր համար, մնացած ամեն ինչ ոչինչ է: Սակայն առանց մյուսների հետ փոխադարձ հարաբերությունների, նա չի կարող հասնել իր նպատակներին ամբողջ ծավալով:

Քաղաքացիական հասարակությունը ժամանակակից հասարակա-

¹ Տե՛ս Н.И. Матузова, Теория государство и право, М. Юристъ, 2001, էջ 200

² Տե՛ս նույն տեղում, էջ 201

³ Տե՛ս Гегель. Философия права. М., 1999, էջ 228.

գիտության առաջնային տարրերից է: Քաղաքացիական հասարակության և իրավական պետության գաղափարի համար չափազանց կարևոր հիմնադրույթ է իրավունքը, որը ստեղծվում է պետության կողմից, սակայն ոչ միայն հասարակության մեջ հարաբերություններ կարգավորելու, այլ հենց պետության վարքագիծը սահմանելու համար: Իրավունքը հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների, այդ թվում՝ նաև պետության համար, հավասար հիմունքներով, գործունեությունը որոշող նորմեր, շրջանակներ ու սահմաններ է ստեղծում: Իրավունքի արդարացիությունը կայանում է (պետք է կայանա) հենց նրանում, որ նա հավասարաչափ վերաբերվում է (պետք է վերաբերվի) ինչպես քաղաքացիներին, նրանց տարբեր խմբերին ու միավորումներին, այնպես էլ պետությանը¹: Իրավունքը ամենից առաջ անձանց միություն է, և առանց վերջիններիս այն զրկվում է իր իմաստից: Հասարակության որակը կախված է այն կազմող անձանց որակից, իրենց կամքը թելադրող, կնիքը դնողներից, իրենց ձգտումներից, հասարակական կյանքի բնույթի բարոյական կողմնորոշումներից:

Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական հասարակությունը՝ իբրև միագումար ամբողջություն, պետք է գերծ լինի պետական և քաղաքացիական հարաբերություններից, լինի ձևավորողը ազատ անհատի շահերի, նրա յուրահատուկ և առանձնահատուկ շահերի, սեփականատերերի կամ նրանց միավորման: Քաղաքացիական հասարակությունը՝ մերօրյա մեկնաբանությամբ, ժողովրդավարության պայմաններում մարդկային հանրության կազմակերպման և գործունեության իրականացման ձև է, որին բնորոշ են.

1. կազմակերպության սկզբունքով ձևավորված ոչ պետական կառույցների (միություններ, ընկերակցություններ, կազմակերպություններ) լայն ցանցը,
2. տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր, կրոնական և այլ ոչ պետական հարաբերությունների ընդգրկուն համակարգը²:

Իսկ ի՞նչ է Սահմանադրությունը:

Սահմանադրությունը այնպիսի նորմատիվ ակտ է, որը պետության իրավական ողջ համակարգի նորմերի նկատմամբ ունի բարձրագույն իրավաբանական ուժ և կոչված է կարգավորելու մի կողմից մարդու և հասարակության, մյուս կողմից՝ մարդու և պետության միջև հարաբերությունները, ինչպես նաև հենց իր՝ պետության կազմակերպման հիմունքները:

Սահմանադրության բովանդակությունը թույլ է տալիս խոսել

¹ Տե՛ս Հ. Խաչատրյան. Քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն, Եր., 1995, էջ 5-6.

² Տե՛ս Հ. Հոհաննիսյան. Հասարակական համակարգի զարգացման հիմնամասնադիրները, Եր., 2003, էջ 27-28.

նրանց մասին, ինչպես պետության իրավական համակարգի հիմքի մասին, քանի որ նրանց նորմերի շարքը համարվում է իբրև հիմք տարբեր ճյուղերի համար, ոչ միայն սահմանադրական, այլև վարչական, ֆինանսական, քաղաքացիական, աշխատանքային և այլն:

Որպեսզի պետության հիմնական օրենքը պահպանվի հասարակության բոլոր շերտերի կողմից, նա պետք է ծառայի հասարակության մեջ սոցիալական փոխզիջման հասնելու նպատակին՝ սահմանելու համար այնպիսի կարգ, որը արդարացիորեն կընդունվի ճնշող մեծամասնության կողմից: Սահմանադրությունը պետության մեջ «խաղի» հիմնական կանոններ սահմանող իրավական ակտն է, և այդ «խաղի» կանոնները տարածվում են հավասարապես, ինչպես քաղաքացիների, այնպես էլ պետական իշխանության մարմինների վրա:

Սահմանադրական մշակույթի գլխավոր կարգախոսը դարձավ այն, որ օրենքը և պետությունը պետք է լինեն իրավական, երաշխավորեն հասարակությունը, ազատությունը և արդարությունը, որոնց արժեհամակարգային հիմքը մարդու անօտարելի իրավունքների գերակայություն է: Հայաստանն անդամակցելով Եվրոխորհրդին, միացավ այս կազմակերպության՝ 1949թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրությանը, որի հոդված 3-ը միանշանակ սահմանում է. «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը և այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր անձ, ով գտնվում է այդ անդամի իրավագործության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից»: Իրավունքի գերակայությունը ամենից առաջ Սահմանադրության և օրենքի գերակայությունն է: Սահմանադրական կարգի հիմնական սկզբունքները, հասարակության կարևորագույն գծերը, նրա գլխավոր գաղափարները ամրապնդվում են ոչ այլ կերպ, եթե ոչ բարձրագույն օրենսդրական սահմանադրական մակարդակով: Սակայն իրավունքի գերակայության սկզբունքը կմնա որպես վերացական ցանկություն, եթե գործնականում կյանքի չկոչվի մարդու սահմանադրական իրավունքների ամմիջական գործողության պահանջը: Ինչպես դիպուկ բանաձևված է Մարդու իրավունքների ու ազատությունների 1789թ. ֆրանսիական հռչակագրի հոդված 2-ում՝ «Յուրաքանչյուր քաղաքական միության նպատակը մարդու բնական և անօտարելի իրավունքների պաշտպանությունն է»: Վերջինս ցանկացած Սահմանադրության հիմնական բովանդակությունն ու պետական համակարգի գերխնդիրն է:

«Պետություն և մարդ» հարաբերություններում չի կարող կողմերից մեկն ունենալ միայն իրավունքներ, իսկ մյուսը՝ պարտականություններ:

Արժանապատվության իրավունք

Մարդու իրավունքների ողջ փիլիսոփայությունը հիմնված է մեկ անվիճելի արժեքի՝ մարդկային արժանապատվության վրա:

Անհատի արժանապատվությունն իրավունքների և ազատությունների սկզբնաղբյուրն է: «...Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին հաստիկ արժանապատվության ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է»:

Եվրոխորհրդի 1950 թ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի շատ իրավունքներ կարող են սահմանափակվել օրենքով՝ պատերազմական կամ արտակարգ դրության պայմաններում: Մակայն երբևէ սահմանափակման ենթակա չեն խոշտանգումների չենթարկվելու և ստրկությունից կամ անօրինական կերպով անազատության մեջ պահվելուց զերծ լինելու իրավունքները: Համաձայն «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» հոդված 1-ի՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ և խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով:

Մինչև փոփոխությունները՝ Սահմանադրությունում չկար այնպիսի հստակեցված նորմ, որն ամրագրեր մարդու արժանապատվության իրավունքը: Գործող Սահմանադրության 14-րդ հոդվածում մարդու արժանապատվությունը դիտվում է որպես նրա իրավունքների և ազատությունների անբաժանելի հիմք: Սահմանադրությունը արժանապատվությունն ամրագրել է ոչ միայն որպես հիմնարար արժեհամակարգային սկզբունք, այլև մարդու սուբյեկտիվ իրավունք: Այն համընդհանուր սահմանադրական արժեք է, որի վրա է խարսխված ամբողջ սահմանադրական կարգը: Արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որը հավասարազոր է հարգվելու իրավունքի և ուրիշներին հարգելու պարտականությանը: Քանի որ Սահմանադրությունը մարդուն և նրա արժանապատվությունը ճանաչում է որպես ինքնուրույն արժեք, ապա նա չի կարող դառնալ պետության գործունեության օբյեկտ կամ գործիք:

Մարդու արժանապատվության համար ամենակարևոր նախադրյալը վերջինիս հնարավորությունների (մարդու իրավունքների) ազատ և անարգել իրագործումն է: Բնականաբար, մարդու իրավունքների և ազատությունների ցանկացած ոտնահարում հանգեցնում է մարդկային արժանապատվության նսեմացման: Այդ է պատճառը, որ արժանապատվության իրավունքը հանդիսանում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնական աղբյուրը:

ՀՀ-ում ճանաչված է արժանապատվության պաշտպանության սկզբունքը, որն իր արտահայտումն է գտել ՀՀ Սահմանադրության 14-րդ

հողվածի շարադրանքում, համաձայն որի, մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: ՀՀ Սահմանադրության այս նորմը ուղղակիորեն բխում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի I-ին հոդվածից՝ «Յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը ենթակա է պաշտպանության անկախ նրա սոցիալական արժեքից»:

Մարդու պատվի և արժանապատվության իրավունքը առավել հաճախ նսեմացվում է պաշտոնատար անձանց ոսնձգություններով: Այդ կապակցությամբ ՀՀ քրեական դատատավարության օրենսգիրքը արգելում է մեղադրյալից ցուցմունք կորզել բռնությամբ, խաբեությամբ, շանտաժի և այլ ճանապարհով:

Ելնելով աստվածաշնչյան պատկերացումներից՝ արժանապատվությանը հետաքրքիր մեկնաբանություն է տվել ՀՀ ՄԳ անդամ Ռ. Պապայանը: Նա գտնում է, որ արժանապատվությունը մարդուն Աստծո շնորհած Աստծո հատկությունների ամբողջությունն է, որովհետև, ինչպես հայտնի է Աստվածաշնչից, Աստված մարդուն ստեղծել է իր նմանությամբ և պատկերով, իսկ մարդու իրավունքները բխում են նրա արժանապատվությունից, այստեղից հետևում է, որ բնական իրավունքի հիմքում ամենաառաջնայինը արժանապատվությունն է, և եթե պաշտպանված է մարդու արժանապատվությունը, ապա նրա մյուս բոլոր իրավունքները ինքնին պաշտպանված կլինեն:

Սահմանադրական մշակույթի արժեհամակարգային հիմքը դարձավ մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների հարգումը, արժեքներ, որոնք բնորոշ են անխտրականության, բազմակարծության, հանդուրժողականության արդարադատության և համերաշխության սկզբունքների վրա կառուցված հասարակությանը:

Սա է այս բնագավառում մարդկության վերջին նվաճումը՝ ոչինչ չի կարող արդարացնել խոշտանգումը, մարդու արժանապատվությունը ոտնահարող ոչ մի գործողություն արդարացում չունի, եթե նույնիսկ այն կկանխեր քաղաքացիական պատերազմը, որովհետև խաղաղությունը, որը ձեռք է բերվելու մարդու արժանապատվությունը նվաստացնող գործողությունների գնով, խաղաղություն կոչել չի կարելի և նվաստացուցիչ է լինելու ողջ հասարակության համար:

Մարդը բարձրագույն արժեք է, իսկ նրա արժանապատվությունը՝ անձեռնմխելի:

Կյանքի իրավունք

Մարդու իրավունքների ազատ իրականացումն ու պաշտպանությունը ժողովրդավարության հիմնական նախապայմանն է: Այդ իրավունքների շարքում ամենակարևորներից է կյանքի իրավունքը, որը ճանաչվել է մարդու անօտարելի իրավունքը և վավերացվել է միջազգային իրավական փաստաթղթերում:

Կյանքի իրավունքը մարդու բնական և անօտարելի իրավունքն է, այն հիմքն է մյուս իրավունքների, բացարձակ և բարձրագույն արժեք է, քանի որ մյուս բոլոր իրավունքները կորցնում են իրենց իմաստը, եթե անձը զրկվում է կյանքից: Սա նշանակում է, որ ոչ ոք՝ ո՛չ պետությունը (պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք) և ո՛չ անհատ քաղաքացիները չեն կարող կամայականորեն զրկել մարդուն կյանքից: Կյանքի իրավունքը, լինելով մարդու իրավունքներից ամենահիմնականը և առանցքայինը, պետք է պաշտպանվի և հարգվի պետության կողմից, որը վերջինիս ամենաառաջնային պարտականություններից մեկն է, քանզի պետությունն է հոգում իր քաղաքացիների գուցե և ոչ բարեկեցիկ, բայց, այնուամենայնիվ, կյանքի իրավունքը:

«Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից, այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը» (ՄԻԵԿ, հոդվ. 2):

Կարծում ենք, որ մարդու կյանքի դեմ ոտնձգությունը, թեկուզ օրենքով թույլատրված ձևերով, անընդունելի է: Մահապատիժը՝ որպես օրենքով սահմանված բացառիկ պատժատեսակ, իրավական չէ, քանի որ մարդու կյանքի իրավունքը անօտարելի է, բնության կամ աստվածային պարզ: Հետևաբար, մարդու կյանքի դեմ ցանկացած ոտնձգություն, թեկուզ իր հիմքում ունենա հրաման կամ օրենքի հրահանգ, համարվում է մարդու կյանքի իրավունքի դեմ հակաիրավական գործողություն և պետք է մերժվի իր բոլոր դրսևորումներով:

Քաղաքացիական հասարակությունը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ և մթնոլորտ անձի հիմնական իրավունքների և ազատությունների, ժողովրդավարական սկզբունքների, իրավահավասարության, բարոյական և մշակութային արժեքների, արդարադատության անարգել իրականացման համար: Այն բաց, ժողովրդավարական, հակատոտալիտար, ինքնազարգացող հասարակություն է, որում կենտրոնական տեղը զբաղեցնում է մարդը, քաղաքացին, անձը:

Եվրոխորհուրդն այն համոզմանն է, որ չի կարելի մահապատիժ կիրառել, քանզի այն չարիք է. «Մահը արդարության վերահաստատում չէ»:

Եվրոպայի խորհրդին անդամակցելու կապակցությամբ Հայաստանի ստանձնած պարտավորություններից թերևս ամենավիճահարույցը մահապատժի վերացումն էր: ՀՀ-ն վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունը, որի 1-ին հոդվածը արգելում էր մահապատիժը: Սա նշանակում է, որ Հայաստանը հրաժարվեց մահապատժի՝ որպես բացառիկ պատժամիջոց կիրառումից, որը սահմանված է գործող Սահմանադրության 15-րդ հոդվածում: Սա, իհարկե, առաջադիմական քայլ է:

Մեր կարծիքով, ցանկացած քաղաքացիական հասարակությունում, որի հիմքը ժողովրդավարական և իրավական պետությունն է, և որի գլխավոր միտքը նրա հարաբերական անկախությունն է պետությունից, և հենց հարաբերական, այլ ոչ թե բացարձակ, մահապատժի վերացումը կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանության միջոցներից առաջինն է:

ՀՀ-ում անձնական կյանքի մասին օրենք չի գործում, հետևաբար, դա ավելի է դժվարացնում անձնական կյանք հասկացության մեկնաբանությունը և այդ իրավունքի սահմանները որոշելը: Սակայն անձնական կյանքի իրավունքը պաշտպանող և այդ իրավունքը՝ որպես ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակման միջոց, ամրագրող դրույթներ են պարունակում ՀՀ Սահմանադրությունը և մի շարք օրենքներ:

Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք

«Որպեսզի կարողանաս ազատություն ունենալ՝ այն ևս պետք է սահմանափակվի», - ասել է Բյորքը:

Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը մարդու կարևորագույն բնական իրավունքներից է, որոնք նա ձեռք է բերում ծննդյան պահից: ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը, հիմք ընդունելով ՄԻԵԿ 5-րդ հոդվածի դրույթները, ամրագրել է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով»:

Սահմանադրությունը, արմատապես փոփոխությունների ենթարկվելուց հետո, հետևելով ՄԻԵԿ-ին, սպառնիչ կերպով սահմանեց անձին ազատությունից զրկման հիմքերը, ինչպես նաև կարգավորում է զրկման հետ կապված կարևոր հարաբերությունները:

Ազատությունն արտահայտում է մարդու գործունեության և բնութ-

յան ու հասարակության օբյեկտիվ օրենքների փոխհարաբերությունը: Ազատության իրավունք ասելով՝ հասկանում ենք, որ յուրաքանչյուր մարդ, որն ապրում է ՀՀ-ում, հնարավորություն ունի կատարելու ցանկացած գործողություն, եթե այն թույլատրվում է օրենքով: Համաձայն այս իրավունքի՝ ցանկացած գործող քաղաքացիական հասարակությունում և իրավական պետությունում կա մի պայման-սկզբունք՝ «Թույլատրելի է այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով»:

Մարդու ազատության հետ անմիջական կապի մեջ է մարդու անձեռնմխելիության իրավունքը: Վերջինս տարածվում է նրա կյանքի, առողջության, պատվի և արժանապատվության վրա: Այս իրավունքը նշանակում է, որ որևէ այլ մեկն իրավունք չունի ցանկացած որևէ մեկի դեմ գործադրել ֆիզիկական, հոգևոր ճնշում, բռնություն: Անձի անձեռնմխելիությունը ներառում է նաև կամայականության անթույլատրելիություն՝ ճնշամիջոցներ կիրառելիս:

Ոչ ոք իրավունք չունի ուժով և սպառնալիքով հարկադրել մարդուն կատարել այս կամ այն գործողությունը: Մարդն իրավունք ունի անձամբ տնօրինելու իր ճակատագիրը, ընտրելու իր կյանքի ուղին, ապրել իրեն հարմար կյանքով: Պետությունը պարտավոր է պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունն ամեն տեսակի ոտնձգությունից, ում կողմից էլ որ դրանք կատարվելիս լինեն: Այս իրավունքն առավելապես պաշտպանվում է քրեական և քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված միջոցներով: Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: Քրեական դատավարության 11-րդ հոդվածը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածում ամրագրված դրույթները, սահմանում է. «Կալանավորելը, կալանքի տակ պահելը, բժշկական կամ դաստիարակչական հաստատությունում անձին հարկադրաբար տեղավորելը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ: Մինչև դատարանի համապատասխան որոշումը ստանալն անձը չի կարող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել 72 ժամից ավել»: Եթե անձը ապօրինի է պահվել անազատության մեջ, ապա դատարանը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը պարտավոր են անհապաղ ազատ արձակել:

Կարծում ենք, որ տեղին կլիներ խոսել այն էական փոփոխության մասին, որ կատարվել է ՀՀ Սահմանադրությունում: Օրենքի 16-րդ հոդվածը չի ամրագրում, թե դատարանի կողմից կալանավորման մասին որոշում կայացվելուց հետո մինչդատական վարույթում որքան է կալանավորվածին անազատության մեջ պահելու առավելագույն ժամկետը: Օրենքը միայն ամրագրում է, որ անձը կարող է զրկվել ազատությունից օրենքով նախատեսված դեպքերում և կարգով և ոչինչ չի ասում, թե ան-

ծը ինչքան ժամանակ կարող է մնալ անագատության մեջ, հետևաբար, նման նորմի բացակայությունը կարող է հանգեցնել մարդու անձնական ազատության սահմանափակմանը՝ նրան երկար ժամանակ պահելով անագատության մեջ, ուստի, կարծում ենք, ավելի արդյունավետ կլիներ տվյալ նորմի ամրագրումը նույնպես:

Որոշակի անհարթություն կա 16-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթում՝ կապված այն հանգամանքի հետ, որ յուրաքանչյուր ոք ազատությունից զրկման և խուզարկման օրինականությունն ու հիմնավորվածությունը վերադաս դատական ատյան բողոքարկելու իրավունք ունի: Քանի որ անձին ձերբակալման եղանակով ազատությունից զրկելու դեպքում դատական որևէ ակտ չի պահանջվում, ապա անհասկանալի է, թե ինչ է իրենից ներկայացնում վերադաս դատական ատյան ասվածը և որտեղ պետք է անձը բողոքարկի իրեն ապօրինի և անհիմն ձերբակալելու փաստը:

Սահմանադրության մեջ իրավունքի ամրագրումը (և ապա իրակացման կարգի սահմանումը) մարդուն հնարավորություն է տալիս գործելու ճանաչված իրավունքի առկայության սահմաններում, և կարող է առաջանալ որևէ սահմանված կարգի խախտում, որի համար սահմանված պատասխանատվությունը չի կարող առաջացնել այն հետևանքները, ինչ իրավունքի բացակայության պարագայում:

Եթե պետությունում քաղաքացիական հասարակությունը զուտ հասկացություն չէ և այն գործում է իր բոլոր իմաստներով, և եթե պետությունում իշխում է օրինականությունը, ապա ակնհայտ է, որ պետության կողմից կաշտպանվեն անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը:

Անմեղության կանխավարկած

Այսօր շատ են խոսում մեղադրյալի անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման կամ խախտման մասին: Ի՞նչ է իրենից ներկայացնում անմեղության կանխավարկածը, ե՞րբ և որտե՞ղ է առաջին անգամ սահմանվել այդ ինստիտուտը:

Համընդհանուր ճանաչում է ստացել անմեղության կանխավարկածի հետևյալ բնորոշումը. «Հանցագործության կատարման մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով և դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Քրեական դատավարության գիտության մեջ իշխում է այն սխալ կարծիքը, որ մեղադրյալի անմեղության կանխավարկածն առաջին անգամ սահմանվել է Ֆրանսիայի 1793 թ. «Մարդու և քաղաքացու իրա-

վունքների դեկլարացիայում», համաձայն որի, յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ չի ապացուցվել հակառակը¹:

Պարզվում է, որ դեռ 1215թ. «Ազատությունների մեծ խարտիայի» 39-րդ հոդվածը հռչակում է. «Ոչ մի մարդ չպետք է կալանավորվի կամ պահվի բանտում կամ զրկվի ունեցվածքից կամ հայտարարվի օրենքից դուրս կամ վտարվի երկրից կամ որևէ այլ ձևով անբախտացվի քան օրինական դատավճռով և երկրի օրենքներով»²:

Ինչպես տեսնում ենք՝ անգլիական իրավունքի հուշարձանում ավելի լավ ձևով է բնութագրվում անմեղության կանխավարկածի և իրավունքների (անձեռնմխելիություն, ազատություն և այլն) դատական պաշտպանության մասին:

ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածը ոչ միայն ամրագրեց այդ ինստիտուտը, այլև առանձնահատուկ նշեց նրա բովանդակությունը. «Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:

Անմեղության կանխավարկածը, որպես սահմանադրական երաշխիք, կոչված է ապահովելու հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի իրավունքներն ու պարտականությունները: Այն իր ամրագրումն է ստացել «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» (հոդվ. 11), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում (հոդվ. 11), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում (հոդվ. 6) և Ժողովրդավարական կարգ ունեցող երկրների Սահմանադրություններում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ավելի է մանրամասնել մեղադրյալի անմեղության կանխավարկածը՝ նշելով, որ այդ սկզբունքի պահանջները վերաբերվում են ոչ միայն մեղադրյալին, այլև կասկածյալին: Արտաքինից երևում է, որ այն պետք է տեղադրված լիներ «խափանման միջոց» գլխում, բայց դա միայն արտաքինից է: Օրենսդիրը նպատակ է հետապնդում, որ հատկապես կալանքը՝ որպես խափանման միջոց, իր սահմանափակումներով տարբերվի ազատագրկումից: Դա էլ նշանակում է, որ քննչական մեկուսարաններում պայմանները պետք է բարելավվեն՝ կալանքի տակ գտնվողը պետք է օգտվի ցանկացած իրավունքից՝ միայն այն սահմանափակմամբ, որ այդ իրավունքներից օգտվելը չխոչընդոտի խափանման միջոցների նպատակին, այսինքն՝ անձը չթաքնվի քննությունից և դատարանից, չխոչընդոտի ճշմարտության բացահայտմանը և այլն: Այսօր քննչական

¹ Տե՛ս Յ. Մ. Черниловский., Хрестоматия о всеобщей истории государство и право. М., 1996, էջ 223.

² Տե՛ս Памятники истории Англии 11-13 в. в., М., 1936, էջ 106.

մեկուսարաններում պայմանները, կարելի է ասել, ոչնչով չեն տարբերվում ազատագրկման վայրերի պայմաններից, իսկ որոշ դեպքերում գուցե ավելի վատ են: Եվ սա այն դեպքում, երբ անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ դատավարական օրենսգրքով սահմանված կարգով և ուժի մեջ մտած դատավճռով (ՀՀ քր. դատ. օր. հոդվ. 18-ի մաս 1) :

Ի՞նչ հասկանալ՝ մեղադրյալը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով և ուժի մեջ մտած դատավճռով:

Մեղադրյալը համարվում է անմեղ՝ նշանակում է, որ դա մեղադրյալի օբյեկտիվ դատավարական վիճակն է: Քրեական գործի նախնական (նաև դատական) քննության ընթացքում մեղադրյալի մեղավորությունը պետք է ապացուցվի օրենքով սահմանված կարգով:

Հարց է առաջանում. եթե դա այդպես է, ապա որևէ մեկն իրավունք ունի՞՞ մինչև դատավճռի կայացումը կարծիք արտահայտել նրա մեղավորության վերաբերյալ:

ՀՀ Սահմանադրությունը սահմանում է ինչպես մեղադրյալի անմեղության կանխավարկածի սկզբունքը, այնպես էլ յուրաքանչյուրի խոսքի ազատության և սեփական կարծիք պնդելու իրավունքը (ՀՀ Սահմ. հոդվ. 27): Այստեղից էլ՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը ոչ թե արգելում է, այլ, ընդհակառակը, հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին իր կարծիքն ազատորեն արտահայտելու ցանկացած մեղադրյալի վերաբերյալ և ցանկացած հիմքով: Անմեղության կանխավարկածից բխում է, որ իրենց պարտականությունները կատարելիս նախաքննության և դատաքննության մարմինները չպետք է գործին մոտենան արդեն իսկ կանխավ ձևավորված կարծիքով՝ թե կասկածյալը կամ ամբաստանյալը կատարել են այն հանցագործությունը, որում մեղադրում են նրան, այնքան ժամանակ, քանի դեռ չի ապացուցվել նրա մեղքը: Մեղադրյալի մեղավորության վերաբերյալ քննիչի և դատախազի տեղեկությունները թեև պաշտոնական են, սակայն կրում են սուբյեկտիվ բնույթ: Ինչպես քննիչը, այնպես էլ դատախազը չեն որոշում մեղադրյալի վերջնական մեղավորությունը, իսկ այդ մասին նրանց հետևությունները միայն ենթադրություններ են և կարող են առաջացնել միայն դատավարական հետևանքներ: Միայն դատարանն իրավունք ունի հանցագործության կատարման մեջ անձին մեղավոր ճանաչել և նրա նկատմամբ պատիժ կիրառել:

Մեղադրյալի մեղավորության մասին արտահայտված կարծիքները դատարանի վրա չեն ազդում և չեն էլ կարող ազդել նաև այն պատճառով, որ «Արդարադատություն իրականացնող դատավորը ենթարկվում է միայն օրենքին» (ՀՀ Սահմ. հոդվ. 97): Սահմանադրական այս նորմից հետևում է, որ դատավորի անկախությունը դատա-

վորի պարտականությունն է: Նա մի պարտականություն ունի՝ ենթարկվել օրենքին, ոչ թե այս կամ այն անձի կարծիքներին՝ անկախ կարծիքի արտահայտման ձևից և այն արտահայտողի պաշտոնական դիրքից, քանի որ դատավճռի օրինականության և հիմնավորվածության համար պատասխան է տալիս միայն այն դատավորը, որը ստորագրել է դատավճիռը:

Մեղադրյալի անմեղության կանխավարկածից բխում է, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, նման պարտականություն չի կրում նաև մեղադրյալի պաշտպանը. ըստ ՀՀ քր. դատ. օր-ի 18-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը»:

Հետևաբար՝ անձի նկատմամբ մեղադրանք առաջադրելով՝ հետաքննության և նախաքննության մարմինները իրենք են պարտավոր ապացուցել նրա մեղավորությունը: Ընդ որում՝ չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Խոսքը վերաբերվում է այն փաստերին, հանգամանքներին ու տեղեկություններին, որոնց բազմակողմանի ուսումնասիրության և ստուգումների արդյունքում հնարավոր չէ ապացուցել անձի մեղավորությունը: Օրենքի այս պահանջը կանխորոշում է նաև կասկածյալի, մեղադրյալի և պաշտպանի դատավարական վիճակը, համաձայն որի, պաշտպանության կողմը դառնում է ոչ թե ապացուցման պարտականության, այլ ապացուցման իրավունքի սուբյեկտ:

Եզրակացությունը մեկն է՝ մեղադրյալի անմեղության կանխավարկածը ոչ թե խանգարում է արդարադատության իրականացմանը, այլ հակառակը՝ պայմաններ է ստեղծում, որպեսզի գործի հանգամանքներն ուսումնասիրվեն բազմակողմանի ու լրիվ, գործով կայացված դատավճիռը լինի օրինական և հիմնավոր: Անմեղության կանխավարկածն, ըստ էության, մի այնպիսի ինստիտուտ է, որը բացառում է անմեղ անձի դատապարտումը: Ահա թե ինչու ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն այս հարցում կատարել է լուրջ որակական ներդրում մարդու իրավունքների պաշտպանության խնդրում: Մեղադրյալի անմեղության կանխավարկածի սկզբունքը գործում է մինչև դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, դրանից հետո սկսում է գործել դատավճռի օրինականության և հիմնավորվածության կանխավարկածը:

Մեղադրյալի պաշտպանության իրավունքը իրական է միայն այնպիսի քրեադատավարական համակարգում, որտեղ անվերապահորեն ընդունվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Երկքաղաքացիություն

Այն մասին, որ Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի կողմից քննարկվում է Սահմանադրությամբ ընդունված երկքաղաքացիության հարցը, վիճահարույց է, և թե նման ձեռնարկումն ի՞նչ արձագանք կգտնի արտասահմանում ապրող միլիոնավոր հայերի համար:

Երկքաղաքացիության ընդունումը (ՀՀ. Սահմ. հոդվ. 30.1) կարող է կտրականապես փոխել հարաբերությունները հայկական պետականության և բազմամիլիոն հայկական սփյուռքի հետ, որը սփռված է աշխարհով մեկ՝ Վրաստանից ու Ռուսաստանից մինչև ԱՄՆ և Ուրուգվայ: Պաշտոնական տարբեր տվյալներով՝ ՀՀ բնակչությունը չի գերազանցում միլիոն մարդ, այն դեպքում, երբ երկրի սահմաններից դուրս կան 7-10 միլիոն հայեր:

Երկքաղաքացիության կողմնակիցները հաստատում են, որ այն ընդունելը առավել խթանիչ կդառնա օգնությունների հարցում՝ ինչն անում է սփյուռքը Հայաստանի համար. ասել է թե՛ կնպաստի կապիտալի հոսքին երկիր, և, վերջապես, հոգեբանորեն կներծեցնի սփյուռքն ու պատմական հայրենիքը: Երկքաղաքացիությունը, լինի դա մասնավոր կամ կիսատ, ինչպես պնդում են այսօրվա իշխանություններն, անիմաստ է: Երբ մարդուն քաղաքացիություն է տրվում, նշանակում է, որ նա իրավունք է ձեռք բերում ընտրելու և ընտրվելու:

ՀՀ ԱԺ մախագահ, Հանրապետական կուսակցության անդամ Տիգրան Թորոսյանը, որ կողմնակից է երկքաղաքացիության մասին օրենքի ընդունմանը, այս ամենում ոչ մի արտառոց բան չի տեսնում:

«Բնականաբար, - ասում է նա, - դա չի նշանակում, որ նրանք, ովքեր ունեն երկքաղաքացիություն, պետք է ունենան Հայաստանի բնակչի բոլոր իրավունքները»: «Մասնավորապես, դա վերաբերում է ընտրելուն և ընտրվելուն: Այս իրավունքների ճշգրտման նպատակով, - ավելացրել է նա, - ճիշտ կլինի Սահմանադրության մեջ մտցնել որոշակի ուղղումներ»:

Եթե սփյուռքահայերը ստանան երկքաղաքացիություն, ապա քաղաքական իրավունքով նրանք, ովքեր չեն ցանկանա մշտապես ապրել Հայաստանում՝ պետք է տարբերվեն մշտական ապրողներից: Իսկ զրկել ընտրելու և ընտրվելու իրավունքից նրանց, ովքեր կորոշեն ապրել այստեղ, այսինքն ում համար Հայաստանը կդառնա կենսական շահերի կենտրոն, կարծում ենք, ուղղակի անընդունելի է:

Հայերի մեծամասնությունը ապրում է արտասահմանում, և եթե տաս միլիոն արտասահմանցի հայ ձեռք բերեն Հայաստանի լիիրավ քաղաքացիություն, ապա դա կնշանակի, որ ընտրությունների ժամանակ իշխանությունները պետք է կազմավորվեն երկրի սահմաններից դուրս: Բայց և այդ իշխանությունների օրինականացումը կհենմի միայն

Հայաստանի բնակչության վրա: Երկքաղաքացիության ընդունումը երկկողմանի պրոցես է, որը ենթադրում է կողմերի նույնանման պայմաններ՝ մեկը մյուսի հանդեպ:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա դա կարող է ծնել արտագաղթի մի նոր ալիք: Եթե անգամ ենթադրենք, որ մեզ կհաջողվի ստորագրել երկքաղաքացիության մասին պայմանագիր որևէ մի երկրի հետ, ապա անհրաժեշտ կլինի հաշվի առնել, որ անհամաչափությունն այստեղ բացառվում է: Այսինքն՝ եթե Ֆրանսիայի քաղաքացին կարող է դառնալ նաև Հայաստանի քաղաքացի, ապա մեր քաղաքացին պետք է հնարավորություն ունենա դառնալու Ֆրանսիայի քաղաքացի: Ի՞նչ եք կարծում, ո՞ր ուղղությամբ կընթանա մարդկանց հոսքը:

Եզրափակիչ մաս

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ մեր կողմից քննարկված մարդու և քաղաքացու իրավունքների իրագործումը կնպաստի քաղաքացիական հասարակության կայացմանը: Նշենք, որ մեր պետությունում քաղաքացիական հասարակություն ասվածը այդքան էլ չի համապատասխանում իր իմաստին և բնույթին: Քանի որ քաղաքացիական հասարակության ոչ բոլոր քաղաքացիների ոչ բոլոր իրավունքներն են պաշտպանվում, ինչպես նաև ոչ բոլոր քաղաքացիներն են ենթարկվում պատասխանատվության:

Սկսենք նրանից, որ քաղաքացիական հասարակություն կերտելու ճանապարհին գլխավոր հանգույցը հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանությունը, և բոլորովին վերջերս միայն վերացվեց մահապատիժը, որը, կարծում ենք, առաջադիմական քայլ է, և որով ամբողջական է դառնում մարդու անօտարելի բնական կյանքի իրավունքը:

Խոսելով քաղաքացիական հասարակության և Սահմանադրության մասին՝ երևի թե ճիշտ չէր լինի չանդրադառնալը արժանապատվության իրավունքին, որն իր ուրույն տեղը գտավ ՀՀ Սահմանադրությունում: Մեզ բոլորիս համար գաղտնիք չէ, որ մարդու իրավունքների նկատմամբ ոտնձգություններն առավել հաճախ իրականացվում են պաշտոնատար անձանց կողմից, ուստի, կարծում ենք, տվյալ նորմի ամրագրումը որոշ չափով կկանխի մարդու արժանապատվության իրավունքի ոտնահարումը:

Ոչ պակաս կարևոր է նաև վերը նշված երկու իրավունքների հետ սերտորեն կապի մեջ գտնվող անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի հիմքում ընկած հարկադրանքի և ուժի կիրառման մարմինների ազատության սահմանափակումը: Սակայն, եթե խոսում ենք քաղաքացիական հասարակության մասին, ապա այս իմաստիտուտի

(հարկադրանքի և ուժի կիրառման մարմինների ազատության սահմանափակման ինստիտուտը) հիշատակումը հակասում է քաղաքացիական հասարակության կայացմանը:

Հաջորդ իրավունքը, որը նույնպես դասել ենք կարևորագույնների շարքերը՝ անմեղության կանխավարկածն է: Անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի բոլոր պահանջները կոչված են նպաստելու արդարադատություն իրականացման մեկ կարևոր խնդրի լուծմանը՝ արգելել մեղադրելու անմեղներին:

Տվյալ նորմը, որն իր կայուն տեղն է գտել պետության Հիմնական օրենքում, կարելի է համարել կայացած միայն այն դեպքում, երբ օրենքը լինի ազատության երաշխավորը, այլ ոչ թե սահմանափակման ու բռնադատման:

Իր դերով և նշանակությամբ չի զիջում նաև երկքաղաքացիությունը, որն ամբողջովին նոր ինստիտուտ է մեր հանրապետության իրավական-քաղաքական համակարգում:

Կարծում ենք, որ երկքաղաքացիությունը բացասական քայլ է, քանի որ երկքաղաքացիություն ունեցող անձինք իրավական կապվածության մեջ են գտնվում միաժամանակ տարբեր պետությունների հետ և երբեմն ստիպված պետք է լինեն կատարելու այդ իրավական կապից բխող, սակայն իրար բացառող տարբեր պարտականություններ:

Այսօր օրվա հրամայական է դարձել պետության և իրավունքի կերտման, մեզանում քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնահարցը:

Հուսանք, որ մոտ ապագայում համապատասխան միջոցներ կձեռնարկվեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրագործման ուղղությամբ և ցանկացած պետություն կարող է լինել արդարացի և հարատև, եթե ինքը կաշկանդված է իրավունքով, և միայն վերջինիս առկայության պայմաններում կարելի է համարել, որ ՀՀ Սահմանադրությունը հանդիսանում է գործունե երաշխիք քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 1995 թ. (առանց փոփոխությունների և փոփոխությունների)
2. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 1948 թ., 10-րդ դեկտեմբերի
3. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, 1950 թ., 4-րդ նոյեմբերի

4. Գ. Հարությունյան: Սահմանադրական մշակույթ /Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները/: Եր., 2005
5. Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը: Եր., 2005
6. Վ. Պողոսյան: Մարդու իրավունքներ: Եր., 2005
7. Գ. Հարությունյան: Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները: Եր., 2005
8. Վ. Այվազյան: Մարդու իրավունքներ: Եր., 2002
9. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /Խմբ. Ն. Այվազյան/: Եր., 2003
10. Հ. Խաչատրյան: Բարաբարացիական հասարակություն և իրավական պետություն: Եր., 1995
11. Գ. Ղազինյան: Հայաստանի Հանրապետության քրեական դատափարություն, Եր., 2002
12. М.В.Баглай. Конституционное право зарубежных стран. М., 2000
13. Теория государство и право / Под ред. Н.И. Матузова, А.В. Малько – М.Юричъ, 2000
14. К.С. Гаджиев. Политология /Учебник для высших учебных заведений/. М., 2001

Ներածություն

Մինչ «ՀՀ Սահմանադրությունը քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին» թեմային անցնելը, ըստ մեզ, պետք է մեկնաբանել, թե ինչ է իրենից ներկայացնում «հասարակություն», «քաղաքացիական հասարակություն» հասկացությունները: Պետք է խորապես ուսումնասիրել «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը՝ սկսած նրա պատմական նախադրյալներից, կառուցվածքից, որպեսզի կարողանալ եզրահանգումներ կատարել ՀՀ մայր օրենքում՝ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթների վերաբերյալ:

Մարդը հասարակության առաջնային բջիջն է: Հասարակությունը ստեղծվում է փոխադարձ շահերի հիման վրա, որոնք կենսագործվում են նրա անդամների փոխադարձ համագործակցության հետևանքով: Այսինքն՝ «հասարակություն» հասկացության մեջ ընդգրկված են հետևյալ հիմնական տարրերը՝

1. կամքով և գիտակցությամբ օժտված անհատների ամբողջություն,
2. մշտական և օբյեկտիվ բնույթ կրող ընդհանուր շահեր,
3. ընդհանուր շահերի հիման վրա համագործակցություն ու փոխգործողություն,
4. վարքագծի համապարտադիր կանոնների միջոցով հասարակական շահերի կարգավորում,
5. հասարակության ներքին կարգն ու արտաքին անվտանգությունն ապահովելու ընդունակ կազմակերպված ուժի՝ իշխանության առկայություն,
6. հասարակության ինքնանորացման և կատարելագործման իրական ընդունակությունն ու իրական հնարավորություն:

Քաղաքացիական հասարակության կատեգորիան բոլոր ժամանակների մտածողների ձգտումն ու երազանքն է: Մարդիկ միշտ երազել են ստեղծել իդեալական հասարակության կառուցվածքային մոդել, որտեղ պետք է թագավորի բանականությունը, ազատությունը, արդարությունը և բարեկեցությունը: Այդ մոդելը միշտ կապվել է պետության՝ դրա կատարելագործման, իրավունքի դերի բարձրացման հետ:

Հին աշխարհում մոդել էր ծառայում Պլատոնի պետության գաղափարը: Յիցերոնը, հիմնավորելով մարդկանց իրավական հավասարության անհրաժեշտության գաղափարը, գրում էր, որ օրենքը քաղաքացիական հասարակության կապող օղակն է և պետք է միատեսակ լինի բոլորի համար: Նա քաղաքացիական հասարակությունը նույնացնում էր պետության հետ:

16-18-րդ դարերում Մոնտեսքյուն, Ռուսսոն, Լոկը քաղաքացիական հասարակության հետ նույնացնում էին ոչ թե ամեն մի պետությունը, այլ բնական իրավունքի վրա հիմնված և միայն առաջադեմ պետության կառուցվածքները պայմանագրի հիմքի վրա և գտնում, որ բացարձակ միապետությունը անհամատեղելի է քաղաքացիական հասարակության հետ, և առաջարկում էին ժողովրդավարական և իրավական հասարակության կառուցում, որը կնպաստի քաղաքացիական հասարակության էլ ավելի զարգացմանը:

Ի. Կանտի փիլիսոփայության համաձայն՝ քաղաքացիական հասարակությունը պետք է հիմնված լինի հետևյալ գաղափարների հիման վրա.

- քաղաքացիական հասարակությունը ազատ անհատների հանրություն է, դա նշանակում է, որ՝
 - ա) անհատը սեփականատեր է,
 - բ) նա ազատ է սեփականության ձևի մասնագիտության և աշխատանքի տեսակ ընտրելու մեջ,
 - գ) քաղաքական իմաստով անհատն անկախ է պետությունից, հնարավորություն ունի լինել կուսակցությունների, կազմակերպությունների անդամ, որը կարող է ընտրել և ընտրվել,
 - դ) նրա ազատությունն ապահովված է պետության կողմից, և նա կարող է դատարանի միջոցով պաշտպանել իր իրավունքների դեմ ոտնձգության համար,
- քաղաքացիական հասարակությունը բաց սոցիալական կազմավորում է՝
 - ա) նրա մեջ ապահովված է խոսքի ազատությունը, իսկ դրա շրջանակում՝ բարոյախոսությունը, քննադատությունը, ինֆորմացիայի ազատությունը, դրա մատչելիությունը, երկրից ազատ դուրս գալու և երկիր մուտք գործելու իրավունքը և այլն,
 - բ) այնտեղ հարգված են համընդհանուր մարդասիրական սկզբունքները,
- քաղաքացիական հասարակությունը բարդ կառուցվածք ունեցող հանդուրժողական համակարգ է՝
 - ա) այդ հասարակության մեջ գոյություն ունեն կազմակերպություններ, արհեստակցական միություններ, ակումբներ,
 - բ) տվյալ հասարակության մեջ անհատների ամենաառաջնային պահանջումները, շահերը ազատորեն արտահայտվում և իրացվում են հանդուրժողականության և պլյուրալիզմի, սեփականության բազմազանության (մասնավոր, բաժնետիրական, կոոպերատիվ, հասարակական և պետական սեփականություններ), սոցիալ-քաղաքական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների լայն ցանցի գոյության և հոգևոր ազատության մեջ,

- քաղաքացիական հասարակությունն իրավաբանական, ժողովրդավարական հասարակություն է, որտեղ դրա տարրերի կապող գործոնն է բնական իրավունքը և ձեռք բերովի իրավունքների ապահովումն է ու պաշտպանությունը պետության կողմից, իրավունքի և օրենքի միասնությունը, իշխանությունների տարաբաժանումը (դա բացառում է կատակլիզմը):

Այսպիսով՝ կարելի է ասել, որ քաղաքացիական հասարակությունն ազատ ժողովրդավարական, իրավական հարաբերություն է, որը կողմնորոշված է դեպի մարդը, որտեղ ստեղծված են իրավական տրադիցիաներ (սովորույթներ), օրենքները և հումանիստական (մարդասիրական) գաղափարները հարգելու մթնոլորտը, որտեղ ապահովվում է ստեղծագործական և ձեռնարկատիրական գործունեության ազատությունը, որը հնարավորություն է տալիս հասնել բարեկեցության և պետության նկատմամբ ստեղծում է հսկողական մեխանիզմներ:

Այս գաղափարները բոլորն իրենց ամրագրումն են գտել ՀՀ հիմնական օրենքում: Հայաստանի նորանկախ Հանրապետությունն ունի բոլոր նախադրյալները, որպեսզի ձևավորվի քաղաքացիական հասարակություն:

Նկարագրական մաս

Քաղաքացիական հասարակության մասին գաղափարը ծագել է մարդկային քաղաքակրթության լուսաբացին, երբ մարդիկ փորձում էին պարզել մարդկային հարաբերությունների էությունը, արդարության և անարդարության, ազատության և անազատության հարցերը, բարու և չարի, կարգի և քառուի հարցերը: Աստիճանաբար գիտակցվում էր պետության օգտին իր անհատական ազատության սահմանափակման անհրաժեշտությունը, ձևավորվում էին վարքագծի կանոնները (սովորույթները, տրադիցիան, բարքերը), որոնք ապահովված էին այնժամ միայն տոհմի, ցեղի, ավագների հեղինակության ուժով: Պետության ծագման հետ աստիճանաբար իրադրությունը փոխվեց: Պետությունը դարձավ միջնորդ մարդու և հասարակության միջև և, օգտագործելով իրավունքի դրույթները, իրավունքի ստեղծելը դարձրեց իր գործունեության ուղղություն և այն սկսեց օգտագործել՝ որպես իր նպատակներին հասնելու գործիք: Իրավունքը, փաստորեն, դարձավ պետության զենքը մարդկանց ճնշելու համար, իսկ մարդիկ, ովքեր երագում էին բնական իրավունքի և մարդկային հարաբերությունների մասին, ազատության և արդարության մասին շարունակում էին որոնումները պետության և իրավունքի, հասարակության լավագույն մոդել, տարբերակներ գտնելու և մարդկանց կյանքում ներդնելու համար:

ՀՀ Սահմանադրության հենց 1-ին հոդվածը ամրագրում է, որ մեր պետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Այսինքն՝ հենց առաջին իսկ հոդվածով պաշտպանված է քաղաքացիական հասարակություն ունենալու բոլոր նախադրյալները:

Որպեսզի պետությունը լինի ամուր և ունենա զարգացած քաղաքացիական հասարակություն, նախ՝ առաջին հերթին պետք է պաշտպանված լինեն անհատի իրավունքները, քանի որ անհատը, անձը, քաղաքացին է հասարակության առաջնային բջիջը: Ուստի, մեր Սահմանադրության մեջ ամրագրված է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք են:

Պետությունը ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Այսինքն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից (Սահմ. 2-րդ և 4-րդ հոդվ.):

Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա ազատությունների և իրավունքների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Արժանապատվությունը մարդկային բարձրագույն հատկանիշներից է, որը հավասարագոր է հարգվելու իրավունքի և ուրիշներին հարգելու պարտականության: Մարդու յուրաքանչյուր իրավունքի ոտնահարում առաջին հերթին ուղղված է նրա արժանապատվության նսեմացմանը, և այդ իսկ պատճառով էլ արժանապատվության իրավունքը հանդիսանում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնական աղբյուրը: Անձի արժանապատվության պաշտպանությունը համարվում է պետության կարևորագույն խնդիրներից մեկը: ՀՀ-ում ճանաչվում է մարդու արժանապատվության սկզբունքը, ըստ որի՝ մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված այս նորմը արտացոլում է գտել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, ինչպես նաև Սահմանադրության հիման վրա մեր ազգային օրենսդրության և այլ իրավական ակտերի մեջ:

Քաղաքացիական հասարակության համար կարևոր են նաև սոցիալական հարաբերությունները: Բոլոր ժողովրդավարական երկրներն իրենց հռչակում են նաև որպես սոցիալական, որով ստանձնում են պատասխանատվություն՝ սոցիալական հարաբերությունների իրավական կարգավորման համար ստեղծել հուսալի երաշխիքներ: Սոցիալական հարաբերություններն իրենց մեջ ներառում են մի դեպքում սպասարկման ոլորտի հարցեր, իսկ մյուս դեպքում՝ կրթության, գիտութ-

յան, առողջապահության հետ կապված հարցեր և այլն, որ ՀՀ Սահմանադրությամբ պետությունը հռչակված է որպես սոցիալական պետություն և դրա համար նախատեսված որոշակի հայեցակարգեր՝ հասարակության սոցիալական համակարգը սոցիալական հարաբերությունների ամբողջություն է: Գործնականում այդ հարաբերությունները դիտարկվում են տարբեր հարթություններում: Մի դեպքում այն ներկայացվում է որպես մարդկանց սպասարկման հետ առնչվող որոշակի ոլորտ (կրթություն, առողջապահություն, գիտություն, սպորտ, մշակույթ), մյուս դեպքում դիտվում է որպես հասարակական խումբ կամ շերտ (այդ թվում՝ առանձնացնելով սոցիալական տարբեր խմբերի ու նաև ազգամիջյան հարաբերությունները, ընտանիք-հասարակություն, անհատ-չրջակա միջավայր փոխհարաբերությունները): Երրորդ դեպքում ընկալվում է որպես մարդկային համահավաք հանրություն (միավորված ընդհանուր շահերով, արժեքային համակարգով, կեցության կանոններով, ընդհանուր նպատակներով) սոցիալական հիմնական բնութագրիչներ:

Ընդհանուր առմամբ սոցիալական հարաբերությունները ներառում են մարդկանց համակեցության մի այնպիսի համակարգ, որտեղ առկա են փոխհամաձայնեցված մարդկային հարաբերություններ, որտեղ փոխադարձ պարտավորություն է ստանձնվում օգնել կարիքավորին, ներազդել հասարակական բարիքների վերաբաշխման վրա՝ արդարության սկզբունքներից ելնելով, որպեսզի յուրաքանչյուրի համար արժանապատիվ ապրելու երաշխիքներ ստեղծվեն:

Տեսականորեն քաղաքացիական հասարակության սոցիալական ոլորտը իր մեջ ընդգրկում է օբյեկտիվորեն ստեղծված հանրություն, անդամների միջև փոխհարաբերությունների համակարգ:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրությունը դրույթներ է բովանդակում ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ: Մասնավորապես, ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է:

Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս՝ նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

Ծնողները պարտավոր են և իրավունք ունեն հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք և ներդաշնակ զարգացման և կրթության համար:

Այսպիսով՝ ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության հովանու և պաշտպանության ներքո:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Խտրականությունը, կախված սեռից, դավանանքից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, լեզվից, գեներտիկական հատկանիշներից, ազգային փոքրամասնությունից, տարիքից, արգելվում է:

Հաջորդ ոլորտը, որն իրավական կարգավորման է ենթարկված ՀՀ Սահմանադրության կողմից, տնտեսական ոլորտն է, որն իրենից ներկայացնում է տնտեսական ինստիտուտների և հարաբերությունների համակարգ, որի մեջ մարդիկ մտնում են սեփականության հարաբերություններն իրականացնելու ժամանակ՝ արտադրության բաշխման, փոխանակման և սպառման պրոցեսում:

Քաղաքացիական հասարակության հաստատման, հասարակության անդամների ազատությունները երաշխավորելու գործընթացում հասարակության տնտեսական հարաբերություններն ունեն իրենց առանցքային տեղն ու դերը, որի հիմքը սեփականության ձևն է՝ ներառելով սեփականության տնօրինման, տիրապետման և օգտագործման, ինչպես նաև արտադրության փոխանակման, բաշխման, նյութական և հոգևոր արժեքների սպառման ոլորտները: Տնտեսական հարաբերություններն իրենց օբյեկտիվ բնույթով կախված չեն մարդկանց կամքից և սուբյեկտիվ ցանկություններից, այդ հարաբերությունների հիմքում ընկած են օբյեկտիվ տնտեսական օրենքների պահանջները, որոնց չիմացությունը և անտեսումը միշտ բացասական անդրադարձ է ունենում ցանկացած հասարակության վրա:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը, ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ (Սահմ. հոդվ. 31):

Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

Շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է (Սահմ. հոդվ. 31):

Ժողովրդավարական երկրում կարևոր պայման է հանդիսանում տնտեսական հարաբերությունների զարգացման ապահովումը, քանի որ առանց դրա առաջընթացի հնարավոր չէ ապահովել պետության բնականոն գործունեությունը: Տնտեսական հարաբերությունները հա-

սարակական հարաբերությունների բաղադրիչ մաս են կազմում և նրանց բնականոն գործունեությունը ապահովվում է այլ հասարակական հարաբերությունների հետ փոխհամագործակցության պայմաններում, ինչպիսիք են սոցիալական հարաբերությունները, հոգևոր մշակութային հարաբերությունները և քաղաքական հարաբերությունները:

Քաղաքացիական հասարակության մյուս ոլորտը քաղաքական ոլորտն է, որն իր մեջ ներառում է ընտրելու և ընտրվելու իրավունքը, երթեր, ցույցեր, հանրաքվեներ անցկացնելու իրավունքը, քաղաքական կուսակցություններ, արհմիություններ կազմելու իրավունքը: Սահմանադրության 28, 29, 30-րդ հոդվածները նվիրված են քաղաքական ոլորտին:

Ըստ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:

Մարդուն չի կարելի արգելել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման:

Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք:

Այս ոլորտը կազմող հարաբերությունների մասնակիցներ են հանդիսանում ինքնակառավարվող տարրերը՝ պետությունը, քաղաքական կուսակցությունները և այլն: Այս ոլորտում հարաբերությունների էական շերտը կազմում են հարաբերությունները իշխանության շուրջ և իշխանության նկատմամբ:

Հատուկ տեղ են զբաղեցնում հարաբերությունները քաղաքական կուսակցությունների ու պետության միջև, որոնց գործունեության վերջնական նպատակները պետական իշխանությանը տիրանալն է: Եվ մեր համաքաղաքացիները երբեմն մոռանում են օրենքի գոյության մասին և այնպիսի հնարքների և մեթոդների միջոցով են շրջանցում օրենքները,

որ երբեմն քաղաքացիական հասարակության կայացման և անգամ գո-
յության մասին խոսելն անգամ դառնում է ավելորդ:

Խոսենք հաջորդ կարևորագույն ոլորտներից մեկի մասին, որը տե-
ղեկատվական ոլորտն է. մարդկանց միջև անմիջական և միջնորդա-
վորված շփումները տեղի են ունենում մասսայական ինֆորմացիոն
մարմինների միջոցով:

Սահմանադրության 27-րդ հոդվածը ամրագրում է, որ յուրաքանչ-
յուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում
է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ
տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու
ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով անկախ պե-
տական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատու-
թյունը երաշխավորվում է:

Քաղաքացիական հասարակության կարևորագույն տարրերից մե-
կը հանդիսանում է մամուլի և զանգվածային լրատվության ազատու-
թյունը: Այն մեծապես նպաստում է հասարակության և անհատի տեղե-
կացված լինելուն, որը հասարակության տնտեսական և մշակութային
առաջընթացի խթանման կարևոր պայման է: Հատկապես քաղաքա-
կան կյանքի անցողաբաժին հասարակությունը իրագել է դառնում մա-
մուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների շնորհիվ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամ-
րագրված է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ունեն
մամուլում և զանգվածային լրատվական միջոցներով իրենց տեսակետ-
ները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաև հասարակական
կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավաստի
լրատվություն ստանալու իրավունք: Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ ամրագրվում է մամուլի և զանգվածային լրատվական
միջոցների գործունեության սկզբունքները. դրանք են՝ հավասարու-
թյունը, մարդասիրությունը, տարակարծությունը, հանդուժողականությունը,
հարգանքը, խղճի ազատությունը և համամարդկային մյուս արժեքները,
որոնք օժանդակում են հրապարակայնությանը և ժողովրդավարությա-
նը, մտքի, խոսքի, ինչպես նաև բազմակարծության ազատությունը, մա-
մուլի և զանգվածային լրատվամիջոցների հիմնադրման պայմանները
սահմանվում են պետության կողմից, քանի որ մամուլի ազատության
չարաշահումը կարող է վնաս հասցնել պետությանը և քաղաքացիական
հասարակության կայացմանը:

Հաջորդ ոլորտը հոգևոր-մշակութային ոլորտն է, որը մարդկանց
միջև, նրանց կազմակերպությունների, պետության, հասարակության
միջև հոգևոր-մշակութային բարիքների շուրջ տեղի ունեցող հարաբե-

րություններն են և տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող հոգևոր մշակութային արժեքների, գիտական, կրոնական, գեղարվեստական ու հոգևոր արժեքների, արվեստի ոլորտում ծագող հարաբերությունները:

Կրթությունը հիմքն է ամեն մի հասարակության զարգացման համար: Եթե ունենանք կրթված, բանիմաց, իրավագիտակցական մակարդակով բարձր, ինչու չէ, նաև իրավական կուլտուրայով օժտված հասարակություն, ապա կարող ենք ասել, որ ունենք կայացած քաղաքացիական հասարակություն:

Հոգևոր-մշակութային հարաբերությունն առաջնային է, քանզի ներառում է ինչպես համամարդկային արժեքներ, այնպես էլ ազգային առանձնահատկությունների ներդաշնակման խնդիրը: Կարևոր առանձնահատկություն է նաև այն, որ խոսքը վերաբերում է մարդու ներաշխարհին, նրա ազատ դրսևորմանը, անկաշկանդ ինքնարտահայտմանը:

Մշակութային իրավունքները և ազատությունները սահմանադրական իրավունքների և ազատությունների ամբողջությունն է, որը որոշում է մշակութային և գիտական ոլորտներում մարդու հնարավորությունները: Արդի ժողովրդավարական պետություններում մշակութային իրավունքների շարքին են դասվում կրթության իրավունքը, դասավանդման ազատությունը, ստեղծագործական ազատությունը, մշակութային կյանքին մասնակցելու, ինչպես նաև արժեքներից օգտվելու իրավունքը և այլն: Այսպիսով՝ մշակութային իրավունքներն ու ազատությունները ներառում են ինչպես առանձին սոցիալական իրավունքներ և ազատություններ, այնպես էլ քաղաքացիական իրավունքներն ու ազատություններն առանձին-առանձին:

Յուրաքանչյուր երկրում հոգևոր-մշակութային հարաբերությունների համակարգում առանձնահատուկ տեղ և դեր ունի եկեղեցին: Կրոնը և կրոնական կազմակերպությունները դարեր շարունակ տիրապետող դիրքում են եղել, էական դերակատարություն են ունեցել հասարակական հարաբերությունների կարգավորման գործում:

Այսպիսով՝ ժամանակակից քաղաքացիական հասարակությունը իրավական, ազատական-ժողովրդավարական, բազմակարծային բաց հասարակություն է, որի հիմնական սուբյեկտը ազատ անհատն է, որն իր շահերն իրականացնում է բոլորի համար միասնական օրենքի և ընդհանուր իրավակարգի շրջանակներում: Մարդը՝ որպես քաղաքացիական հասարակության անդամ, տարբեր հասարակական հարաբերությունների՝ տնտեսական, հոգևոր տեղեկատվական և այլնի, լիիրավ ու դրա հետ միասին պատասխանատու (իր պարտականությունները պահպանող և ուրիշների իրավունքները հարգող) մասնակիցն է:

Եզրակացություն

Բոլորիս հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունը նորանկախ պետություն է և իր առաջին քայլերն է կատարում քաղաքացիական հասարակություն ունենալու համար:

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ կարող ենք եզրահանգումներ անել այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը կարող է ունենալ կայացած քաղաքացիական հասարակություն, քանզի մայր օրենքում ամրագրված են բոլոր այն բաղադրիչները, որոնք բազիս են հանդիսանում քաղաքացիական հասարակության համար:

Ավելի լուրջ ուշադրություն պետք է դարձվի քաղաքական ոլորտի վրա, քանի որ հենց այս ոլորտից է խարխվում քաղաքացիական հասարակություն ունենալու, ստեղծելու հիմքերը:

Մեր հանրապետությունում, երբ խոսքը գնում է ընտրելու և ընտրվելու իրավունքի մասին, մոռացվում են թե՛ մայր օրենքը, թե՛ միջազգային պայմանագրերը, և թե՛ մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, թեև այսօր արդեն իսկ քայլեր են ձեռնարկվում դեպի քաղաքացիական հասարակություն տանող լուսավոր ճանապարհը:

Մեր կարծիքով, կգա ժամանակ, որ բոլոր գրված օրենքները չեն մնա միայն թղթի վրա, այսինքն՝ դրանք չեն լինի դե յուրե, այլ կգործեն նաև դե ֆակտո, Հայաստանի Հանրապետությունում կձևավորվի իրավական մշակույթը, և քաղաքացիները կունենան բարձր իրավագիտակցություն: Այսինքն՝ կունենանք լիարժեք և՛ ժողովրդավարական, և՛ իրավական, և՛ սոցիալական պետություն, որտեղ կհարգվեն, կպաշտպանվեն և իրենց կիրառությունը կունենան բոլոր սահմանադրական դրույթները և կունենանք կայացած քաղաքացիական հասարակություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2003
2. Իրավունքի և պետության տեսություն, Վ. Ս. Ներսիսյանց, Երևան, 2001
3. Պետության և իրավունքի տեսություն, Վ. Ն. Խրոսյանյուկ, Երևան, 1997
4. ՀՀ 1995 թ. Սահմանադրություն (փոփոխություններով և առանց փոփոխությունների)

Ներածություն

Իրեն ժողովրդավարական հռչակող յուրաքանչյուր պետություն, որը նպատակ է հետապնդում կառուցել քաղաքացիական հասարակություն, պարտավոր է իր կառուցվածքն ու գործունեությունը համապատասխանեցնել ժողովրդի կամքին, մարդու և քաղաքացու հանրաճանաչ իրավունքներին և ազատություններին: Ժողովրդավարական պետությունը հանդիսանում է մարդու՝ երաշխավորված ազատության վրա կառուցված քաղաքացիական հասարակության կարևորագույն տարրը, և որոշ իմաստով նաև հիմքը:

«Քաղաքացիական հասարակություն» կատեգորիան պատմականորեն արտահայտում է մարդկության զարգացման որոշակի շրջան, որը բնորոշվում է տարբեր մտածողների ձգտումներով՝ ստեղծել մարդկային հասարակության կազմակերպման իդեալական մոդել, որտեղ կտիրեն բանականությունը, ազատությունն ու արդարությունը: Գրեթե միշտ քաղաքացիական հասարակության կայացումը կապվում է պետական իշխանության իրականացման մեխանիզմների կատարելագործման, իրավունքի և օրենքի դերի բարձրացման հետ¹:

Հենց քաղաքացիական հասարակության շրջանակներում է իրականացվում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների մեծ մասը: Ժողովրդավարական պետության խնդիրն է օգնել այդ ինքնակառավարվող համակարգի ներդաշնակ գործունեությանը և հնարավորինս ձեռնպահ մնալ դրան միջամտելուց: Այդ իսկ պատճառով ամեն մի ժողովրդավարական պետություն սահմանադրորեն պետք է ամրագրի հասարակության ինքնակառավարմանը պետական միջամտության օպտիմալ սահմանները, որպեսզի նման միջամտությունը չկարողանա վնաս պատճառել քաղաքացիական հասարակության շրջանակներում գործող ինքնակառավարման ինստիտուտներին և մեխանիզմներին:

Քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին պետությունը միայն ժողովրդավարական հռչակելը դեռևս բավարար չէ: Անհրաժեշտ է նրա կառուցվածքն ու գործունեությունն ապահովել համապատասխան իրավական ինստիտուտներով, իրական ժողովրդավարական երաշխիքներով: Այդպիսի ժողովրդավարական երաշխիքների թվում հատկապես ուշադրության է արժանի *իշխանությունների տա-*

¹ St'u Теория государства и права /под. ред. В. М. Карельского и В. Д. Первалова, М, 1997, էջ 87-88.

րանջատման սկզբունքը, որն իր ամրագրումն է ստացել ժողովրդավարական բազմաթիվ երկրների հիմնական օրենքներում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Իշխանությունների տարանջատումն իրավագիտության մեջ ընդունված է մեկնաբանել տարբեր կերպ: Այն և՛ որոշակի տեսություն է, և՛ պետական-իրավական շինարարության պրակտիկա, և՛ միաժամանակ այն հանդես է գալիս որպես իրավական պետության հատկանիշ և սկզբունք:

Պետք է նշել, որ իշխանությունների տարանջատման տեսությունը միանգամայն չի ենթադրում «չինական պատի» ստեղծում իշխանության տարբեր ճյուղերի միջև: Դա անհնարին է, քանի որ խոսքը գնում է միասնական ինստիտուտի՝ միասնական պետական իշխանության մասին, քանզի պետության մեջ իր էությանը տարբեր իշխանություններ լինել չեն կարող: Պետական ինքնիշխանության կոնցեպցիան դա բացառում է¹:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի իմաստը կայանում է նրանում, որ քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման համար պետական իշխանության առանձին՝ օրենսդիր, գործադիր և դատական ֆունկցիաներն իրականացվում են պետական իշխանության տարբեր մարմինների կողմից, որոնք իրարից անկախ են և փոխադարձաբար զսպում և հակակշռում են միմյանց: Բացի դրանից անհրաժեշտ է, որպեսզի այդ մարմիններն իրենց իրավական կարգավիճակով լինեն հավասարակշռված, մեկը մյուսի նկատմամբ չունենան որևէ գերակայություն, իշխանություններից յուրաքանչյուրի անկախությունը ապահովագրված լինի մյուսի ոտնձգություններից: Այդ նպատակով հիմնական օրենքը նախատեսում է տարատեսակ իրավական կառուցակարգեր և իրավական ինստիտուտներ, որոնց մեջ աչքի է ընկնում *խորհրդարանական վերահսկողության ինստիտուտը*: Սույն աշխատության շրջանակներում կփորձենք վերլուծության ենթարկել ինչպես այդ ինստիտուտի կիրառման պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա դերը ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին:

¹ См. Сравнительное конституционное право /Отв. ред. В. Е. Чиркин, М., 2002, т.2 241.

Նկարագրական մաս

Խորհրդարանական վերահսկողության ինստիտուտի դերը ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին

Խորհրդարանը, հանդիսանալով օրենսդիր իշխանություն իրականացնող բարձրագույն ներկայացուցչական մարմին, լուրջ դերակատարում ունի ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կայացման գործում, քանզի կոչված է ապահովելու համագործակցությունն ու կապը իշխանության միակ կրողի՝ ժողովրդի և նրա ներկայացուցիչների միջև:

Դրա հետ մեկտեղ՝ խորհրդարանի գործունեության մեջ իրենից առանձնակի կարևորություն է ներկայացնում նաև նրա վերահսկողական գործառույթը, առավելապես՝ գործադիր իշխանության մարմինների նկատմամբ, քանզի վերջիններիս է վերապահված խորհրդարանի կողմից ընդունված օրենքների անշեղ կատարումը հանրապետության ողջ տարածքում:

Իրավաբանական գրականության մեջ *«խորհրդարանական վերահսկողություն»* եզրույթը մեկնաբանվում է որպես պետական վերահսկողության տարատեսակ, որը հիմնականում կրում է ընդհանուր քաղաքական, երբեմն էլ՝ վարչական բնույթ: Ընդ որում՝ խորհրդարանական վերահսկողության օբյեկտ, ամենից առաջ, հանդիսանում է գործադիր իշխանության մարմինների գործունեությունը¹:

Խորհրդարանական վերահսկողությունը և դրա իրականացման ձևերի բազմազանությունը մեծապես պայմանավորված է պետական իշխանության մարմինների համակարգում խորհրդարանի զբաղեցրած դիրքով, ինչպես նաև պետության կառավարման ձևով: Այս տեսակետից կարող ենք խոսել խորհրդարանական վերահսկողության երեք մոդելների մասին²:

Առաջին մոդելը կիրառվում է խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում: Այստեղ խորհրդարանական վերահսկողության ինստիտուտի առկայությունն ամենից առաջ ենթադրվում է կառավարության խորհրդարանական պատասխանատվության ինս-

¹ Ст'я Большой юридический словарь/ под. ред. А. Я. Сухарева, В. Д. Зорькина, В. Е. Крутских / М., 1997, էջ 473.

² Ст'я Сравнительное конституционное право/ Отв. ред. В.Е.Чиркин/ М., 2002, էջ 342-343.

տիտուտի կիրառմամբ: Խորհրդարանի կողմից կառավարությանն անվատահոություն հայտնելը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել կառավարության հրաժարականին (բայց հնարավոր է նաև խարհրդարանի արձակումը՝ նոր ընտրությունների պարտադիր նշանակումով):

Երկրորդ մոդելը բնորոշ է նախագահական կառավարման ձև ունեցող պետություններին: Այստեղ հայտնի չէ կառավարության խորհրդարանական պատասխանատվության ինստիտուտը և վերահսկողության մի շարք այլ ձևեր, որոնք կիրառվում են խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում:

Կարող ենք փաստել, որ խորհրդարանական հանրապետություններում կառավարությունն իրավաբանորեն ավելի շատ հնարավորություններ ունի ազդելու խորհրդարանի վրա՝ ընդհուպ մինչև վերջինիս արձակումը, այն դեպքում, երբ նախագահական հանրապետություններում (խոսքը, իհարկե, գնում է ժողովրդավարական պետությունների մասին) նախագահը չի կարող ո՛չ արձակել խորհրդարանը, ո՛չ էլ որոշակի ազդեցություն ունենալ խորհրդարանի անդամների վրա՝ նիստերի ժամանակ:

Հետևաբար, նախագահական հանրապետություններում առկա իշխանությունների տարանջատման և զսպումների ու հակակշիռների համակարգը (ժողովրդավարական ռեժիմի պայմաններում) օրենսդիր իշխանությանը տալիս է իրական հնարավորություններ վերահսկելու գործադիր իշխանության մարմինների գործունեությունը: Մեծ նշանակություն են ձեռք բերում, մասնավորապես, վերահսկողության այնպիսի ձևեր, ինչպիսիք են *խորհրդարանական հատուկ հանձնաժողովների հետաքննական գործունեությունը*, ինչպես նաև *կառավարության դեկլարի նկատմամբ կիրառվող ինպիչմենտը*:

Երրորդ մոդել կարելի է համարել կառավարման խառը ձև ունեցող պետություններում խորհրդարանի, պետության գլխի և կառավարության միջև ձևավորված փոխհարաբերությունների համակարգը: Այսպիսի կառավարման ձև ունեցող երկրներում կիրառվում են կառավարության խորհրդարանական պատասխանատվության և խորհրդարանի արձակման ինստիտուտները, ինչպես նաև կարող են կազմակերպվել խորհրդարանական լսումներ և անցկացվել հետաքննություններ¹:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ նշում չի պարունակում կառավարման հանրապետական ձևի որևէ տարատեսակության մասին: Մակայն, վերլուծելով պետության գլխի, օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը և նրանց միջև փոխհարաբերությունները կարգավորող նոր-

¹ St'u Конституционное право зарубежных стран/ под. ред. М. В. Баглая /, М., 2005, էջ 252.

մերի բովանդակությունը՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունը կառավարման խառը ձև ունեցող պետություն է, և այստեղ կիրառվում է խորհրդարանական վերահսկողության ինստիտուտի՝ *խառը կառավարման ձև ունեցող պետություններին բնորոշ մոդելը*:

ՀՀ Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունն իրականացվում է՝

ա) ՀՀ կառավարության ծրագրի և ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկման կապակցությամբ,

բ) ՀՀ կառավարության ընթացիկ գործունեության վերաբերյալ,

գ) ՀՀ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման առնչությամբ:

Ա) ՀՀ կառավարության նկատմամբ Ազգային ժողովի վերահսկողական գործունեության կարևոր ոլորտներից է կառավարության ծրագրի՝ հանրապետության խորհրդարանի հավանությանն արժանանալու հիմնախնդիրը:

ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունն իր կազմավորումից հետո քսանօրյա ժամկետում Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը: Կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից հավանություն տալու հարցը քննարկվում է արտահերթ և քվեարկության դրվում այն ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ¹:

Կառավարության ծրագիրն իրենից ներկայացնում է իրականացվելիք միջոցառումների համակարգ, դրանք կյանքի կոչելու ժամանակացույց, որտեղ մաս նշվում են այդ միջոցառումների իրականացման համար պատասխանատու անձինք և դրանց ֆինանսավորման աղբյուրները: Կառավարության ծրագրում է արտացոլվում նրա որդեգրած սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային, ժողովրդավարական և իրավական քաղաքականությունը: Կառավարության ծրագրի քննարկումը Ազգային ժողովում կարող է ունենալ երկու տարբեր հետևանքներ: Առաջին՝ Ազգային ժողովը, քննության առնելով ծրագիրը՝ հավանության է արժանացնում այն, ինչը «կանաչ լույս» է հանդիսանում կառավարության գործունեությունը սկսելու համար: Երկրորդ, հնարավոր է հակառակ իրավիճակը: Խորհրդարանը իր նիստում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին, ինչի արդյունքում ՀՀ վարչապետի կողմից հրաժարականի դիմում է ներկայացվում Հայաստանի Հանրապետության նախագահին: Իսկ համաձայն 09.11.1998 թ. ընդունված

¹ Տե՛ս ՀՀ ՊՏ 05.12.05 / Հատուկ Թողարկում.

«ՀՀ կառավարության կազմավորման և հրաժարականի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ վարչապետի հրաժարականը հանգեցնում է ամբողջ կառավարության հրաժարականին¹:

Վարչապետի կողմից ներկայացված հրաժարականի դիմումի ընդունումից հետո կառավարության անդամները դառնում են իրենց պաշտոնների ժամանակավոր պաշտոնակատարներ և շարունակում են պաշտոնավարել այնքան ժամանակ, մինչև կատարվեն նոր նշանակումներ կամ ձևավորվի նոր կառավարություն: Իսկ կառավարության հրաժարականի ընդունումից հետո հանրապետության նախագահը, համաձայն ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետի, վարչապետ է նշանակում տասնօրյա ժամկետում, իսկ կառավարությունը կազմավորվում է վարչապետի նշանակումից հետո՝ քսանօրյա ժամկետում:

Մեր կարծիքով, ՀՀ Ազգային ժողովին տրված այս հնարավորությունը լուրջ իրավական երաշխիք է հանդիսանում կառավարության գործունեությունն իր տեսադաշտում պահելու համար: Սակայն, սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության մեջ Ազգային ժողովի տվյալ լիազորության համար նախատեսվեց նոր իրական հակակշիռ:

Մասնավորապես, համաձայն ՀՀ Սահմանադրության նոր՝ հոդված 74.1-ի 1-ին մասի՝ հանրապետության նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե վերջինս երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ՀՀ Սահմանադրության մեջ այսպիսի կատեգորիկ պահանջով նորմի նախատեսումը կառավարության ծրագրի հաստատման հարցում այլընտրանքի հնարավորություն չի ընձեռում Ազգային ժողովին, քանզի գիտակցելով այն հանգամանքը, որ երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չտալով կառավարության ծրագրին, այն կարձակվի և կնշանակվեն արտահերթ խորհրդարանական ընտրություններ, օրենսդիրը ստիպված հաստատում է կառավարության կողմից ներկայացվող՝ իր համար անընդունելի ծրագիրը, ինչի արդյունքում ձևավորվում է հանրապետության նախագահի «վստահությունը» վայելող կառավարություն:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածը, ամրագրելով «ծրագիր» եզրույթը, չի պատասխանում այն հարցին, թե այն «տարեկա^օն» է, «հնգամյա^օ» թե՞ «հեռանկարային»: Այս հարցին պատասխան չտրվեց նաև սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրվեց կառավարության կազմավորման պառլամենտական եղանա-

¹ Տե՛ս ՀՀ ՊՏ1998/30 (63), 30.11.98.

կը, ինչպես նաև սահմանվեց, որ Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով, կարծում ենք՝ ճիշտ կլիներ սահմանադրորեն ամրագրել, որ կառավարությունն Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում իր «հնգամյա ծրագիրը», քանի որ ձևավորվելով Ազգային ժողովի լիազորությունների ժամկետով, նա պատասխանատվություն է ստանձնում ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների կատարման համար՝ հենց այդ հնգամյա ժամկետի ընթացքում: Կառավարության հրաժարականի ընդունումից հետո ձևավորվում է նոր կառավարություն, որն իրեն վերապահված լիազորությունները իրականացնում է՝ որդեգրելով նոր գաղափարներ և մոտեցումներ: Հետևաբար, ձևավորված յուրաքանչյուր կառավարություն պարտավոր է պատասխանատվություն կրել իրեն վերապահված լիազորությունների կատարման համար՝ միմիայն իր լիազորությունների ժամկետում:

ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության կարևորագույն բնագավառ է հանդիսանում նաև ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումն ու հաստատումը: Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը: Այն Ազգային ժողովում քննարկվում և հաստատվում է վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ: Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, մինչև Ազգային ժողովում քննարկելը, նախապես քննարկվում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստերում՝ համաձայն նախապես կազմված ժամանակացույցի: Այդ նիստերին մասնակցում են վարչապետը և կառավարության անդամները, որոնք հանդես են գալիս զեկուցումներով և ելույթներով՝ լրացնելով ներկայացված փաստաթուղթը: Պատգամավորները հնարավորություն են ստանում վերլուծելով առկա իրավիճակը, ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները, ժողովրդի սոցիալական վիճակը և բնակչության կենսամակարդակի զարգացման միտումները՝ հանգել համապատասխան եզրակացության կառավարության տվյալ տարվա գործունեության վերաբերյալ:

Եթե ներկայացված ցուցանիշներն անբավարար են դրական տեղաշարժեր արձանագրելու համար, ապա պատգամավորների մեկ երրորդի կողմից կարող է ներկայացվել կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ:

Անհրաժեշտ է նշել, որ, բացի կառավարությունից, պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ ֆինանսատնտեսա-

կան վերահսկողություն իրականացնող իր կազմակերպչական օղակի՝ վերահսկիչ պալատի միջոցով¹:

Դրանից բացի՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի նպատակային օգտագործման նկատմամբ:

Հարկ է նշել, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության նոր՝ հողված 83.4-ում նախատեսվեց, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ:

Ժամանակակից ժողովրդավարական շատ երկրներում նույնպես գործում են նմանատիպ մասնագիտացված վերահսկողական մարմիններ: Օրինակ՝ ՌԴ-ում ֆեդերալ բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար Ֆեդերացիայի խորհրդի և Պետական դումայի կողմից կազմավորվում է ՌԴ Հաշվիչ պալատը: Լեհաստանում գործում են վերահսկողության մասնագիտացված այնպիսի մարմիններ, ինչպիսիք են վերահսկողության գերագույն պալատը, քաղաքացիների իրավունքների հարցերով լիազորը, անձնական տվյալների պահպանման գերագույն տեսուչը, որոնց նշանակում է Սեյմը:

Բացի դրանից՝ վերահսկիչ պալատն Ազգային ժողովի կողմից հաստատված ծրագրի շրջանակներում ուսումնասիրություններ է իրականացնում պետական կառավարման տարբեր բնագավառներում՝ արդյունքների մասին տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ հաշվետվություններ կայացնելով Ազգային ժողովին:

Մեր կարծիքով՝ Վերահսկիչ պալատի իրավական կարգավիճակի հստակեցման համար անհրաժեշտ է կատարել որոշակի օրենսդրական բարեփոխումներ: Նախևառաջ՝ պետք է հստակեցնել վերահսկիչ պալատի տեղը ֆինանսատնտեսական վերահսկողություն իրականացնող մարմինների համակարգում, քանզի գաղտնիք չէ, որ այսօր Հայաստանի Հանրապետությունում գործում է ֆինանսատնտեսական վերահսկողության բավականին խճճված և բարդ համակարգ, և շատ հաճախ մեկ ոլորտում ստուգում անցկացնելու համար վերահսկիչ պալատը ստիպված է լինում «հերթ կանգնել»՝ մինչև կավարտվի տվյալ ոլորտում անցկացվող նախորդ ստուգումը: Այս անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել վերահսկիչ պալատի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական վերահսկողության ձևերը, քանզի «ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վերա-

¹ Տե՛ս «ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ԱԺՏ 1996/12.

հսկիչ պալատը ֆինանսատնտեսական վերահսկողությունն իրականացնում է ուսումնասիրությունների և օրենքով սահմանված այլ ձևերով: Իսկ թե ի՞նչ ձևերի մասին է գնում խոսքը, օրենքը չի պարզաբանում: Անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել նաև անցկացված վերահսկողական աշխատանքների արդյունքների քննարկման կառուցակարգերը և համապատասխան ոլորտում անցկացված ստուգման ընթացքում հայտնաբերված իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցները, ինչի մասին «ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը լռում է:

Մեր կարծիքով՝ միայն այս օրենսդրական բացերի վերացումից հետո այն կհամարվի իսկապես անկախ սահմանադրական մարմին և արդյունավետորեն կիրականացվի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունները:

Բ) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից իրականացվող վերահսկողությունն առանձնակի կարևորվում է ՀՀ կառավարության ընթացիկ գործունեության նկատմամբ: Այդ խնդրի լուծման գործում մեծ դեր ունեն հատկապես Ազգային ժողովում ստեղծվող տարատեսակ ժամանակավոր հանձնաժողովները: Մասնավորապես, համաձայն ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասի, Ազգային ժողովում անհրաժեշտության դեպքում ստեղծվում են ժամանակավոր հանձնաժողովներ՝ առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար: Այդ հանձնաժողովները, որպես կանոն, ձևավորվում են Ազգային ժողովում ներկայացված պատգամավորական խմբակցությունների և խմբերի անդամներից: Ժամանակավոր հանձնաժողովների կազմում պայմանագրային հիմունքներով կարող են ընդգրկվել նաև համապատասխան բնագավառների մասնագետներ (փորձագետներ)՝ հանձնաժողովի գործունեության ժամկետով: Նրանց կազմն ու թվաքանակը հաստատում է Ազգային ժողովի նախագահը՝ համապատասխան հանձնաժողովի ներկայացմամբ, եթե այլ բան նախատեսված չէ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին Ազգային ժողովի որոշմամբ:

Ազգային ժողովը, ստեղծելով ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում է դրանց խնդիրները, գործունեության ժամկետները և կարգը՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում¹:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական իրավունք, պատ.խմբ Ն.Ա. Այվազյան , ԵՊՀ հրատ.,Երևան, 2005, էջ 475.

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակավոր հանձնաժողովներն Ազգային ժողովում հիմնականում ստեղծվել են օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների և մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետության, «Հայխնայբանկում» Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ավանդադրված խնայողական ավանդների վերականգնման և փոխհատուցման հնարավորությունների ուսումնասիրման, եվրոպական կառույցներին ՀՀ ինտեգրման, ինչպես նաև հասարակության և պետության անվտանգության համար առանձնակի կարևորություն ներկայացնող այլ հարցերի ուսումնասիրման կապակցությամբ:

Պատգամավորները, ընդգրկվելով ժամանակավոր հանձնաժողովների մեջ, հնարավորություն են ստանում անհրաժեշտության դեպքում պահանջել տարբեր տեղեկանքներ, փաստաթղթեր, ուսումնասիրվող բնագավառի առնչությամբ տարբեր վիճակագրական տվյալներ, գրուցել տարբեր պետական պաշտոնյաների հետ, քննարկել ոլորտային օրենսդրության կիրառման պրակտիկան՝ հանձնաժողովի կողմից ուսումնասիրվող հիմնահարցին առավել մանրամասն ծանոթանալու համար:

Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը պարտավոր է զեկուցել Ազգային ժողովի նիստում՝ նրա կողմից սահմանված ժամկետում:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ժամանակավոր հանձնաժողովի ներկայացրած եզրակացության, տեղեկանքի հիման վրա պատգամավորը կարող է ԱԺ նիստում ժամանակավոր հանձնաժողովի՝ իր գործունեության մասին զեկուցումից հետո՝ 2 օրյա ժամկետում, օրենքով սահմանված կարգով ներկայացնել Ազգային ժողովի որոշման նախագիծ¹:

2003 թ. ՀՀ Ազգային ժողովում ստեղծվեց «Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների և մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող» ժամանակավոր հանձնաժողով: Հանձնաժողովը իր ներկայացրած զեկույցների մեջ, հիմնվելով իրենց փորձագետների կատարած ուսումնասիրությունների և եզրահանգումների վրա, Ազգային ժողովին էր ներկայացրել մի շարք սկզբունքային մոտեցումներ և կարծիքներ՝ ուսումնասիրված բնագավառի վերաբերյալ: Արդյունքում հստակեցվել էին դիր-

¹ Տե՛ս «Ազգային ժողովի Կանոնակարգ» ՀՀ օրենք, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2002, էջ 20.

քորոշումները, պարզաբանվել վիճահարույց խնդիրները և, որ ամենակարևորն է, արձանագրվել են ոլորտում գրանցված նկատելի տեղաշարժերը և այն բացթողումներն ու թերությունները, որոնք առկա են ուսումնասիրված բնագավառում:

Հանձնաժողովի միջանկյալ զեկույցներում արձանագրված մի շարք թերություններ (ՀԶԾՂԳ-ի գրանցման և վերագրանցման հետ կապված, ծրագրի ենթավարկային պայմանագրով գրավի պայմանագրի բացակայություն, վարկային համաձայնագրով ձեռք բերված, ինչպես նաև կատարված շինարարական աշխատանքների արդյունքում ձևավորված ակտիվները ՀԶԾՂԳ-ից ԵԶԿՓԲԸ-ին փոխանցման ակտի բացակայություն և այլն)¹ շտկվել և կարգավորվել էին, ինչին, անխոս, նպաստել էր հանձնաժողովի գործունեությունը²: Սակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է խոստովանել, որ համապատասխան բնագավառում ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ եկած թերությունների վերացմանը անկասկած ավելի կնպաստեր համապատասխան ժամանակավոր հանձնաժողովին ուսումնասիրված բնագավառի վերաբերյալ Ազգային ժողովի որոշման կամ օրենքի նախագիծ ներկայացնելու իրավունքի վերապահումը:

Մասնավորապես, անհասկանալի է օրենսդրի տրամաբանությունն այն հարցում, թե ինչու՞ ժամանակավոր հանձնաժողովները, որոնք ամիսներ շարունակ իրականացնելով ուսումնասիրություններ և վերլուծություններ իրենց կողմից ուսումնասիրվող հարցի կապակցությամբ, իրավունք չեն ստանում ներկայացնել Ազգային ժողովի որոշման կամ օրենքի նախագիծ իրենց կողմից ուսումնասիրված հիմնահարցերի կապակցությամբ:

Անկասկած, այդպիսի իրավունքի վերապահումը ժամանակավոր հանձնաժողովներին կհանդիսանա ամիսներ շարունակ կատարված աշխատանքի արդյունավետ և տրամաբանական ամփոփումը, քանզի Ազգային ժողովի նիստում միայն եզրակացություն լսելը և այն ի գի-

¹ ՀԶԾՂԳ-Համայնքային Ջարգացման Ծրագրի ղեկավարման գրասենյակ, ԵԶԿՓԲԸ-«Երևանի Ջրնուղ Կոյուղի» Փակ Բաժնետիրական ընկերություն.

² Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս ԱԺ-ին հանձնաժողովի ներկայացրած զեկույցներն ու տեղեկանքները: [http://www.parliament.am/ committee docs/CGHA_Commission_interim_report_1, 2, 3](http://www.parliament.am/committee/docs/CGHA_Commission_interim_report_1, 2, 3): Իսկ 2006 թ. հունիս ամսին ԱԺ «Ազգային միաբանություն» խմբակցությունը հանդես եկավ ԱԺ արտահերթ նիստ իրավիրելու նախաձեռնությամբ, որտեղ նախատեսվում էր ստեղծել «2005-2006 թթ. դրամի չհիմնավորված արժուրճան հետևանքով տեղական արտադրողներին և բնակչությանը պատճառված վնասներն ուսումնասիրող» ժամանակավոր հանձնաժողով: Սակայն չհավաքելով անհրաժեշտ 44 ձայն ներկայացված որոշման նախագիծը հավանության չարժանացավ:

տությամբ ընդունելը էական ազդում է (բացասական առումով) խորհրդարանական վերահսկողության այս ձևի արդյունավետության վրա:

Հանդիսանալով իրենց ընտրողների ներկայացուցիչները՝ պատգամավորները հանդիպումներ են ունենում նրանց հետ և լսում նրանց կարծիքներն, առաջարկությունները և գանգատներն՝ ինչպես իրենց ընտրատարածքի սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ հիմնախնդիրների կապակցությամբ, այնպես էլ ողջ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի մասին: Պատգամավորների կողմից իրենց ընտրատարածքի բնակչության շրջանում իրականացվող գործունեության արդյունավետությունն ապահովելու համար ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածը պատգամավորներին իրավունք է վերապահում հարցերով դիմել կառավարությանը, ինչի համար հատկացվում են նիստերի հատուկ օրեր և ժամեր: Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 105-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա վերջին նիստում՝ վարչապետը և կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների հարցերին:

Չնայած պատգամավորների և կառավարության հարց ու պատասխանի ինստիտուտի՝ որպես Ազգային ժողովի կողմից կառավարության ընթացիկ գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության ձևի ոչ այնքան արդյունավետությանը, այնուամենայնիվ այն լայն կիրառություն ունի և ձեռք է բերել որոշակի հասարակական հնչեղություն: Եթե Ազգային ժողովին հաջողվի խուսափել այս ինստիտուտի ձևականացումից (ինչն արդեն իսկ նկատելի է որոշ պատգամավորների տրված մտացածին հարցերից և կառավարության որոշ անդամների կողմից երբեմն տրված արհամարհական և վիրավորական պատասխաններից), ապա էականորեն կապահովվի խորհրդարանական վերահսկողության այս ձևի արդյունավետությունը¹: Օրինակ՝ 2006 թ. հունիսի 13-ին ՀՀ կառավարության և Ազգային ժողովի հարց ու պատասխանի ժամանակ պատգամավորները մտահոգված էին այն փաստից, որ նախօրեին ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը վիրավորել էր օրենսդիրների արժանապատվությունը: Պարզաբանենք, որ հունիսի 12-ին Հայաստանի գլխավոր դրամատան ղեկավարը խորհրդարանում ներկայացրել է իր ղեկավարած գերատեսչության 2005 թ. տարեկան հաշվետվությունը: Այնուհետև հարցերով պատգամավորները դիմել են Տ. Սարգսյանին, ընդ որում, հարցերի գերակշիռ մասն առնչվել է դոլարի արժեզրկմանը: Պատգամավորներից մեկն էլ նույնիսկ հետաքրքրվել է, թե որքա՞ն է ԿԸ հավաքարարների աշխատավարձը՝ կասկած հայտնելով, որ այն

¹ Տե՛ս Ն. Ա. Այվազյան, Նշված աշխ., էջ 487-488.

գուցե ավելի է պատգամավորների աշխատավարձից: Ս. Սարգսյանը, սակայն հանգստացրել է, ասելով, թե՛ ԿԲ հավաքարարի աշխատավարձը շատ ավելի ցածր է, քան պատգամավորինը, իսկ եթե վերջիններս ցանկություն ունեն, ապա կարող են գնալ և ԿԲ-ում ընդունվել աշխատանքի՝ որպես հավաքարար¹:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածն, ամրագրելով խորհրդարանական վերահսկողության այս ձևին վերաբերող դրույթները, չի ապահովում Ազգային ժողովի նիստում պատգամավորների կողմից բարձրացված հիմնախնդիրների լուծումներն ապահովող կառուցակարգերը: Մասնավորապես, վերոնշյալ հոդվածն ամրագրում է, որ պատգամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում: Մեր կարծիքով, տվյալ իրավիճակից դուրս գալու միակ ելքը կդառնա այն, որ սահմանադրորեն ամրագրվի, որ իրենց ներկայացրած հարցերի առնչությամբ պատգամավորները կարող են ներկայացնել օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծ, քանզի պատգամավորների կողմից ԱԺ նիստում հարցերը հնչեցնելը և կառավարության անդամների կողմից դրանց ձևականորեն պատասխանելը չեն կարող լուծում տալ հասարակության մեջ առկա բազմաբնույթ հիմնախնդիրներին:

Սակայն սահմանադրական բարեփոխումների արդյունքում Ազգային ժողովի խմբակցություններին և խմբերին սահմանադրորեն իրավունք վերապահվեց հարցապնդումներով դիմել կառավարությանը: Մասնավորապես, ՀՀ բարեփոխված Սահմանադրության 80-րդ հոդվածն ամրագրում է, որ խմբակցությունները և խմբերը իրավունք ունեն հարցապնդումներով դիմել կառավարությանը: Հարցապնդումները ներկայացվում են գրավոր և քննարկումից առնվազն տասն օր առաջ: Հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում է ԱԺ կանոնակարգ օրենքով:

Մեր կարծիքով՝ այս նորմի նախատեսումը ՀՀ Սահմանադրության մեջ էականորեն կնպաստի կառավարության ընթացիկ գործունեության նկատմամբ իրականացվող խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև հիմք կհանդիսանա օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հավասարակշռված փոխհարաբերությունների հաստատման համար:

Կառավարության ընթացիկ գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության բնագավառում կարևորվում է նաև Ազգային ժողովի իրավունքը՝ անվստահություն հայտնել կառավարությանը: Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախա-

¹ <http://www.panorama.am/uploads/6257/a.asp>

գիծը կարող է ներկայացվել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից՝ վստահության հարցը դնելուց հետո քսանչորս ժամվա ընթացքում: Այս գործընթացը մանրամասնորեն կարգավորված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով: Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Ազգային ժողովը կարող է անվստահություն հայտնել կառավարությանը՝ ա) երբ չի հաստատվում կառավարության ծրագիրը (հոդվ. 74) բ) երբ կառավարությունը իր կողմից ներկայացվող օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ դրել է իր վստահության հարցը և նախագիծը չի ընդունվել (հոդվ. 75) գ) եթե չի հաստատում կառավարության կողմից ներկայացված ՀՀ պետական բյուջեի նախագիծը, որի կապակցությամբ նա դրել է իր վստահության հարցը (հոդվ. 90):

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը նախատեսում է մեկ այլ դեպք ևս, երբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը: Մասնավորապես, վերոնշյալ օրենքի 89-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին առաջարկությունը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության հաստատման առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը:

Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Բացի վերոնշյալ դեպքերից, ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է նաև, որ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է անվստահություն հայտնել կառավարությանը: Այստեղից ակնհայտ է, որ ստանձնած պարտավորությունների չկատարման, ինչպես նաև քաղաքական ասպարեզում տեղի ունեցող փոփոխությունների առնչությամբ Ազգային ժողովի պատգամավորները և հանրապետության նախագահը իրավունք են ստանում ներկայացնել կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ¹:

Սակայն այս հարցում վերոնշյալ սուբյեկտների համար գործում է սահմանադրական սահմանափակում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 84-րդ հոդվածն ամրագրում է, որ այդ իրավունքից նրանք չեն կարող օգտվել ռազմական և արտակարգ դրության ժամանակ: Այս անվստահություն հայտնելու գործառույթը արդյունավետ միջոց է հան-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 84-րդ հոդվածը.

դիսանում խորհրդարանի ձեռքում կառավարության ընթացիկ գործունեության արդյունավետության ապահովման համար:

Գ) Խորհրդարանական վերահսկողության ինստիտուտը կիրառվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակվող և իրականացվող արտաքին քաղաքականության բնագավառում:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ «հանրապետության նախագահը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը»: Գրա հետ մեկտեղ, Սահմանադրությունը կառավարությանը իրավունք է վերապահում մշակել և իրականացնել երկրի ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականության հիմնախնդիրները կառավարությունը մշակում և իրականացնում է հանրապետության նախագահի հետ համատեղ (85 հոդվ.), որի իրականացման ապահովումը նույնպես վերապահված է կառավարության իրավասությանը (հոդվ. 89, 6-րդ կետ):

Իր իրավասության սահմաններում ՀՀ կառավարությունն ապահովում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների իրականացումը, ինչպես նաև հանրապետության ներկայացուցչությունն օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում: Կառավարությունը սահմանում է բանակցություններ վարելու և միջազգային միջգերատեսչական պայմանագրեր կնքելու կարգը, ՀՀ կառավարության անունից բանակցություններ վարելու և միջազգային պայմանագրերի ստորագրման համար տալիս է հատուկ լիազորագրեր, ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության՝ միջազգային պայմանագրերից (համաձայնագրերից) բխող պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ: ՀՀ Սահմանադրության մեկ այլ՝ 6-րդ հոդվածն ամրագրում է, որ «Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են»:

Վերլուծելով սահմանադրական այս նորմը՝ կարելի է եզրակացնել, որ այն Ազգային ժողովին հնարավորություն է ընձեռում անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել հանրապետության արտա-

քին քաղաքականության նկատմամբ, քանզի, ինչպես նկատեցինք վերոշարադրյալից, առավել կարևոր միջազգային պայմանագրերը մեր երկրում կիրառվում են միայն վավերացումից հետո, իսկ դրանք վավերացվում են միայն Ազգային ժողովի կողմից:

Հետևաբար, կարող ենք փաստել, որ հանրապետության Նախագահից և կառավարությունից բացի, Ազգային ժողովը նույնպես կարող է իր որոշիչ խոսքն ասել հանրապետության արտաքին քաղաքականության մշակման և իրականացման բնագավառում:

Եզրափակիչ մաս

Այսպիսով՝ ընդհանրացնելով խորհրդարանական վերահսկողության ինստիտուտի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ այն հանդիսանում է ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կառուցման համար անհրաժեշտ նախապայմաններից մեկը, քանի որ այն անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում իշխանությունների տարանջատման սկզբունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար, և դրա կայացումը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես ցույց տվեցին կատարված դիտարկումները, առնչվում է դրա ոլորտների հստակեցման, նոր կառուցակարգերի մշակման և կյանքի կոչման, ինչպես նաև վերահսկողության իրականացման կառուցակարգերի շտկման և հստակեցման հետ կապված մի շարք հիմնախնդիրների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն առանց փոփոխությունների (ընդունված 05.07.1995թ.)
2. ՀՀ Սահմանադրություն փոփոխություններով (ընդունված 27.11.2005թ.)
3. ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքը (ընդունված 20.02.2002թ.)
4. ՀՀ օրենքը «ՀՀ Կառավարության կազմավորման և հրաժարականի մասին» (ընդունված 09.11.98թ.)

2. Մասնագիտական գրականություն

1. ՀՀ Սահմանադրական իրավունք, պատ. խմբ. իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն. Ա. Ալիազյան, ԵՊՀ իրավ., Երևան, 2005
2. Большой юридический словарь/ под. ред. А. Я. Сухарева, В. Д. Зорькина, В. Е. Крутских. М., 1997
3. И.Е. Лапина. Конституционное право зарубежных стран., М., Проспект, 2004
4. Конституционное право зарубежных стран/под. ред. М. В. Баглая/, М., 1999
5. Конституционное (государственное) право зарубежных стран/ под. ред. Б. А. Страшуна. М., 1996
6. Сравнительное конституционное право/ Отв. ред. В. Е. Чиркин /, М., 2002
7. Теория государства и права/ под. ред. В. М. Карельского и В. Д. Перевалова, М, 1997

3. Նյութեր ինտերնետից

1. <http://www.armtown.com/news/am/arv/20060615/2006061505/>
2. http://www.parliament.am/committee_docs/CGHA_Commission_interim_report_1, 2, 3:
3. <http://www.panorama.am/uploads/6257/a.asp>

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԻՆ»**

© «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

© «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԿԵՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՁԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ »
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ստորագրված է տպագրության՝ 21.11. 2006: Չափսը՝ 60 x 84
1/32: Թուղթը՝ օֆսեթ № 1: Տառատեսակը՝ « Arial Armenian»:
Տպագրությունը՝ օֆսեթ: 5,5 տպ. մամուլ:

*ք. Երևան, Նալբանդյան 7, բն.2
հեռ. 54-01-99, ֆաքս՝ 58-02-99
էլ.փոստ ayla@ayla.am*

«Գևորգ - Հրայր» ՍՊԸ



հրատարակչությունում

*Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
էլ. փոստ lusakn@rambler.ru*

**«Հայաստանի Հանրապետության Մասնաճյուղերը
քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին»
բեմադրվող իրավաբան ուսանողների և երիտասարդ իրավաբանների
հանրապետական երկրորդ գիտաժողով**

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» (ՀԵԻԱ) հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և երիտասարդ իրավաբանների կողմից: Այն ՀՀ Արդարադատության նախարարությունում որպես հասարակական կազմակերպություն գրանցվել է 1995թ.-ի մարտի 14-ին: 1997թ.-ի մայիսի 23-ին, 1999թ.-ի դեկտեմբերի 14-ին և 2002թ.-ի դեկտեմբերի 27-ին վերագրանցվել է: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի հիմնական նպատակն է զարգացնել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը՝ որպես իրավական և ժողովրդավարական պետություն: Իր կանոնադրական նպատակների կատարման համար Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրականացնում է բազմազան ծրագրեր, այդ թվում՝ ուղղված բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ու իրավաբան ուսանողների և երիտասարդ իրավաբանների գիտելիքների ու հմտությունների զարգացմանը:

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը հանդիսանում է իրավաբան ուսանողների և երիտասարդ իրավաբանների համար կազմակերպվող մի շարք գիտաժողովների համակազմակերպիչ:

Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն

Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնը գործում է 2002թ.-ից: Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են ՀՀ սեկտորի մասնակցության խթանումը քաղաքացիական հասարակության կայացմանը և տարածաշրջանային ու եվրոպական ինտեգրացիան: Իր գործունեության ընթացքում կենտրոնը կազմակերպել է 70-ից ավելի սեմինարներ ու կլոր սեղան-քննարկումներ, տպագրել է գրքույկներ: Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնը համագործակցել է ԱՄՆ դեսպանատան և Հայաստանի համահայկական հիմնադրամի հետ:

Կենտրոնի կողմից ներկայումս իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնց հիմնական նպատակներից է հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումը, քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստելը, երիտասարդական մասնակցության խթանումը:

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին թեմայով իրավաբան ուսանողների և երիտասարդ իրավաբանների հանրապետական երկրորդ գիտաժողով

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա հասարակական կազմակերպություն



«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ) հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և երիտասարդ իրավաբանների կողմից: Այն ՀՀ Արդարադատության նախարարությունում որպես հասարակական կազմակերպություն գրանցվել է 1995թ.-ի մարտի 14-ին: 1997թ.-ի մայիսի 23-ին, 1999թ.-ի դեկտեմբերի 14-ին և 2002թ.-ի դեկտեմբերի 27-ին վերագրանցվել է: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի հիմնական նպատակն է զարգացնել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը որպես իրավական և ժողովրդավարական պետություն: Իր կանոնադրական նպատակների կատարման համար Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրականացնում է բազմազան ծրագրեր, այդ թվում՝ ուղղված բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ու իրավաբան ուսանողների և երիտասարդ իրավաբանների գիտելիքների ու հմտությունների զարգացմանը:

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա հասարակական կազմակերպությունը հանդիսանում է իրավաբան ուսանողների և երիտասարդ իրավաբանների համար կազմակերպվող մի շարք գիտաժողովների համակազմակերպիչ:

«Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն հասարակական կազմակերպություն



Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնը գործում է 2002թ.-ից: Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են ՀԿ սեկտորի մասնակցության խթանումը քաղաքացիական հասարակության կայացմանը և տարածաշրջանային ու եվրոպական ինտեգրացիան: Իր գործունեության ընթացքում կենտրոնը կազմակերպել է 70-ից ավելի սեմինարներ ու կլոր սեղան-քննարկումներ, տպագրել է գրքույկներ: Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնը համագործակցել է ԱՄՆ դեսպանատան և Հայաստան համահայկական հիմնադրամի հետ: Կենտրոնի կողմից ներկայումս իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնց հիմնական նպատակներից է հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումը, քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստելը, երիտասարդական մասնակցության խթանումը: